

ԱՐԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ  
ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 8

9(47. 900)  
ԿԷ-31

ԱՌԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ

ԳԱՆԱ ԱճԵԼԵԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՅՈՒՑՈՒՄ  
ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ՓՐՈՔ. ԵՐԿՐԱՆԱԿ  
ՀԱՆԻ ԽԱՆԵՆԻՔԻ ՏՆՈՒՄ, ԵՐԿՐԱՆԱԿ  
ՀԱՆԻ ԿՆՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԴԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՆԵՐԻ  
ԻՆՏԵՆՍԻՎՆԵ ԿԱՐԳԻՆ ԿԱՐԳԻՆ  
ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ  
ՀԱՆԻ 16-2000Պ.

3233

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԸ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌԻՆԸ



ՄԱՍ 8 - րդ

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ - 2000

AVETIS PAPAZYAN  
THE ARMENIAN QUESTION AND THE GENOCIDE  
LOS ANGELES, 2000 PART - 8

Ապրիլ 24, 2000 թուական:

Լրացաւ Հայոց Մեծ եղեռնի 85ամեայ տարեկիցը:

Այո՛, 85 մղձաւանջային տարիներ անցան այդ ահաւոր եղեռնային օրերից, երբ Երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութիւնը կանգնեց ի սպառ ոչնչացման վտանգի առջեւ:

Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքական «Իթիհհատ վէ թերաքքի» (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան կողմից դաժանօրէն ծրագրուած եւ կազմակերպուած զանգուածային ջարդերին զոհ զնացին աւելի քան մէկուկէս միլիոն անմեղ Հայեր:

Դժբախտաբար թեւակոխում ենք 21րդ դար, բայց ղեռուս միջազգային չափանիշով չի ճանաչուած եւ չի դատապարտուած մարդկութեան ղէմ ուղղուած այդ ծանրագոյն յանցագործութիւնը:

Անցած 85 տարիների ընթացքում թուրք պատմագրութիւնը չարամբորէն աղաւաղել եւ նենգափոխել է իրականութիւնը, եւ այսօր էլ շարունակում է նոյնը կատարուել թէ՛ պատմաբանների եւ թէ՛ պետական գործիչների կողմից:

Թուրք պատմաբանները պնդում են, որ երկրի ներսում առաջացած ապստամբութեան հետեւանքով կառավարութիւնը նախաձեռնեց Հայերի տեղահանութիւնը, ոմանք էլ փորձում են ապացուցել, որ տեղահանութիւնը իրականացուել

է կովկասեան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով:

Աւելի ուշ սկսուեց խօսուել այն մասին, որ այդ տարիներին երկու ժողովուրդների միջեւ տեղի են ունեցել փոխադարձաբար սահմրկեցուցիչ ղէպքեր եւ այդ սարսփելի բախումներին ղոհ են ղնացել ոչ միայն Հայերը, այլեւ թուրքերը:

Իսկ 80ական թուականներին, թուրքերը աւելի առաջ ղնալով, աշխարհով մէկ սկսեցին յայտարարել թէ՛ Հայերն են կոտորել թուրքերին: Թուրքական մամուլն ու հեռուստատեսութիւնը նախաձեռնեցին ինչ որ «թուրքական եղբայրական ղերեզմանների» յայտնաբերման եւ պեղումների մասին Հաղորդումների կազմակերպումը: Այս կապակցութեամբ հրաւիրեցին մասնաղէտներ, կազմակերպուեցին ղիտաժողովներ, որպէսզի աշխարհով մէկ ապացուցեն, որ ղրանք Հայերի կողմից կոտորածի ենթարկուած թուրքեր են: Այնուհետեւ այդ «ղոհերի» յիշատակին սկսեցին յուշարձաններ կառուցել մի շարք վայրերում:

Թուրք պետական գործիչները իրենց անհիմն քարոզչական ծրագրերը իրականացնելու համար տեսապէս ծախսում են միլիոններ եւ ղիմում են ամէն մի նենգ միջոցների: Կազմակերպուած են յաճախակի «ղիտաժողովներ»:

Հրատարակում են կեղծիքներով լի գրքեր: Նկարահանում են բազմասերիանոց ժապաւէններ, որոնք ցուցադրում են թուրքական Հեռուստատեսութեամբ:

Հայերի Յեղասպանութիւնը Հերքելու եւ ընդհանրապէս Հայ ժողովրդի պատմութիւնը աղաւաղելու միտումներով առ այսօր թուրքիայում լոյս են տեսել բազմաթիւ գրքեր, որոնց Հեղինակները Հիմնականում շեշտը դրել են Հետեւեալ Հարցերին.

1.- Հայերը Օսմանեան կայսրութիւնում երբեւէ չեն ենթարկուել ճշման. օգտուել են ամէն կարգի արտօնութիւններին եւ վարել են խաղաղ ու բարուք կեանք:

2.- Օսմանեան կայսրութեան ոչ մի տարածքում Հայերը մեծամասնութիւն չեն կազմել:

3.- Հայաստանը, որպէս ինքնուրոյն պետութիւն երբեք գոյութիւն չի ունեցել:

4.- Հայերը եկուոր ժողովուրդ են եւ չեն ունեցել ինքնուրոյն մշակոյթ:

5.- Հայկական Հարցը անկլօնուսական Հակամարտութիւնների արդիւնք է, թուրքիայի ներքին գործերին միջամտելու Համար:

6.- Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբում Հայերը ապստամբել են: Ռուսաստանի Հետ Համագործակցելու Համար թուրքական կառավարութիւնը Հարկադրուած Հայերին տեղափոխել է մի այլ վայր:

7.- Եղել են փոխադարձ բախումներ: Հայերի Յեղասպանութիւն չի եղել, այլ Հակառակը՝

թուրքերն են զոհ գնացել Հայերի բռնութիւններին:

Նշենք նաեւ, որ այդ ստապատիր գրքերը յաճախ թարգմանում են արեւմտաեւրոպական լեզուներով, որպէսզի ապակողմնորոշեն միջազգային Հասարակական կարծիքը ի նպաստ թուրքերի:

Ահա այս ձեւով թուրք պատմաբանները աղաւաղում եւ նենգափոխում են Հայ ժողովրդի պատմութիւնը: Իրականում պատմական փաստերը ցոյց են տալիս, որ Օսմանեան կայսրութեան «իրաւական» Համակարգը շատ ծանր է եղել յատկապէս ոչ մահմետական Հպատակների Համար: Օսմանեան վարչա-իրաւական շրջանների չարահաճումներն ու բռնութիւնները, Հարկերի գանձման գործում արմատացած ապօրինութիւնները, երկրում ստեղծուած անապահովութիւնն ու կողոպուտը անտանելի էին դարձրել կեանքը Օսմանեան կայսրութիւնում:

Մահմետական Հոգեւոր եւ աշխարհիկ վերնախաւի Համար սկզբունքային Հարց է եղել այլաճաւատ Հպատակների մահմետականացումը, որի իրականացման Համար նրանք գործադրում էին ամէն տեսակի բռնութիւն: Նշենք, որ Պալքանեան երկրներում, Վրաստանում, ինչպէս նաեւ Հայաստանում դեւշիրմէ-մանկահաւաքի կիրառման քաղաքականութիւնը կատարեալ մի պատուհաս է եղել Հայ ժողովրդի Համար: Յայտնի է, որ մանկահաւաքի ենթարկուած պատանիներն

րին յատուկ զօրանոցային պայմաններում դաստիարակում էին մոլեռանդ մահմետականութեան ոգով եւ դարձնում ենիչերի: Անկասկած մանկահաւաքը մի Հզօր միջոց է եղել թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց Համաձուլման քաղաքականութեան իրականացման ճանապարհին:

Կատարեալ խտրականութիւն է եղել նաեւ ազգային տարազը ազատ կրելու եւ կենցաղային սովորութիւնները գործադրելու Հարցերում:

Այս բոլոր ճնշումներին պէտք է աւելացնել նաեւ սուլթանական կառավարութեան կողմից յաճախակի կազմակերպուող ջարդերը: Յատկապէս 19րդ դարում զանգուածային կոտորածի ենթարկուեցին սերպերը (1813 թ.), յոյները (1826 թ.), պուլկարները (1876 թ.), իսկ 1878 թ. Պերլինի Վեհաժողովից յետոյ, երբ Հայկական Հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային եւ կրօնական Հայածանքները, կեանքի ու գոյքի անապահովութիւնը, Հարկային ծանր գանձումներն ու գաւառային պաշտօնեաների չարահաճումներն աւելի մեծ չափերի Հասան:

Առանձին թուրք պետական գործիչներ, ինչպէս օրինակ մեծ վեզիր Քեամիլ փաշան, բացայայտ յայտարարում էին Օսմանեան կայսրութիւնում Հայ ազգը բնաջնջելու մասին:

1891 թ. Ապտիւլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին Հիմնականում քրտերից կազմուած «Համիդիէ» անկանոն զօ-

րագնդերը, որոնց գլխաւոր նպատակներէց մէկն էր Հայաճել ու կոտորել Հայ բնակչութիւնը:

1894 թ. Օգոստոսին թուրքական բանակը ծաւալուն յարձակում նախաձեռնեց Սասունի վրայ: Տեղի ունեցաւ մի սարսափելի ջարդ. որին զոհ գնացին անխտիր տղամարդիկ, կանայք ու երեխաներ: Կոտորածներ տնդի ունեցան նաեւ Հայաբնակ այլ նոստանքներում, ինչպէս նաեւ Կ. Պոլսում:

Ապտիւլ Համիտի բռնատիրութեան շրջանում Հայերի բնաջնջման վերաբերող այս նենգ արարքները նոյնութեամբ որդեգրեցին նաեւ 1908 թ. իշխանութեան գլուխ եկած երիտթուրքական կառավարութիւնն ու «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխները: Դրա վառ ապացոյցն է 1909 թ. Ապրիլին Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած Հայերի կոտորածները, որոնք նախօրօք նախապատրաստուած եւ հրահրուած էին երիտթուրքերի կողմից: Ապրիլեան այդ կոտորածների ընթացքում Հայերը կորցրին 30 Հազար մարդ:

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրէին արեւմտահայութեան վիճակը առաւել վատթարացաւ: Գաւառներում կրկին տեղի էին ունենում վայրագ սպանութիւններ, բռնարարութիւններ, ունեցուածքի յափշտակութիւններ, իսկ յանցադրծները մնում էին անպատիժ: Հայկական Հայածանքների Հիմնական դրդապատճառը տուեալ ժամանակ կապուած էր Հայկական

չարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ վեց նահանգներում բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում մեծ տէրութիւնների շրջանակներում: Ձնայած այն ի վերջոյ ստորագրուեց թուրքական կառավարութեան կողմից. (Փետրուար 8, 1914 թ.), սակայն հենց սկզբից թուրքերը դէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը եւ երբեւէ նպատակ չունէին կեանքի կոչելու այն:

Եւ այդպէս արեւմտահայութեան վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական: Առաջին Համաշխարհային պատերազմի նախաշեմին «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավարները իրենց գաղտնի նիստերում երբ ընդունեցին Հայերին բռնի տեղահանելու, կոտորելու, եւ ի սպառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդէն նկատուում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին յարմար ժամանակի: Եւ այդ յարմար ժամանակը հանդիսացաւ համաշխարհային պատերազմը:

Եւ սկսեցին կոտորել Հայերին, այն էլ ինչպիսի բարբարոսական ձեւերով:

Այնպէս որ զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի տարածքում գտնուող Հայաբնակ վայրերում, չէին առնչուում ռազմական

նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրոք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական Հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութեանը ի սպառ բնաջնջելու ճանապարհը:

Եւ այդպէս ժամանակակից թուրք պատմաբաններն իրենց ուսումնասիրութիւններում, շրջանցելով պատմական փաստերը, փորձում են քօղարկել Արեւմտեան Հայաստանում եւ առհասարակ ամբողջ Թուրքիայում տեղի ունեցած Հալածանքներն ու ցեղասպանութիւնը: Թուրք պատմաբաններ, իրենց ազգայնամոլական շահադիտումներից ելնելով փորձում են նոյնիսկ աղաւաղել մօտ անցեալի մի շարք թուրք պետական եւ մշակոյթի գործիչների որոշ չափով առարկայական տուեալները: Հարցն այն է, որ ինչ-որ տեղ թուրք պատմաբանների եւ պետական գործիչների գրիչը չի խուսափել նշելու այն ողբերգութիւնը, որը տեղի ունեցաւ Ապտիւլ Համիտեան բռնատիրութեան եւ երիտթուրքերի իշխանութեան օրօք Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում արեւմտահայութեան հետ:

Գոհունակութեամբ պիտի նշենք, որ մեր օրերում եւս գնահատանքի արժանի գործեր են կատարում առանձին թուրք գործիչներ, որոնք ընդունում եւ հաստատում են Հայոց Մեծ Եղեռնի իրողու-

թիւնը: Ահա նրանցից մի քանիսը,- թուրք պատմաբան Թաներ Աքչամը, Գերմանիայի Պոխում համալսարանի դասախօս, ծագումով թուրք, Ռուր Ֆիքրէթ Ատամիրը, թուրք լրագրող՝ Իլհան Սելճուկը, թուրք մտաւորական Մուստաֆա Ջիֆթչիս, թուրք լրագրող-վիպասան Ահմէտ Ալթանը, Ռաբբը Զարաբուլուն, Ալի էրտէմը եւ ուրիշներ:

Իսկ ԱՄՆում բնակվող թուրք մտաւորական Սելճուք Թէզզիւլը այսպէս է արտայայտել իր միտքը.

«Ես երբեք հաւատք չեմ ընծայել եւ չեմ վստահել իմ երկրի պաշտօնական պատմութեան եւ գաղափարախօսութեան: Եւ երբ ես հետազօտեցի եւ ուսումնասիրեցի արժանահաւատ եւ ճշմարտացի պատմաբաններին, ես դէմ առայ արիւն սառեցնող ճշմարտութեան: Անցնող դարում տեղի ունեցած Հայերի մեծ ցեղասպանութիւնը սարսափելի էր: Այո՛, իսկապէս մէկուկէս միլիոն անմեղ, բարձր զարգացում ունեցող մի ժողովուրդ՝ Համեմատած քոչուր-բարբարոս իրենց ջարդարարների հետ, սպանդի ենթարկուեց թունեղէնի նման,

թուրքական զինուորների եւ ժողովրդի կողմից, որոնց հետ ապրել էր դարերից ի վեր կողք կողքի» (Las Vegas Review-Journal, April 28, 1996):

Եզրակացնելով պիտի նշենք, որ շուտով իր աւարտին կը մօտենայ 20րդ դարը: Առ այսօր մի շարք երկրներ ճանաչել եւ դատապարտել են դարասկզբի Հայերի Առաջին Ցեղասպանութիւնը: Այսուհետեւ պայքարը պէտք է շարունակել էլ աւելի խորաթափանց եւ բանիմացօրէն, որպէսզի աշխարհի բոլոր պետութիւնները անխնայորէն ճանաչեն ու դատապարտեն մարդկութեան դէմ ուղղուած այդ յանցագործութիւնը: Եւ արդար հատուցում ստանայ աշխարհով մէկ սփռուած հայութեան հողային եւ նիւթական պահանջատիրութիւնը:

«ԱՍՊԱՐԷՁ», ԾԱԲԱՔ, 22 ԱՊՐԻԼ 2000

# ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Ապրիլը գարնանային ուրախ, արեւով եւ յոյսով լի ամիս է աշխարհի բոլոր ժողովուրդների համար, իսկ մեզ հայերիս ազգային սուգի՝ 1915 թ. Մեծ եղեռնի բիրաւուր մահատակների յիշատակի ոգեկոչման ամիսը:

Այսօր 2000 թուականն է եւ Ապրիլ 24-ին լրանում է հայ ժողովրդի մկատմամբ գործադրուած այդ ծանրագոյն ողբերգութեան 85-րդ տարելիցը:

Անցած տարիների ընթացքում մի շարք երկրների խորհրդարաններ եւ կառավարութիւններ անաչեցին ու դատապարտեցին հայերի Յեղասպանութիւնը: Այդ երեւոյթը շարունակոււմ է մահու այսօր, քանի որ մեծ աշխատանքներ են տարոււմ մշտադատութիւնը եւ արդարութիւնը վերականգնելու ուղղութեամբ:

Այս բոլորով համոզեւ, առ այսօր թուրքիան չի անաչել հայերի մկատմամբ կատարուած Յեղասպանութիւնը: Ընդհակառակը, արդի բուրժուական պատմագրութիւնը, կառավարութիւնն ու պետական գործիչները պաշտօնապէս հերքում եւ ուրանում են Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները: Դժբախտաբար բուրժուական ժայնակցում են մահ մի շարք օտարազգի պատմաբաններ եւ քաղաքական գործիչներ այն կեղծ պատուականով, որ իբր հաւաստի փաստեր չկան հայերի Յեղասպանութեան մասին:

Իրականում 1915-1923 թթ. հայերի Յեղասպանութեան վերաբերող կան բազմաթիւ փաստագրական միւթեր, այդ թւում՝ մահակներ, հեռագրեր, բարձրաստիճան դիւանագէտների գեկոյցներ, ակամատեսի վկայութիւններ, որոնք բոլորն էլ հաւաստի են եւ մզբրիտ պատկերացում են տալիս հայ ժողովրդի մեծագոյն ողբերգութեան մասին: Աշխարհի տարբեր արխիւներում եւ գրապահոցներում գտնուող այդ միւթերի մեծ մասը հրապարակուած են անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, սպաներէն, արաբերէն, հայերէն եւ այլ լեզուներով:

Սոյն յօդուածում մեմք աշխատել ենք ի մի բերել եւ ընթերցողին ծանօթացնել այդ արխիւներում գտնուող հայերի Յեղասպանութեան փաստաթղթերին ու դրանց հրատարակութիւններին:

Բնականաբար փաստաթղթերի թիւը շատ-շատ է, այնպէս որ մի յօդուածի սահմաններում հնարաւոր չէ կանգ առնել բոլորի վրայ:

Սկսենք բուրժուական փաստաթղթերից:

Հայերի Յեղասպանութեան վերաբերող թուրքական աղբիւրների շարքում կարեւոր փաստագրական նիւթեր կան յատկապէս երիտթուրքերի կառավարութեան եւ կուսակցական դեկավարների 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած դատավարութեան արձանագրութիւններում, որոնք լիովին հաւաստի են եւ անվիճելի: Տարօրինակ է, որ այս դատավարութեան նիւթերը առ այսօր գաղտնի են պահուած թուրք հասարակութիւնից: Ինչո՞ւ, որովհետեւ այնտեղ փաստարկներով ցոյց է տրուած իրականութիւնը: Դատավարութեան ընթացքում արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցները՝ ծածկազիր հեռագրերը, նամակները, հրամանները, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւնները լիովին բացայայտում են, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականօրէն իրականացուել «յատուկ կազմակերպութեան» (Թէշքիլիմթ-ը մահուսէ) բանտերից ազատած արինարբու հրոսակների կողմից:

Ահա մի քանի ծածկազիր հեռագրերի թարգմանութիւնները:

1) Էրզրումի նահանգապետ Միւնլիր պէյը կենտրոնից ստացուած հրամանի ի պատասխան ուղարկել է հետեւեալ հեռագիրը:

«Քըղիի ճանապարհով էրզրումից ուղարկուած հարուստ հայերի քարաւանները, յարձակման ենթարկուելով Պեհհատին Շաքիր պէյի կազմած հրոսակախմբերի եւ տերսիմցիների կողմից, կոտորուել են, իսկ նրանց ունեցուածքը կողոպտուել»:

2. Պեհհատին Շաքիր պէյի էրզրումից Անթալիայի կառավարիչին ուղարկած ծածկազիր հեռագրում նշուած է.

«Էրզրումի, Վանի, Պիթիխի, Տիարպեքիրի, Սւազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մուսուլի եւ Տէր Զօրի կողմերը: Իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում»:

3. 1915 թ. Մայիսի 4-ի թուազրութիւնը կրող, էրզրումից «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան խորհրդի պատասխանատու քարտուղար Ռեանելի Նազըմ պէյին ուղղած ծածկազիր

հեռագրով Պեհաէտտին Շաքիրը հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրէ՞ք, այդտեղից ուղարկուող հայերին գտնում է՞ք, թէ՞ ոչ: Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն էք յայտնել, ոչնչացնում է՞ք, թէ՞ ճամբու էք դնում»:

1919-20 թուականներին Կ. Պոլսում տեղի ունեցած վերոյիշեալ դատական նիստերի ընթացքում, ռազմական բարձր ատեանին ներկայացուած Եոզղաթի հայերի կոտորածներին վերաբերող վաւերագրային փաստաթղթերի ստուար մի մասը թուրքերէն բնագրերով եւ հայերէն թարգմանութեամբ ընդգրկուած են Գրիկէրի (Գրիգոր Կէթիկէրեան) «Նոզդաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը» խորագիրը կրող գրքում, որոնք պարզորոշ լոյս են սփռում մեծ Եղեռնի ընթացքում հայերի տեղահանութեան ու ջարդերի կազմակերպման մասին:<sup>1</sup>

Հայերի Յեղասպանութեան ամենահամոզիչ փաստագրական նիւթերն են պարունակում նաեւ Արամ Անտոնեանի «Մեծ Ոճիրը» խորագրով մի քանի անգամ հայերէն լոյս տեսած գիրքը: Այն առաջին անգամ լոյս տեսաւ 1920 թ. Լոնտոնում, «Նայիմ Պէյի Յուշերը» վերնագրի տակ:<sup>2</sup>

Թուրք պաշտօնեայ Նայիմ պէյը 1915-1917 թթ. Հալէպում վարում էր գաղթականական տեսչութեան գլխաւոր քարտուղարի պարտականութիւնը: Պաշտօնավարութեան տարիներին նրա ձեռքն են անցել մեծ թուով գաղտնի փաստաթղթեր, այդ թւում եւ թալեաթ փաշայի հայերի տեղահանութեան եւ կոտորածի կազմակերպման վերաբերող մի շարք ծածկագիր հեռագրեր: Ահա մի հատուած 1915 թ. Սեպտեմբեր 9-ը թուագրութիւնը կրող հեռագրից.

«Հայերու համար թուրքիոյ հողին մէջ ապրելու, աշխատելու պէս իրաւունքներ ամբողջովին ջնջուած են եւ այս մասին կառավարութիւնը, բովանդակ պատասխանատուութիւնը ստանձնելով, հրամայած է նոյնիսկ օրօրոցի մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մէջ այս հրամանին գործադրութեան արդիւնքները տեսնուած են...» (էջ 35):

Նիստ կարեւոր փաստագրական նիւթեր եւ ականատեսի վկայութիւններ կան նաեւ 1921 թ. Յունիս 2-3-ը Պերլինում նահանգային դատարա-

նում տեղի ունեցած թալեաթ փաշայի ահաբեկիչ Սողոմոն Թեւլիրեանի դատավարութեան արձանագրութիւններում: Նշենք, որ դատավարութեան վերջում ընդունուած դատավճռով մեղադրեալ Սողոմոն Թեւլիրեանը լիովին արդարացուեց եւ ազատ արձակուեց: Այդ դատական նիստերի ընթացքում վկայութիւններ տուեցին հայ տուժածները, ինչպէս նաեւ գերմանացի մի քանի հանրալայտ գործիչներ, այդ թւում գերմանացի արեւելագէտ, հոգեւորական եւ հասարակական գործիչ Եոհաննէս Լեփսիուսը: Նա իր ընդարձակ ելոյթում նշեց, որ «Արեւելեան Անատոլիայի վիլայէթներից տեղահանուած ողջ բնակչութեան սոսկ 10 տոկոսը հասաւ աքսորավայրեր: Մնացած 90 տոկոսը կոտորուեցին աքսորի ճանապարհին. ժանդարմաների վաճառած կամ քրտերի առեւանգած կանանցից ու աղջիկներից բացի, մնացած բոլորը մահացան սովից ու հիւծուածութիւնից...»:

Պաշտօնապէս յայտարարուած էր, թէ այդ տեղահանութիւնները լոկ նախագրուական միջոցառումներ են, բայց առանձին հեղինակաւոր անձինք միանգամայն բացցէիբաց խոստովանում էին, որ աքսորի նպատակը հայ ազգի բնաջնջումն է...»:<sup>3</sup>

1995 թ. հայերի Յեղասպանութեան 80-ամեակի առթիւ առաջին անգամ լինելով հայերէն հրատարակուեց Փրոֆ. Վահագն Տատրեանի «Հայկական Յեղասպանութիւնը Որոհարանային եւ Պատմագիտական Քննարկումներով» խորագիրը կրող աշխատութիւնը: Այստեղ բերուած թուրքական խորհրդարանի պատգամաւորների մեղադրական ելոյթները նոյնպէս խիստ կարեւոր փաստագրական վկայութիւններ են Հայերի Յեղասպանութեան մասին:

Հարկ է նշել, որ թուրք պատմաբանները, պետական եւ մշակութային գործիչները իրենց աշխատութիւններում եւ յուշագրութիւններում անդրադարձել են նաեւ հայ-թուրքական յարաբերութիւններին եւ ինչ-որ տեղ նրանց գրելը չի խուսափել նշելու այն ողբերգութիւնը, որ տեղի ունեցաւ Ապտուլ Համիտեան բռնատիրութեան եւ երիտթուրքերի իշխանութեան օրօք արեւմտահայութեան հետ: Որպէս փաստագրական նիւթ

օամաներէն գրուած նրանց երկերից մենք կատարել ենք բաւականաչափ թարգմանութիւններ եւ հրատարակել պարբերական մամուլում: Թարգմանել եւ հրատարակել ենք նաեւ Երեւանի Արուեստի եւ Գրականութեան թանգարանում պահուող Գրիգոր Զոհրապի ձեռագրային ֆոնտից մեր յայտնաբերած մի շարք օամաներէն փաստագրական նիւթեր, որոնք վերաբերում են Մեծ Եղեռնի ողբերգութեանը: Կատարել ենք նաեւ այլ բազմապիսի թուրքական վաւերագրական թարգմանութիւնները, ինչպէս նաեւ վերոյիշեալ 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած Երիտթուրքական Կուսակցութեան ղեկավար գործիչների դատավարութեան փաստաթղթերը, որոնք առնչուում են արեւմտահայերի զանգուածային տեղահանութեան ու ջարդերի հետ»:<sup>4</sup>

\*\*\*

Բնականաբար հայերի Յեղասպանութեանը վերաբերող փաստագրական վաւերագրերի շարքում առաջին հերթին կարելոր տեղ են գրաւում զանազան բնագաւառներում աշխատող գերմանացի գործիչների հաղորդած տեղեկութիւնները, որոնցով հաւաստի փաստերով աշխարհին են ներկայացուած Հայոց Մեծ Եղեռնի ծանրագոյն ողբերգութեան պատասխանատուները:

Նրանց թւում իր առանձնայատուկ տեղն ունի գերմանացի արեւելագէտ, հոգեւոր եւ հասարակական անխոնջ գործիչ Եոհաննէս Լեփսիուսը: Դեռեւս Ապտուլ համիտեան բռնատիրութեան շրջանում Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայկական կոտորածների մասին նա բազմաթիւ փաստեր է հաւաքել եւ 1896 թ. հրատարակել «Հայաստանն ու Եւրոպան» վաւերագրական գիրքը:<sup>5</sup> Իսկ Մեծ Եղեռնի ողբերգական դէպքերի մասին Յ. Լեփսիուսը 1919 թ. հրատարակեց փաստաթղթերի մեծարժէք մի ժողովածու՝ «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ.» խորագրով:<sup>6</sup> Այս ժողովածուում ընդգրկուած նիւթերը, այդ թւում Գերմանիայի եւ Թուրքիայի դեսպանների, հիւպատոսների ու այլ պաշտօնական անձանց գաղտնի զեկուցագրերը, ականատեսների

վկայութիւնները անհերքելիորէն հաստատում են, որ Երիտթուրքերի կազմակերպած հայերի բռնի տեղահանութիւնն ու կոտորածները նպատակ ունէին ոչնչացնել հայ ժողովրդին եւ այդ յանցագործութեան մէջ իր առիւծի բաժինն ունէր նաեւ Գերմանիան:

Յ. Լեփսիուսը նշում է հետեւեալը:

«Հազարաւոր հայերի, պատուաւոր ու կրթուած մարդկանց՝ պատգամաւորների, հրապարակախօսների, գրողների, բանաստեղծների, իրաւաբանների, փաստաբանների, նոտարների, ծառայողների, բժիշկների, վաճառականների, բանկիրների եւ բոլոր ունեւոր ու ազդեցիկ տարրերի զանգուածային ձերբակալութիւնները կատարուեցին առանց որեւէ մի դատաքննութեան: Ո՛չ մի անգամ եւ ո՛չ մի դէպքում նրանց հանդէպ մեղադրանք չի յարուցուած եղել պետութեան դէմ ուղղուած որեւէ թշնամական գործողութեան մէջ կամ նման մտադութեան մէջ: Պարզապէս նրանք (թուրքերը) ուզում էին գլխատել հայ ժողովրդին՝ նախքան նրա առանձին մասերի ջախջախման անցնելը...»:<sup>7</sup>

Դիւանագիտական զեկուցագրերի հիման վրայ Յ. Լեփսիուսը մերկացրել է այն ահաւոր կեղծիքն ու խեղաթիւրումները, որոնց դիմում էին Երիտթուրքերը, ջարդերի համար ամբողջ պատասխանատուութիւնը իրենց զոհերի վրայ բարդելու նպատակով:

«Կայսրութեան բոլոր կողմերում ցրուած մէկուկէս միլիոն բնակչութեան տեղահանութիւնը չի կարող ոչ մի ռազմական նկատառումով արդարացուել: Միակ բացատրութիւնը, որը թոյլ չի տալիս այդ կառավարական միջոցաւման մէջ տեսնել խելացնորութեան արարքը, այն է, որ խօսքը գնում էր ներքին քաղաքականութեան ծրագրի մասին, որը հետապնդւում էր նախօրօք կանխամտածուած որոշումով, սառնասիրտ հաշուարկով ոչնչացնել էլթնիկական հայ տարրը:<sup>8</sup>

1915 թ. հայերի կոտորածները դատապարտող առաջին գերմանացի գործիչներից մէկն է եղել նաեւ Հայէպի գերմանական ռէպալական դպրոցի աւագ դասատու Դոկտ. Մարտին Նիպագէն: Նա ցատումով լի դիմում-բողոք է գրել «Մի քանի խօսք գերմանական ժողովրդի ներ-

կայացուցիչներին» վերնագրով, որը հրատարակուել էր տուեալ ժամանակուայ եւրոպական մամուլի էջերում: Այն սկսում է հետեւեալ ցատումնալի խօսքերով:

«1915 թ. Սեպտեմբերին, երեք ամսեայ արձակուրդից յետոյ, Պէյրութից Հայէպ վերադառնալով, ես սարսափով իմացայ, որ սկսուել է հայերի կոտորածների մի նոր ժամանակաշրջան, շատ աւելի ահաւոր, քան Ապտուլ Համիտի օրօք էր եղել, որը նպատակ ունէր ամբողջովին ոչնչացնել հայ ժողովրդին՝ խելացի, աշխատասէր, առաջադիմութեան ծարաւի այդ ժողովրդին...»<sup>9</sup>

1995 թ. Երեւանում լոյս տեսաւ գերմաներէն բնագրից թարգմանուած Հայնրիխ Ֆիրբիւսերի «Հայաստանը 1915» գիրքը, որ ականատեսի կենդանի ու անմիջական յուշերն են: Հայնրիխ Ֆիրբիւսերը 1915-1918 թթ. եղել է Թուրքիայում գործող գերմանական զինուորական առաջելութեան հրամանատար՝ Լիման Ֆոն Սանդերսի համհարզն ու թարգմանիչը: Իր պաշտօնի բերումով ականատես է եղել հայերի բռնի տեղահանութեան ու կոտորածներին: «Նաչքար» վերնագիրը կրող գլխում Հ. Ֆիրբիւսերը ահա թէ ինչպէս է նկարագրել Քեմալի կիրճում կատարուող հայերի ահաւոր սպանդը:

«Գլխապտոյտ բարձունքից տաննեակ հազարաւոր կանանց ու երեխաներին, աննկարագրելի կտտանքների ենթարկելուց յետոյ, ողջ-ողջ ցած նետեցին: Այդ ձորը իրաւամբ տանթէյական կարելի է կոչել, որովհետեւ յիշեցնում է անէծքի այն վիճը, որը Տանթէն նկարագրում է իր «Դժոխքում»: (Հատուածը քաղուած է էտուարտ Աւագեանի գրախօսականից. տե՛ս Բնօրրան, թիւ 1-3, Երեւան, 1996):

Որպէս փաստագրական ապացոյց մեծ արժէք ունեն նաեւ գերմանացի գրող եւ հրապարակախօս Արմին Վեկնէրի հայերի կոտորածների ընթացքում թուրք ռճարգործների կատարած դաժան արարքների լուսանկարած պատկերները: Նա 1915-1916 թթ. որպէս սանիտարական ծառայութեան սպա գտնուել է Միլագետքում եւ անմիջականօրէն ականատես է եղել հայ աքսորեալների տառապան-

քներին եւ կոտորածներին: Յաւօք, նրա գաղտնի նկարահանած 2 հազարի մօտ լուսանկարներից ստուար մասը փչացել եւ կորել է:<sup>10</sup> Մեծ մարդասէր Արմին Վեկնէրը իր ամբողջ կեանքում դատապարտել է երիտթուրքերի կատարած ցեղասպանութիւնը եւ գրել արդարամիտ յօդուածներ եւ գրքեր:

Մեր օրերում հայերի Յեղասպանութեան վերաբերող գերմանական արխիւների ուսումնասիրողների թիւը բաւական շատ է:

Գանատայի էտմոնտոն քաղաքի Ալպերտայի համալսարանի դասախոս՝ Ուլրիխ Տրումբենբըրը 1968 թ. անգլերէն լոյց ընծայեց «Գերմանիան եւ Օսմանեան կայսրութիւնը 1914-1918 թթ.» խորագրով գիրքը: Նա առաջիններից մէկն էր, որ իր գրքում գիտական շրջանառութեան մէջ դրեց Գերմանիայի եւ Աւստրիայի արխիւներում պահուող ցարդ անյայտ փաստաթղթերը: Յատկապէս գերմանական նորայայտ փաստաթղթերով է շարադրուած Տրումբենբերի գրքի «Հայկական Հալածանքները» գլուխը, ուր հեղինակը ձգտել է անաչառօրէն բացայայտել Գերմանիայի դերը հայկական ողբերգութեան մէջ:<sup>11</sup>

Վերջին տարիներին Հայերի Յեղասպանութեան վերաբերող գերմանական արխիւային փաստաթղթերի յայտնաբերման, թարգմանութեան եւ հրատարակութեան գործում կարեւոր աշխատանքներ կատարեցին հայ եւ օտար գիտնականները: Այդ թւում Ստեփան Ստեփանեանը 1990 թ. ուսներէն հրատարակեց «Գերմանական աղբիւրները հայերի Յեղասպանութեան մասին» խորագրով փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուի առաջին հատորը, որը բաղկացած է 6 մասից:

Արտեմ Օհանճանեանը առաջինն էր, որ ձեռնարկեց Աւստրիայի արխիւներում պահուող հայերի Յեղասպանութեան վերաբերող գերմանական փաստաթղթերի հրապարակումը: Այն լոյս տեսաւ Միւնխէնի Հայկական Հարցերի Ինստիտուտի նախաձեռնութեամբ 1988 թ. «The Armenian Genocide. Documentations» խորագրի տակ:

Կյոթինքենում (Վիեննա) գործող «Սպառնալիքի տակ գտնուող ժողովուրդների պաշտպանութեան

ընկերութիւնը» 1987 թ. գերմաներէն լեզուով հրատարակեց՝ «Հայաստան. Յեղասպանութիւն, տեղահանութիւն. «Աքսոր» խորագրով փաստաթղթերի ժողովածուն, որի խմբագիրներն են Թ. Հոֆմանը եւ Ժ. Քոչարեանը:

Փրոֆ. Վահագն Տատրեանը նոյնպէս երկար տարիներ ուսումնասիրել է Գերմանիայի եւ Վիեննայի գրապահոցներում գտնուող արխիւային նիւթերը եւ 1994 թ. հրատարակել «Հայերի Յեղասպանութեան փաստագրումը գերմանական եւ աստորիական աղբիւրների հիման վրայ» աշխատութիւնը, ուր լիովին հաստատում է Գերմանիայի մեղակցութիւնը Հայերի Յեղասպանութեան հարցում, եզրակացնելով, որ այդ երկրների արխիւներէն յայտնաբերուած փաստաթղթերը ամենավառ ապացոյցներն են Հայերի Յեղասպանութեան պատմական իրողութեան:

Եւ վերջապէս բարձր գնահատանքի արժանի Դոկտ. Փրոֆ. Վարդգէս Միքայէլեանի երկար տարիների տքնաջան աշխատանքի արդիւնքը հանդիսացող Գերմանիայի արխիւներից յայտնաբերած մեծ թուով փաստաթղթերի եւ ականատեսների վկայութիւնների ստուարածաւալ գիրքը, որը լոյս տեսաւ 1998 թ. Երեւանում:



Հենրի Մորկընթաուն, լինելով 1913-1916 թթ. Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպանը Թուրքիայում, առաջիններից մէկն եղաւ կանխելու հայերի բռնի տեղահանութիւններն ու կոտորածները: Այդ կապակցութեամբ նա հանդիպումներ ունեցաւ Թայեաթի եւ էնվերի հետ, բայց ապարդիւն: Հենրի Մորկընթաունի յուշագրական գիրքը, որը լոյս տեսաւ 1918 թ., շարադրուած է Թուրքիայի ամերիկեան հիւպատոսների զեկոյցների հիման վրայ, որը ունի փաստագրական մեծ նշանակութիւն:

«Ես փստահ եմ,- գրել է Հ. Մորկընթաուն,- որ ամբողջ մարդկութեան մէջ չկան այնպիսի սարսափելի փաստեր, ինչպէս այս կոտորածն էր: Թւում էր, որ անցեալում եղած մեծ կոտորածներն ու հալածանքները 1915 թ. հայ ազգի տանջանքների հետ համեմատած աննշան են...»<sup>12</sup>

Փաստագրական նիւթերով հրատարակուած խիստ կարեւոր են նաեւ այդ ժամանակուայ ԱՄՆ-ի քաղաքական եւ դիւանագիտական գործիչների, պատմաբանների, հրապարակախօսների, զանազան բնագաւառի գործիչների յայտնած հաւաստի տեղեկութիւնները, որոնք շարադրուած են ակադեմիական վկայութիւնների հիման վրայ: Դրանց թւում են՝ Հերբերտ Ա. Կիբբոնը, Ըկասթա Բերնոն, Հենրի Հարրիսոն Ռիգսը, Ադա Չեմպերսը, էդուարդ Ս. Լիդելը եւ շատ ուրիշներ:

Փաստագրական նիւթերով հրատարակուած խիստ կարեւոր են պատմաբան եւ հրապարակախօս Հերբերդ Կիբբոնսի աշխատութիւնները: Նա 1908-1913 թթ. գտնուել է Թուրքիայում, որպէս New York Herald ամերիկեան թերթի թղթակից, ինչպէս նաեւ դասաւանդել է Տարսոնի ամերիկեան գոլէճում: Թուրքիայում գտնուելու տարիներին Դոկտ. Կիբբոնսը բազմիցս ականատես է եղել սուլթանական եւ երիտթուրքական իշխանութիւնների կազմակերպած հայկական ջարդերին: Նրա աշխատութիւնը, որը լոյս տեսաւ անգլերէն եւ այնուհետեւ ռուսերէն 1916 թ. Փեթրոկրատում, նշում է հետեւեալը.

«1915 թ. Ապրիլից Օսմանեան կառավարութիւնը ամբողջ Թուրքիայում սկսեց կանխամտածուած կենսագործել հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը: Վեց ամսուայ ընթացքում սպանուել է մէկ միլիոն հայ: Զօրքերի քանակը եւ նրանց ջարդելու միջոցներն անօրինակ են նորագոյն պատմութեան մէջ»<sup>13</sup>:

Վերջին տարիներին ամերիկահայ պատմաբանները խիստ շահեկան աշխատանքներ կատարեցին ԱՄՆ-ի Պետական Գարտուղարութիւնում եւ Գոնկրէսի գրապահոցներում պահուող արխիւային նիւթերի, այդ թւում դիւանագիտական բնագաւառի գործիչների գրած նամակների, զեկոյցների, ինչպէս նաեւ ականատես միտիոներուհիների վկայութիւնների ուսումնասիրութեան եւ հրատարակման գործում:

1915-1923 թթ. հայոց Մեծ Եղեռնին վերաբերող նիւթերը ամերիկեան պարբերական մամուլից

քաղել եւ հրատարակել է Գալիֆորնիայի Պըրքլիի համալսարանի դասախօս Ռիչըրտ Գլոյեանը:<sup>14</sup>

1984 թ. պատմաբան ժիրայր Լիպարիտեանի խմբագրութեամբ հրատարակուեց՝ «Ցեղասպանութիւն, ոճրագործութիւն ընդդէմ մարդկութեան» խորագրով գիրքը, ուր ընդգրկուած են ամերիկեան գործիչներից ականարկներ եւ փաստագրական նորայայտ նիւթեր: Գրքի յաւելուածում կան 30 փաստաթղթեր:<sup>15</sup>

1987 թ. փաստագրական հարուստ նիւթերով լոյս տեսաւ Լիպարիտ Ազատեանի եւ Արմէն Տօնոյեանի կազմած «Հայերի Ցեղասպանութիւնը» գիրքը:<sup>16</sup>

Փաստագրական կարեւոր նիւթեր են պարունակում նաեւ Լիպարիտ Ազատեանի աշխատասիրած «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» երկու գրքերը: Առաջին գիրքը լոյս տեսաւ 1995 թ. Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցի օրերին, իսկ երկրորդը՝ 1999 թ. Առաջին գրքում տրուում է Մեծ Եղեռնից յետոյ սնկի նման աճած հայ որբանոցների համապարփակ պատմութիւնը, ուր ըստ արժանւոյն գնահատուել են հայերի եւ օտար բարեգործական կազմակերպութիւնները, բարերարները, որոնց ջանքերով վերապրեցին հազարաւոր հայ որբեր: Իսկ երկրորդ գրքում հեղինակը շեշտը դրել է հայ որբերի վկայութիւնների եւ ականատեսի աչքով պատմած նրանց տառապանքների եւ դժուարին պայմանների մասին: Հակառակ ձեռք առնուած միջոցներին, նրանցից շատերը բռնի թրջացան, քրտացան ու արաբացան:

Ամերիկահայ պատմաբան Ռուբէն Ատալեանը հիմնականում իր ուսումնասիրութիւնների աուարկան է դարձրել հայերի Ցեղասպանութեան ու Հայ Դատի հարցերը: Նա հաւաքել, ֆիլմագրել եւ հրատարակել է ԱՄՆ-ի արխիւներում պահուող հայերի Ցեղասպանութեան վերաբերող 37,000 փաստաթղթեր:<sup>17</sup>

ԱՄՆ-ի Պետական Բարտուղարութեան արխիւների վաւերագրային փաստաթղթերի ուսումնասիրութեան եւ հրատարակման գործում զգալի աշխատանք կատարեց նաեւ բրիտանահայ պատմաբան Արա Սարաֆեանը: Այդ փաստաթղթերի 5

3233

հատորով հրատարակութիւնը ստանձնել էր The Armenian Review հրատարակչութիւնը: Աշխատութեան խորագիրն է «Միացեալ Նահանգների պաշտօնական փաստաթղթերը հայերի Ցեղասպանութեան մասին»: 1994 թ. լոյս տեսած առաջին հատորում ընդգրկուած են ամերիկացի դիւանագէտների նամակները, տեղեկագրութիւնները, զեկոյցները Եփրատ գետի երկայնքով կատարուած հայերի հալածանքների ու կոտորածների մասին: 1995 թ. լոյս տեսած երկրորդ հատորում ամփոփուած են Միացեալ Նահանգների դիւանագիտական ներկայացուցիչների հաղորդած զեկոյցները՝ Տրապիզոնից, Սամսոնից, Ատրիանապոլիսից, Իզմիրից, Մերսինից, Թիֆլիսից եւ Թեհրանից: 1995 թ. կէսերին լոյս տեսած երրորդ հատորում ընդգրկուած են ամերիկեան հիւպատոսներից Փոքր Ասիայի կենտրոնական մասում գտնուող քաղաքներից ստացուած զեկոյցները: Այս ուղղութեամբ աշխատանքները շարունակուում են:

Հայերի Ցեղասպանութեան փաստագրական նիւթերով բացայայտման եւ Հայ Դատի պաշտպանութեան խնդրում, իր հեղինակած հրատարակութիւններով հսկայական աշխատանք է կատարում UCLA համալսարանի Հայ Ժողովրդի Պատմութեան Ամպիոնի վարիչ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանը:<sup>18</sup> Յատկապէս գնահատելի են «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ նրա կազմակերպած միջազգային գիտաժողովների զեկուցումներն ու հրատարակութիւնները:

\*\*\*

1916 թ. լոյս տեսաւ անգլիական պետական գործիչ եւ պատմաբան Ճէյմս Պրայսի կազմած փաստաթղթերի ստուրածաւալ ժողովածուն «Հայերի նկատմամբ վերաբերմունքը Օսմանեան կայսրութիւնում 1915-1916 թթ.» խորագրով, որը բովանդակում էր 158 փաստաթուղթ, 628 էջ ծաւալով: Պատմագրական գրականութեան մէջ այն անուանուում է նաեւ կապոյտ Գիրք, նկատի ունենալով գրքի կազմի կապոյտ գոյնը:

Այս գրքում հիմնականում ընդգրկուած են թուրքիայում աշխատող օտարերկրացիների տեղեկագրութիւններն ու զեկուցագրերը իրենց կառավարութիւններին, ականատեսների յուշագրութիւնները, դիմումներն ու բողոքագրերը: Այդ բոլորը ցոյց են տալիս, որ հայերի կոտորածները ոչ մահմետական մոլեռանդութեան բռնկում էր եւ ոչ էլ միջցեղային թշնամութեան դրսեւորում, այլ որոշակի ծրագրուած պետական քաղաքականութիւն, որը նախապատրաստել ու իրականացրել էին թուրքական պետական բարձրաստիճան մարմինները եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխները: Այստեղ մեծ քանակութեամբ նիւթեր կան, որոնք մերկացնում են կայզերական Գերմանիայի հրէշաւոր դերը հայ ժողովրդի ցեղասպանութեան գործում:

Յիշատակութեան արժանի է նաեւ 1916 թ. լոյս տեսած անգլիացի ակնառու պատմաբան եւ փիլիսոփայ, Լոնտոնի համալսարանի միջազգային յարաբերութիւնների պատմութեան Փրոֆ. Առնոլդ թոյնբիի «Հայկական Սարսափներ» գիրքը, որը շարադրուած է կոտորածների անմիջական ականատեսների հաղորդումների ու վկայութիւնների հիման վրայ:<sup>20</sup>

Հայերի կանխամտածուած եւ ծրագրուած բնաջնջումի մասին Առնոլդ թոյնբիին արձանագրել է հետեւեալ փաստը.

«...Հայերը մերձուզմանակատային դօտու բնակիչներ չէին: Ոչ մի քաղաք կամ գիւղ, որտեղից նրանց ծրագրուած կերպով քշում էին դէպի մահ, չէր գտնուում ռազմական գործողութիւնների թատերաբեմի մօտ: Դրանք բոլորը Անատոլիայի խորքերում էին, հաւասարապէս հեռու եւ կովկասեան սահմանից, եւ Տարտանելից: Նրանք ոչ մի հնարաւորութիւն չունէին համագործակցելու Անտանտի զօրքերի հետ...»:<sup>21</sup>

Մեր օրերի անգլիացի պատմաբաններից մի քանիսը այդ թւում Տէյ-իտ Մարչալ Լանգը, Բրիստոֆըր Ուոքըրը, Տէյվիտ Քուչները 1915 թ. Մեծ Եղեռնի ողբերգութեանը անդրադառնալիս, այն մեկնաբանել են գիտական անաչառութեամբ, օգտագործելով Անգլիայի արտաքին գործերի նախարարութեան արխիւի դեռեւս չհրատարակուած փաստաթղթերը:<sup>22</sup>

Արեւմտահայութեան բռնի տեղահանութեան եւ զանգուածային կոտորածների ընթացքում, իրենց բողոքի ձայնը բարձրացրին նաեւ ռուսական առաջադէմ հասարակութեան ներկայացուցիչները, նրանց թւում Մաքսիմ Կորքին, Վալերի Պրիւսովը, Եուրի Վեյսելսկին, Վլադիմիր Կորզլեվսկին, Անտրէյ Մանտելշտամը եւ շատ ուրիշներ: Նրանցից շատերը ականատեսի աչքով եւ փաստագրական նիւթերի հիման վրայ են նկարագրել երիտթուրքերի կատարած ոճրագործութիւնները:

«Նա տեսայ թէ ինչպէս 1916 թ. ամառը թուրքերը հայերի ամբոխին քշեցին Պիթլիս... գրել է Վ. Կորզլեվսկին, - սարսափելի ողորմելի վիճակում էին հայերը պատառոտուած, հիւժուած: Նրանց դէմքերին արտայայտուած էին սարսափները, որ հենց նոր ապրել էին նրանք... հարկը հազարաւոր անմեղ հայեր թուրքիայում դարձան զազանութիւնների զոհ»:<sup>23</sup>

Ռուս դիւանագէտ, իրաւաբան եւ պատմաբան Անտրէյ Մանտելշտամը 1898-ից մինչեւ 1914-ը եղել է Կ. Պոլսի ռուսական դեսպանութեան առաջին թարգմանը: Արժանահաւատ փաստերով եւ բազմաթիւ վկաների ցուցմունքներով է գրուած նրա «Օսմանեան կայսրութեան ճակատագիրը» խորագիրը կրող աշխատութիւնը:<sup>24</sup> Հաւաստի փաստերով նա դատապարտում է 1915-ի երիտթուրքերի կատարած հրէշաւոր ոճրագործութիւնները հայ ժողովրդի նկատմամբ, ինչպէս նաեւ բացայտում է կայսերապաշտական Գերմանիայի անփառունակ դերը արեւմտահայութեան ցեղասպանութեան իրականացման խնդրում:

Հարկ է նշել, որ հայերի ցեղասպանութեան վերաբերող ռուսական արխիւային նիւթերի մի մասը առաջին անգամ ռուսերէն լեզուով հրատարակեց Ակադ. Մկրտիչ Ներսիսեանը (այս մասին մանրամասն խօսուելու է յետագայ էջերում):

Ահա մի նմոյշ 1915 թ. Յունիս 25 թուագրութիւնը կրող Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Մազոնովին ուղղուած Գահիրէի ռուսական դեսպանի ճեպագրից.

«Միլիայի եւ հարեւան դաւառների հայերի

նկատմամբ կատարուած դատանութիւնները անասելի չափերի են հասնում: Կողոպուտները, բռնութիւնները, կոտորածը եւ յաճախ ամբողջ հայկական գիւղերի բնակութեան գլխովին ոչնչացումը կրկնուած են մշտապէս: Ընտանիքները բաժանուած են անգթօրէն: Կանանց բաժանում են ամուսիններից, երեխաներին՝ ծնողներից, եւ բոլորին աքսոր են ուղարկում տարբեր կողմեր: Առանձնապէս դատանօրէն է հայածուում հայ հոգեւորականութիւնը. քահանաներին տանջում են, կտտանքի ենթարկում, պոկում են նրանց եղունգները...»:<sup>25</sup>

\*\*\*

Ֆրանսիացի պատմաբանները, քաղաքական եւ հասարակական գործիչները նոյնպէս խստագոյն կերպով դատապարտել են արեւմտահայութեան դէմ գործադրուած անլուր հալածանքներն ու բռնութիւնները: Նրանք բազմաթիւ հատորներ են գրել եւ անաչառ զնահատական տուել 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ կատարուած ցեղասպանութեան մասին: Ֆրանսիացի աստուածաբան, փիլիսոփայ Էմիլ Ծումերկը դեռեւս 1916 թ. Յունուարի 16-ին հայանպաստ ճառով հանդէս է եկել Փարիզում, Հայաստանին նուիրուած երեկոյին: 1917 թ. Ֆրանսերէն հրատարակած «Հայաստան, հայկական հարցը եւ կոտորածները» գրքում հեղինակը բերել է հայկական կոտորածների ականատեսների վկայութիւնները:<sup>26</sup>

Ականատեսի անմիջական աչքերով է շարադրուած նաեւ մի այլ Ֆրանսիացի պատմաբան, հրապարակախօս Ռընէ Փինոնի 1916 թ. Փարիզում լոյս տեսած «Հայերի ոչնչացումը. եղանակը՝ գերմանական, գործը՝ թուրքական» վերնագրով փաստագրական գիրքը: Այս գրքում շատ դիպուկ մատնանշուած է.

«Հայերի տեղահանումը, կանանց, երեխաներին եւ ծերերին միայն նենգօրէն քողարկուած մահուան դատապարտում էր: Տեղւոյն վրայ կատարուած կոտորածը աւելի մարդկային կը լինէր: Այն կ'ազատէր մարդկանց դատան տանջանքներից»:<sup>27</sup>

Ֆրանսերէն փաստագրական նիւթերի հրապարակման գործում խիստ կարեւոր ներդրում ունի հայագրի ֆրանսիական պատմաբան Արթուր

Պէյլէրեանը: Նրա «Մեծ տէրութիւնները, Օսմանեան կայսրութիւնը եւ հայերը Փրանսիական դիւաններում (1914-1918 թթ.)» խորագրով գրքում ընդգրկուած է Առաջին Աշխարհամարտի ընթացքում թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում հայերի տեղահանութեան եւ կոտորածների վերաբերող 759 դիւանագիտական զեկուցումների փաստագրութիւնը:<sup>28</sup>

\*\*\*

«Արաքական աղբիւրները հայերին ոչնչացնելու ոնրագործութեան մասին» փաստաթղթերի ժողովածուն արաբերէն լեզուով լոյս տեսաւ Պէյրութում, 1988 թ. հալէպահայ իրաւաբան, պատմաբան Ռուբէն Պօղոսեանի աշխատասիրութեամբ: Այն բաղկացած է 3 մասերից:

Առաջին մասում տրուած են Մեքքայի շերիֆ Հիւսէյն Իպն Ալի ալ Հաշիմիի երկու ուղերձները, ուղղուած աշխարհի բոլոր մահմետականներին, ուր դատապարտուած է երիտթուրքերի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան արաբ եւ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ կատարուած յանցագործութիւնը:

Երկրորդ մասում ընդգծուած է արաբ հասարակական գործիչ եւ գրող (ազգութեամբ թուրք) վալի Ադ-Դին Եաքանիի «Յայտնին եւ Անյայտը» գրքի «Ազատութեան մարտիրոսներ մեր հայ եղբայրների ջարդերը» հատուածը: Նա Օսմանեան կայսրութիւնը բնութագրել է, որպէս ջարդերի երկիր, Առաջինը՝ Դամասկոսի ջարդն է 1860 թուականին: Երկրորդը՝ Պուլկարներինը՝ 1877 թուականին: Երրորդը՝ Հայկական կոտորածները:

Երրորդ մասում բերուած է Ֆայէզ Ղոսէյնի «Ջարդերը Հայաստանի մէջ» ականատեսի աչքով նկարագրուած վկայութիւնը: Այս ընդարձակ վկայութիւնը առաջին անգամ թարգմանուել է արաբերէնից եւ լոյս է տեսել Ֆրանսերէն 1917 թ. Պոմպէյում, այնուհետեւ թարգմանուել եւ հրատարակուել է անգլերէն: Գերմաներէն թարգմանութիւնը լոյս է տեսել 2 անգամ, Յիւրիխում՝ 1918 թ., ֆոտոստամբում՝ 1922 թ.: Այն հրատարակուել է նաեւ հայերէն լեզուով:

Հայերի Յեղասպանութեան վերաբերող արաբական աղբիւրների վերլուծութիւնն ու հիմնաւորումը տրուած է նաեւ Արեւելագիտութեան հիմնարկի տնօրէն Նիկոլայ Յովհաննիսեանի «1915 թուականի Հայոց Յեղասպանութեան հիմնահարցերի լուսաբանումն արաբական պատմագրութեան մէջ» ընդարձակ յօդուածում:<sup>29</sup>

Պարսիկ գործիչները, պատմաբանները եւս խստագոյն կերպով դատապարտել են Հայերի Յեղասպանութիւնը: Այստեղ ես բերելու եմ մի հատուած պարսիկ գրող եւ նովելիստ Մոհամմէտ Ալի Ճամալզատէի վկայութիւնից: Ականատեսի աչքով նկարագրած նրա վկայութիւնը 1987 թ. հայերէն թարգմանեց պարսկագէտ Դոկտ. Հրայր Մովսիսեանը:

«Ես ականատես եղայ մի շարք դաժանաբարոյ տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինուորները հայերի գլխին Առաջին Համաշխարհային Պատերազմի պարիներին եւ որի հետեւանքը, ինչպէս գիտենք, եղաւ միլիոնաւոր հայերի ջարդը... Հարիւրաւոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդէն անգոր էին քայլելու, մտրակի եւ զէնքի ուժով հետիտոն ու անգոր, անխնայ քշում էին առաջ: Տղամարդկանց մէջ երիտասարդներ չկային: Նրանց ուղարկել էին ռազմաճակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին: Ես զարհուրելի օրեր անցկացրեցի, օրեր, որոնք ահռելի մոճաւանջի պէս ծանրացել են հոգուս վրայ: Մոճաւանջ, որ երբեմն տարբեր աւիթներով ճնշում է ողջ էութիւնս, անհանգստացնում ու տանջում է ինձ»:<sup>30</sup>

\*\*\*

Հայերի Յեղասպանութեան վերաբերեալ փաստաթղթերի եւ վաւերագրերի յայտնաբերման եւ հրատարակման գործում չափազանց կարեւոր աշխատանք է կատարել արժանիինհայ իրաւաբան եւ պատմաբան Փասքուալ Օհանեանը: Նա երկար տարիներ հետազօտել եւ պրպտումներ է կատարել Իսպանիայի Արքայական, ինչպէս նաեւ Վատիկանի եւ Իտալիայի քաղաքներում գտնուող արխիւներում: Փ. Օհանեանը յայտնաբերել է ցարդ

անյայտ այնպիսի փաստաթղթեր, որոնք լիովին հաստատում են երիտթուրքերի կատարած յանցագործութիւնները: Յատկապէս արժէքաւոր են նրա 1986 թ. իսպաներէն լեզուով հրատարակած «Թուրքիան ցեղասպան պետութիւն» փաստաթղթերի ժողովածուն, որն ընդգրկում է 524 փաստաթուղթ:<sup>31</sup> Փաստագրական նիւթերով են համալրուած նաեւ իսպաներէն լեզուով լոյս տեսած նրա 5 հատորանի «Հայկական հարցը եւ միջազգային յարաբերութիւնները» աշխատութիւնը:

1999 թ. Լոս Անճելըսում հրատարակուող «Փարոս» երկչաբաթաթերթում պարբերաբար հրատարակուեց Փրոֆ. Գէորգ Նըրոպեանի «Ուրուկուլական մամուլը մերկացնում է թուրք ցեղասպաններին» խորագրով ուսումնասիրութիւնը: Փաստագրական նիւթերով հարուստ այս աշխատասիրութիւնից պարզուած է, որ երիտթուրքերի կազմակերպած Արեւմտահայերի բռնազաղթի եւ զանգուածային կոտորածների ընթացքում, Ուրուկուէյի մամուլը մանրամասն տեղեկութիւններ է հաղորդել եւ ամենայն խորութեամբ մեկնաբանել եւ լուսաբանել է թուրքիայի որդեգրած ազգային դաժան քաղաքականութիւնը քրիստոնեայ հպատակների, յատկապէս հայերի հանդէպ, ընդգծուած է նաեւ, որ հայերի նկատմամբ կատարուող հայածանքները նախապէս ծրագրուած են եղել երիտթուրքերի կուսակցութեան կողմից:

\* \* \*

1966 թ. Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ երեւանում առաջին անգամ լինելով ռուսերէն լոյս տեսաւ «Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագիրը կրող փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուն: Այն Օսմանեան կայսրութիւնում հայերի կոտորածներին վերաբերող փաստագրական նիւթերի առաջին հրատարակութիւնն էր:<sup>32</sup>

Ժողովածուն բաղկացած է 2 մասից: 1) «Հայերի կոտորածները սուլթան Ապտուլ Համիտի (1876-1908) օրօք» եւ 2) «Հայերի զանգուածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909-1918)»: Այս երկու մասերում ամփոփուած են գերազանցապէս արխիւային եւ տարբեր լեզուներով հրատարակուած գիււանազիտական փաստաթղթեր: Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպանու-

Թիւնների եւ հիւպատոսութիւնների իրենց երկրների արտաքին քաղաքական գերատեսչութիւններին ուղղուած գեկոյցներ ու գեկուցագրեր: Այդ գաղտնի փաստաթղթերը բացայայտում են Թուրքիայի կառավարող շրջանների կողմից հայ բնակչութեան զանգուածային ջարդերի եւ բնաջնջման նախապատրաստման ու իրականացման քաղաքականութեան իրական պատկերը:

Նշանակալի տեղ է տրուած եղեռնային իրադարձութիւնների անմիջական ակնատեսների՝ օտարերկրացի ճանապարհորդների, միսիոնարների, լրագրողների, բժիշկների եւայլն: Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն պատրաստ է հրատարակութեան նաեւ 2-րդ հատորը, որը ընդգրկում է 1917-1923 թթ. փաստագրական նիւթերը:

Փաստագրական հարուստ նիւթեր, ակնատեսի վկայութիւններ, վերապրողների հաւաստի յուշագրութիւններ կան նաեւ 1965 թ. Պէյրութում Մեծ Եղեռնի 50-ամեայ տարելիցի առթիւ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան օրկան «Ձարթօնք» օրաթերթի հրատարակած «Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965» խորագիրը կրող ժողովածուի մէջ:

Վաւերագրային խիստ կարեւոր նշանակութիւն ունեն նաեւ հայ վերապրողների յուշագրութիւնները<sup>33</sup> նամակները: Հայ վերապրողների նամակների ժողովածուն 1922 թ. փարիզում հրատարակեց Պետրոս Տոնապետեանը «Ձայն տառապելոց» վերնագրով, որտեղ ընդգրկուած են բունագաղթից եւ կոտորածներից հրաշքով ազատուած տարբեր տարիքի եւ սերի հայ տառապողների թուով 280 սրտամորմոք նամակները:

Ապտուլ համիտեան բունատիրութեան եւ Մեծ Եղեռնի վերաբերեալ փաստագրական աղբիւրների թարգմանութեան եւ հրատարակման գործում մեծ աշխատանքներ են կատարուել Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պատմութեան եւ Արեւելագիտութեան ինստիտուտների պատմաբանների կողմից, որոնց աշխատութիւնները հրատարակուել են առանձին մենագրութեամբ, իսկ գիտական յօդուածների ստուար մասը լոյս է տեսել Արեւելագիտութեան ինստիտուտի հրատարակած «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» մատենաշարի 18 հատորներում:

**Եզրակացութիւն**

Այսպիսով աշխարհի տարբեր երկրների արխիւներում գտնուող վաւերագրական փաստարկները լիովին հաստատում են, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում մէկուկէս միլիոնից աւելի անմեղ հայեր զոհ զնացին երիտթուրքերի կառավարութեան ծրագրած ցեղասպանութեանը:

Այնպէս որ ներկայի թուրքական կառավարութիւնը ժառանգորդն է ու պատասխանատուն կատարուած այդ ծանրագոյն յանցագործութեան եւ պէտք է ճանաչի հայերի Ցեղասպանութիւնը ու արդար հատուցում տայ նրա արեան, հողային եւ նիւթական պահանջատիրութեանը:

1. Տէն Գրիկէր, Եոզղաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւն, Նիւ Եորք, 1980:
2. The Memoirs of Naim Bey, London, 1920:
3. Der prozess Talaat pascha, stengraphischer prozessbericht mit einem Vorwort Armin Wegner und einem Anhang. Berlin, 1921 s. 56. Դատաւարութիւն, Թաւեաթ փաշայի սղաղրական գեկուցում, Վիեննա, Միլիթարեան տպարան, 1921, էջ 90:
4. Տէն 1) Աւետիս Փափազեան, հայերի Ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատաւարութեան փաստաթղթերի, Երեւան, 1988: 2) Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Լոս Անճելըս 1996: 3) Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր), Երեւան, 1999: 4) Ցեղասպանութիւն եւ գոյատեւման պայքար, Երեւան, 2000:
5. Dr. Jofannes Lepsius, Armenian und Europa, Berlin, 1896.
6. Deutschland und Armenien, 1914-1918, Potsdam, 1919.
7. Dr. Jofannes Lepsius, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916, s. 21. Հատուածը քաղուած է Ակադեմիկոս Միլրտիչ Ներսիսեանի խմբագրած՝ «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածուից, Երեւան, 1991, էջ 470:
8. Յ. Լեփսիուս, գաղտնի տեղեկագիր հայկական ջարդերի մասին, Ռընէ Փիւնոնի նախաբանով (Քրանսերէն), Փարիզ, 1918, էջ 259:
9. Quelques documents sur le sort des Arméniens en 1915. Fascicule 111, Genève, 1916, հատուածը քաղուած է Ակ. Միլրտիչ Ներսիսեանի խմբագրած «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածուից, էջ 390:
10. Տէն Armin Wegner and the Armenians in Anatolia 1915. Images and Testimonies, Milano, 2000.
11. Այս գլխի հայերէն թարգմանութիւնը տէս Ռուքէն Սահակեան, Ցեղասպանութեան պատմութիւնից, Երեւան, 1990, էջ 32-104:
12. Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, Garden City, New York, 1918, p. 324.

13. Հերբերդ Ատամս Կիրբոնս, վերջին ջարդերը Հայաստանում. փաստեր եւ պատասխանատուութիւններ, թարգմանութիւն անգլերէնից, Փետրոկրատ 1916 (ռուսերէն):

14. Տէս 1) The Armenian Genocide - First 20-th Century Holocaust, by Richard Diran Kloian, Richmond, CA. 1980. 2) The Armenian Genocide, News Accounts the Armenian Press 1915-1922, University of Berkley, CA. 1985.

15. Տէս Հայերի Յեղասպանութեան նուիրում՝ «Արմիներն Ռեվյու» Երամեսայ Հանդէսի յատուկ թողարկումը. Genocide. Crime against Humanity, essays and documents, 1984, T. 37, No. 1.

16. The Armenian Genocide, compiled and edited by Libarid Azadian, Armen Donoian, Los Angeles, 1987.

17. Տէս Guide to the Armenian Genocide in the USA Archives (1915-1918), 1994.

18. Այս առումով տես The Armenian Genocide in Perspective, eduted by Richard O. Hovhannisian, New Brunswick, New Jersey, 1986.

19. Տէս The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. London, 1916.

20. Arnold J. Toynbee, Armenian Atrocities, The Murder of a Nation, New York-London, 1916.

21. Նոյն տեղում էջ 69:

22. Տէս 1) David Marshall Lang, Armenia. Cradle of civilization, London, 1970, Idem. The Armenians, A people in exile, London, 1981, 2) Christopher J. Walker, Armenia. The Survival of a Nation, London, 1980. 3) David Kishner, The Rise of Turkish Nationalism. 1878-1908, London, 1977.

23. Վ. Գորգելեպսկի, ընտիր երկեր, Մոսկուա, 1962, հատ. 3, էջ 130, (ռուսերէն):

24. Տէս André Mandelstam, Le Sort de L'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917.

25. Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Մկրտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 350:

26. Տէս Emile Doumergue, L'Arménie, les massacres et la question d'Orient, Conférence, études, documents, Paris, 1917.

27. Rene Pinon, La Suppression Armeniens, Methode Allemand, travail turc, Paris, 1916, p. 27.

28. Տէս Les Grandes Puissances L'Empire Ottoman et les Arméniens dans archives Françaises (1914-1918), Recueil de documents, Paris, 1983.

29. Տէս «Պայքար» ամսագիրը, 1995, թիւ 4, էջ 27-33:

30. Տէս «Պատմա-բանասիրական Հանդէսը», Երեւան, 1987, Նոյ. 2 (117), էջ 232:

31. Pascual Ohanian, Turquía, Estado Genocida (1915-1923). Documentos, Tomo 1, Buenos. Aires, 1986.

32. Նոյն նիւթերով ամբողջացած հրատարակութիւնը իրականացուեց 1982 թ., իսկ հայերէնը՝ 1991 թ.: Կազմողներն էին Մկրտիչ Ներսիսեանը եւ Ռուբէն Սահակեանը:

33. Տէս 1) Վերծինջ Ավազեան, Մեծ Եղեռն, Արեւմտահայոց բանաւոր վկայութիւնները, Երեւան, 1995: 2) Ա. Կիրիմեան, պատմում են թուրքական եաթաղանից փրկուածները, (Բանբեր Հայաստանի արխիւների, թիւ 1, 1995, Երեւան):

ՆՈՐ ՕՐ • ԸԱՐԱՅ, ԱՊՐԻԼ 22, 2000

ՆՈՐ ՕՐ • ԸԱՐԱՅ, ԱՊՐԻԼ 29, 2000

# Հայերի Ցեղասպանութիւնը եւ Երիտթուրքերի Դատավարութիւնը

(ՑՕԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Այս տարի լրանում է 1919 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի կառավարութեան եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան բարձրաստիճան գործիչների դատավարութեան 80րդ տարելիցը:

Առաջին Համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ, աշխարհի առաջադէմ մարդկութիւնը, յատկապէս պատմաբաններն ու հրապարակասուները, ստանձին պետական գործիչներ պահանջում էին պատասխանատուութեան ենթարկել եւ դատապարտել արեւմտահայութեան սպանող կազմակերպող թուրք ոճրագործներին:

Դեռևս Հայերի թէժ կոտորածների ընթացքում 1915 թ. Մայիսի 24ին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները Համատեղ նախազգուշացրին Բարձրագոյն Դռանը, որ այդ դաժան արարքները մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ են, որի Համար պատասխանատուութիւնը ընկնում է Բարձրագոյն Դռան վրայ, եւ ովքեր մասնակից են այդ կոտորածներին:

Տեղի տալով ըողբի այս ուժեղ հոսանքին եւ ձգտելով սահմանադատուել երիտթուրքերի վարկաբեկուած վարչակարգից, 1918 թ.

Հոկտեմբերի 30ին, Մուտրոսի զինադադարից անմիջապէս յետոյ, ԱՀմէտ Իզզէթ փաշայի գլխաւորութեամբ (Նոյեմբերի 4ին) կազմուած նոր կարիները որոշում է կայացնում Օսմանեան կայսրութիւնը Առաջին Համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու եւ Հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու Համար դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին, ինչպէս նաեւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներին:

1918 թ. Դեկտեմբերի 16ին, կազմում են Հարցաքննիչ յանձնախմբեր, որոնք սկսում են հատրել արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցներ՝ ծածկագիր-հեռագրեր, նամակներ, հրամաններ, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւններ: Այդ նիւթերը Հետագայում ամփոփուեցին ռազմական արտակարգատեսանի 293 թղթապանակներում:

Կառավարութեան հրամանով ձերբակալուած են երիտթուրքական մի շարք նախարարներ ու կուսակցական պարագլուխներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, զինուորական-

ներ եւ այլ պաշտօնատար անձիք, որոնց ընդհանուր թիւը Հասարակութեան 150ի:

1919 թ. Յունուարի 8ին, Կ. Պոլսում կազմուեցին Առաջին, Երկրորդ եւ Երրորդ ռազմական արտակարգ ատենաները, որոնք սկսեցին մանրամասն Հետաքրննութիւն կատարել զաւանդներու տեղի ունեցած Հայերի տեղահանութեան եւ կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ:

Առանձին լուսեց Եոզղաթի, Տրապիզոնի, Նարբերդի եւ Պէօյուք Տէրէի Հայութեան կոտորածների մեղաւորների դատավարութիւնները եւ կայացուեցին Համապատասխան դատավճիռներ:

Այնուհետեւ 1919 թ. Մարտի 8ին, Սուլթան Մէհմէտ 6րդ Վահիտէտիւնի յատուկ Հրամանագրով, երիտթուրքական կուսակցութեան պարագլուխներն ու նախարարները յանձնուեցին Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատենանի քննութեանը:

Դատաքննութիւնը սկսուեց Ապրիլի 28ին, ուր Հեռակայ կարգով մեղադրուեցին 11, իսկ դատավարութեանը ներկայ 20 կուսակցական ու պետական գործիչներ: Յայտնի է, որ Հայերի կոտորածների անմիջական մտայղացողներն ու կազմակերպողները, այդ թւում՝ Թալէաթը, Ճէմալը, Էնվէրը, տղթթ. Նազըմը, Պէհաէտտին Շաքիրը եւ միւսները Հասցրել էին դիմել փախուստի, մի քանիսը ապաստան գտնելով Գերմանիայում:

Իսկ «Միութիւն եւ Առաջադիմու-

թիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների եւ այլ պաշտօնատար անձանց դատաքննութեան նիստերը տեղի ունեցան Յունիսի 21, 23, 28ին եւ ընդունուեց Համապատասխան դատավճիռ:

Այս դատաքննութիւնների ընթացքում ներկայացուած բոլոր մեղադրական եղբակացութիւններում, ռազմական արտակարգ ատենանի յանձնաժողովները շեշտը դնում են արեւմտահայութեան կոտորածների եւ ունեցուածքի կողպատման մանրամասնութիւնների վրայ: Լիովին բացայայտում է, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականորէն իրականացուել են «Թէշքիլաթը Մահսուէթի» (Յատուկ կազմակերպութիւն) արիւնոտ ձեռքբերով:

Այս բոլորը Հաստատում են Տրապիզոնի Հայերի տեղահանութեան եւ կոտորածի դատավարութեան դատավճռում, որը ընդունուել է 1919 թ. Մայիսի 22ին:

«... Մի շարք յանցագործ, անառակ մարդկանցից եւ նոյն մակարդակի մի քանի ժանդարմներից նրանց կազմած Հրոսակախմբերը իբրեւ թէ ուղեկցելու էին տեղահանուած Հայերի քարաւանները: Մինչդեռ շտապ տեղահանութեան ենթարկուած եւ պաշտպանութեան միջոցներից զուրկ Հայերի քարաւանները քաղաքից Հեռացուելուց յետոյ, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից եւ վերոյիշել յան-

ցագործներից կազմուած չէթէների Հրոսակախմբերը յարձակուելով, կողոպտուել են նրանց իրերը եւ այնուհետեւ աներեւակայելի դաժանութեամբ սպանել եւ բնաջնջել բոլորին...» (Takvim-i Vekayi, 22 Mayıs - 1919, No: 3616):

Ստորեւ բերում ենք նաեւ մի քանի ծածկագիր Հեռագրերի թարգմանութիւնները, քանի որ դրանք լիովին Հաստատում են Հայերի կոտորածի կանխամտածուածութիւնը:

1.- Էրզրումի նահանգապետ Միւնիք պէյը կենտրոնից ստացուած Հրամանի ի պատասխան ուղարկել է հետեւեալ հեռագիրը.

«Քղիի ճանապարհով էրզրումից ուղարկուած Հարուստ Հայերի քարաւանները, յարձակման ենթարկուելով Պէհաէտտին Շաքիր պէյի կազմած Հրոսակախմբերի եւ տերահմցիւնների կողմից, կոտորուել են, իսկ նրանց ունեցուածքը՝ կողոպտուել»:

2.- Պէհաէտտին Շաքիր պէյի էրզրումից Անթալիայի կառավարիչին ուղարկած ծածկագիր Հեռագրում նշուած է.

«Էրզրումի, Վանի, Պիթիսի, Տիարպէքիրի, Սըվազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի Հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մուսուլի եւ Տէր Զօրի կողմերը: Իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում»:

3.- 1915 թ. Մայիսի 4ի թուազրութիւնը կրող, էրզրումից «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Սարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնէլի Նազըմ պէյին ուղղուած

ծածկագիր Հեռագրով Պէհաէտտին Շաքիրը Հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրէք, այդ տեղից ուղարկուող Հայերին զոտու՞մ էք, թէ՞ ոչ: Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարումն ու քարտուումն էք յայտնել, ոչնչացրնո՞ւմ էք, թէ՞ ճամբու էք դնում»:

Այսպէս ուրեմն, դատաքննութեան բոլոր նիստերի ընթացքում նման Հեռագրերով, խաչաձև Հարցաքննութիւններով, մեղադրական այլ գրաւոր ապացոյցներով եւ ակնատեսների վկայութիւններով լիովին բացայայտում է իրականութիւնը, որ տեղահանութիւնն ու կոտորածը վճռուել է կենտրոնական կոմիտէի գաղտնի նիստերից մէկում՝ ձայների մեծամասնութեամբ:

Դժբախտաբար, Հետագայում թուրք յանցագործներին պատժելու գործընթացը աստիճանաբար սառեցուեց, որովհետեւ զաշնակից պետութիւնները ձեռնամուխ չեղան արդարութիւնը բացայայտելու եւ մեղաւորներին պատժելու գործին:

Յայտնի է, որ երիտթուրքերի կառավարութեան 77 պարագլուխներ դեռեւս դատաքննութեան առաջին փուլի վերջում, զաշնակիցներին նախաձեռնութեամբ իբրեւ թէ քարտուեցին Մալթա կղզի: Մեղադրեալների մի մասին Կ. Պոլսի կալանատնից Մալթա կղզի տեղափոխելու փաստը ցոյց է տալիս, որ զաշնակիցները տատանողական դիրքորոշում են ունեցել յանցագործներին դատարանով պատժելու Հարցում: Ֆրեզնոյում Հրատարակուող «Մշակ» թերթը շատ տեղին գնահատական է տուել անգլի-

իացիները այդ երկրեսանի արարքին. «Մալթայի մէջ այդ աքսորականները կերան, խմեցին, յղփացան եւ մէկ-մէկ գործիքներ դարձան Անգլիայի ձեռքին՝ անոր քաղաքական եւ տնտեսական շահերը ապահովելու համար Թուրքիոյ մէջ: Մալթան արդարութեան օճախը չհանդիսացաւ: Մալթան ամօթի եւ նախատինքի համազօր թատերարանը եղաւ միայն»: (Մէջըբերումն արուած է Ճ. Կիրակոսեանի գրքից, տե՛ս «Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ», Հ. 2, էջ 253):

Բոլոր գէպքերում վերոյիշեալ դատավարութեան նիւթերը որոշակի պատմութեան են տալիս արեւմտահայերի տեղահանութեան եւ կոտորածների կազմակերպման ու իրագործման մասին: Եւ իրօք որ պատերազմի աւարտից յետոյ երիտթուրքերի պարագլուխների դատավարութիւնը խոշոր երեւոյթ էր արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացայայտելու տեսանկիւնից:

Ռազմական Արտակարգ Ատեանը 1919 թ. Յուլիսի 5ի դատավճռով Հեռակայ կարգով մահուան դատապարտեց հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպող երիտթուրքական կուսակցութեան պարագլուխներին՝ Թալէաթին, ձէմալին, էնվէրին, տոքթ. Նազըմին, իսկ միւս մեղադրեալներին 10-15 տարիների քստորի եւ բանտարկութեան: Այլ դատավճիռներով մահուան դատապարտուեցին նաեւ Պէհաշտտին Շաքիրը, ձէմալ Ազմին, Նայիլ պէյը:

Սակայն յանցագործները գտնուում էին փախուստի մէջ եւ

դատավճիռը չիրականացուեց:

Այնուհանդերձ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեան նախաձեռնութեամբ, հայ վրիժառուները մէկ առ մէկ հաշուեյարդար տեսան հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների նկատմամբ, Թալէաթը սպանուեց Սողոմոն Թէշիրեանի ձեռքով 1921 թ. Մարտի 15ին, Պերլինում: Ձէմալը սպանուեց Պետրոս Տէր Պողոսեանի եւ Արտաշէս Գէորգեանի ձեռքով, 1922 թ. Յուլիսի 25ին, Թիֆլիսում: Պէհաշտտին Շաքիրը եւ ձէմալ Ազմին սպանուեցին 1922 թ. Ապրիլի 17ին, Պերլինում, Արամ Երկանեանի եւ Արշաիր Շիրականի կողմից: Մինչ այդ Արշաիր Շիրականը ահաբեկել էր մեծ վեզիր Սալիտ Հալիմ փաշային՝ 1921 թ. Դեկտեմբերի 6ին, ձոռում:

\* \* \*

Հարկ է նշել, որ այս դատավարութեան արձանագրութիւններն ու որոշումները 1919-20 թուականներին շատ քիչ տպաքանակով հրատարակուեցին թուրքական պաշտօնական «Թաքվիմ-ի վերայի» (Իրադարձութիւնների Օրացոյց) թերթի յաւելումներում:

Երախտագիտութեամբ պիտի նշենք, որ այդ փաստաթղթերը Հայաստանի կենտրոնական պատմական արխիւին է յանձնել Ֆրանսահայ հասարակական գործիչ՝ Կարպիս (Ռոմէ) Ջրբաշեանը: Որպէս օսմանագէտ-պատմաբան, այդ նիւթերի թարգմանութիւնը առաջաբանով եւ ծանօթագրութիւններով, առաջին անգամ լինելով հրատարակեցինք 1988 թ. Երեւանի Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտում: Մինչ այդ, ոչ ոք չէր զբաղուել այդ գործով:

«ԱՍՊԱՐԷՁ», ԾԱԲԱԹ, 9 ՀՈՒՆՅԱՆՄԱՐԻ 1999

# ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

ԳԻՐԸ Բ.

Հեղինակ՝ ԼԻՊԱՐԻՏ ԱԶԱՏԵԱՆ  
Գրախօսեց՝ ԱԻԵՏԻՍ ՓՈՓՈԶԵԱՆ

«Մեծ Եղեռնէն վերապրող այն որբերուն, որ կրցամ հայ մնալ, հայ ապրիլ եւ մոր ծիլեր արձակել»  
(Յեղիմակի Չօնը):

1999 թ. Սեպտեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում տեղի ունեցաւ Լիպարիտ Ազատեանի «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» աշխատասիրութեան երկրորդ գրքի շնորհանդէսը: Այն նախաձեռնուած էր ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ֆադէյ Սարգսեանի կողմէ: Ներկայ էին հայրենի ծանաչուած գիտնականներ, պատմաբաններ, մտաւորականներ, ինչպէս նաեւ այս առիթով Երեւան հրաւիրուած Տէր եւ Տիվ. Լիպարիտ եւ Սեղա Ազատեանները:

Այդ օրերին, մամուլից տեղեկացանք որ շնորհանդէսը անցել էր պատշաճ մակարդակով եւ ըստ արժանւոյն բարձր գնահատուել կատարուած աշխատանքը:

Օրինակ, հետեւեալ տպաւորիչ խօսքերով էր սկսուած «Հայաստանի Հանրապետութիւն» թերթում լոյս տեսած լրագրող Արմենուհի Մելքոնեանի այս գրքի շնորհանդէսին նուիրուած «Ես մեծ ազգի մը զաւակն եմ» խորագիրը կրող յօդուածը:

«Գիրքը հենց այնպէս չի ծնունդ: Գիրքը տաղանդի, ամբողջ գիշեր-մերի, աշխատասիրութեամբ ու տխուհի արդիւնք է: Գրքից յոգնած աչքերի արցունքի համ ու քրտնախի հետ է գալիս, որ յաճախ չենք գգունալ:»

Շնորհանդէսից յետոյ Միծեռնակաբերդի ցեղապանութեան թանգարանի տնօրէն Փրոֆ. Լավրենդի Բարսեղեանը առաջարկել է Լիպարիտ Ազատեանին «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» թեմային վերաբերող արխիւային բոլոր նիւթերը յանձնել թանգարանին:

Բնականաբար Լիպարիտ Ազատեանը համաձայնուել է այդ առաջարկի հետ, նշելով որ ինքը երբեք յաւակնութիւն չունի յայտարարելու թէ հայ որբերին վերաբերող ուսումնասիրութիւնը աւարտուած է: Այն պէտք է շարունակուի այլ հետազոտողների կողմից, որովհետեւ դեռեւս կան բազմաթիւ արխիւային նիւթեր:

Ահա, այս շահեկան գրքի շնորհանդէսն է, որ տեղի է ունենալու 2000 թ. Մարտի 19-ին, այս անգամ Լոս Անճելըսի հայահոծ գաղութում:

\*\*\*

Լիպարիտ Ազատեանի «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» աշխատասիրութեան առաջին գիրքը լոյս տեսաւ 1995 թ. Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցի օրերին եւ նոյնպէս ըստ արժանւոյն գնահատուեց թէ հայրենիքում եւ թէ Սփիւռքում: Առաջին հատորը բովանդակում է Մեծ Եղեռնից յետոյ սնկի նման աճած հայ որբանոցների համապարփակ պատմութիւնը, ուր Լիպարիտ Ազատեանը բարձր էր գնահատել հայրենի եւ օտար բարեգործական կազմակերպութիւններին, բարերարներին, որոնց ջանքերով վերապրեցին հազարաւոր հայ որբեր:

Երկրորդ հատորում հեղինակը շեշտը դրել է հայ որբերի վկայութիւնների եւ ակնանատեսի աչքով պատմած նրանց ահաւոր տառապանքների եւ դժուարին, անմարդկային պայմանների մասին: Հակառակ ձեռք առնուած միջոցներին, նրանցից շատերը բռնի թրջացան, քրտացան ու արաբացան: Ըստ հեղինակի բնութագրութեան այդ բոլորի հետեւանքը անմեղ, անգիտակից երեխաների ահաւոր ազգափոխութիւնն էր:

Այս մասին են խօսում գրքում յաջորդաբար բերուած հետեւեալ գլուխները:

- 1) Հայ որբերու հաւատափոխութիւնը եւ թրջացումը:
- 2) Քիւրտերը եւ հայ որբերը:
- 3) Արաբներն ու հայ որբերը:
- 4) Հայ որբերու վաճառք:
- 5) Հայ որբերը գեղարուեստական գրականութեան մէջ:

Գիրքը ամբողջացած է առաջաբանով, վերջաբանով եւ մատենագիտական ծանօթագրութիւններով:

Գրքի խմբագիրն է Ստեփան Ալաջաջեանը: Նա բարձր գնահատելով Լիպարիտ Ազատեանի այս հատորը նշում է, որ կատարուած աշխատանքը համբերութեամբ, բծախնդրութեամբ օժտուած մարդու աշխատանք է:

Ի միջի այլոց Ստեփան Ալաջաջեանը դեռեւս առաջին գրքի վերջում, անարգանքի սիւնին գամելով թուրքական կառավարութեան եւ պատմագրութեան ուրացումներն ու խեղաթիւրումները նշում է.

«Ցեղասպանութեան հետեւանքը չէ՞ իրենց հայրենի տներում հանդարտ ապրող երեխաների մէջ քանի ամսում որբ դառնալը, ցեղասպանութեան հետեւանքը չէ՞ օտար երկրներում

անհամար որբանոցների հիմնադրուելը: դրանցից աւելի ի՞նչը կարող է ապացոյց լինել, որ եղածը ցեղասպանութիւն էր, եւ ցեղասպանութիւնից ճողոպարած որբերը Աստծոյ, բարի ազգերի ու մարդկանց շնորհիւ կարողացել են մեծանալ, ընտանիք կազմել, աճել ու սերունդներ աճեցնել բոլոր ցամաքամասերի վրայ»:

Վերոյիշեալ գլուխներին զուգընթաց հեղինակը բերել է բազմաթիւ վկայութիւններ եւ եղելութիւններ Մեծ Եղեռնի հայ որբերի դաժան ճակատագրի վերաբերեալ:

Ահա մի հատուած Մեծ Եղեռնից հրաչքով փրկուած մի հայ աղջկայ Արշալոյս Մարտիկեանի վկայութիւնից.

«Երկրորդ օրը, ճանապարհին, հանդիպեցինք մի խումբ թուրք հեծեալ ասկերանների, որոնք ուղեկցում էին յարմարուէտ, լաւ ծածկուած մի քանի կառքերի, այդպիսիք ունենում էին միայն հարուստ թուրքերը: Այս կառքերում նստած էին 40 թուրք հանրմներ (տիկիներ), որոնք ասկերանների ուղեկցութեամբ գնում էին էրզրում, միանալու բերդերում ծառայող իրենց բարձրաստիճան ամուսիններին: Նրանք եկել էին Դամասկոսից, Պէյրուսից եւ Հալէպից: Երբ մեր քարաւանը մօտեցաւ նրանց, հանրմների կառքերը կանգ առան: Ասկերանները հրամայեցին մեր պահակներին նոյնպէս կանգ առնել: Յետոյ մենք տեսանք, որ կառքերից մի քանիսի մէջ կային մանկահասակ հայ աղջիկներ. ութից տասներկու տարեկան, բոլորն էլ շարուստ ընտանիքի երեխաներ: Նրանցից մի քանիսը վարագոյրների ետեւից թափահարում էին իրենց

փոքրիկ ձեռքերը՝ հասկացնելով մեզ որ իրենք հայ երեխաներ էին: Իւրաքանչիւր կառքի մէջ տեղաւորել էին վեցից տաս աղջիկ. Հանրմների կառքերի դասաւորութիւնն այնպիսին էր, որ մեր տեսողաշտից թաքցնում էին աղջիկների կառքերը:

«Փոքրիկ աղջիկները մեզ ասացին, որ իրենք Ուրֆայից եւ Հալէպից էին, նրանց ծնողներին եւ հարազատներին կոտորել էին, իսկ իրենց յանձնել այս հանրմներին, որոնք, ինչպէս իրենք հասկացել էին, նպատակ ունէին իրենց տեղաւորելու էրզրում մահմետական դպրոցում. յետագայում, երբ չափահաս դառնան, վաճառելու էին հարուստ թուրքերին: Այժմ մի մասին հանրմները կը պահեն որպէս աղախիներ կամ կը վաճառեն անմիջապէս, տեղ հասնելուն պէս» (էջ 55):

Ես դիտումնաւոր ընտրեցի վերոյիշեալ հատուածը, որովհետեւ գրքի յետագայ էջերում բերուած է հօրեղբորս դուստր Թագուհի Մանուկեանին վերաբերող իմ «վկայութիւն» որը սերտօրէն առնչուում է Արշալոյս Մարտիկեանի հաղորդած փաստի հետ:

Այսպէս, «թուրքական բանակի սպայ, հօրեղբայրս Աւետիս Զաւուչը Մեծ Եղեռնի օրերին նենգաբար սպանւում է թուրք հրամանատարութեան կողմից: Նրա կինը Մարիցան զոհ է գնում աքսորի ճանապարհին:

Իրենց միմուճար 5 տարեկան սիրասուն աղջնակը որբանալով, սկզբում յայտնուում է թուրքերի ձեռքին, իսկ յետոյ նրան վաճառում են երեխայ չունեցող արաբ մեծահարուստ մի ընտանիքի՝ Դամասկոսում: Բարեբախտաբար կարճ ժամանակամիջոցում հայրս, Համբարձում Փափագեանը կարողանում է գտնել իր եղբոր

միակ ժառանգի հետքերը: Մի կողմից տեղի հայ առաջնորդարանի ներդրած եռանդուն միջնորդութեամբ, միւս կողմից հօրս թափած ջանքերի շնորհիւ (դատարան, կառաք...), կարողանում են նրան ազատել: Այնուհետեւ, հայրս պահում եւ մեծացնում է իր եղբոր աղջկան մեր յարկի տակ, որպէս իր հարազատ գաւակը» (էջ 235):

Եզրակացնենք: Ինչպէս նշուեց վերեւում, «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» այս երկրորդ գրքում Լիպարիտ Ազատեանը հիմնականում բերել է չափահաս որբերի տառապանքներով լի պատմութիւնը, թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ մեծացան, որպէս թրջացած, քրտացած ու արաբացած հայեր: Նրանցից շատերը պահպանեցին իրենց ազգային ոգին եւ կրկին վերադարձան իրենց ժողովրդի ծոցը, դառնալով նշանաւոր դէմքեր, տաղանդաւոր գրողներ եւ բանաստեղծներ:

Անխոնջ հեղինակը այսօր էլ անհատում եռանդով ու խորը հաւատքով շարունակում է իր հետազօտութիւնները օտար եւ հայրենի արխիւների մէջ Մեծ Եղեռնի որբերի վերաբերեալ նոր նիւթեր եւ տեղեկութիւններ յայտնաբերելու եւ պատրաստելու Յորդ հատորի հրատարակութիւնը:

Այս առումով բարձր գնահատելով կատարուած աշխատանքը, բարեմաղթում ենք Լիպարիտ Ազատեանին քաջաւորջութիւն եւ ստեղծագործական նորանոր յաղողութիւններ:

ՆՈՐ ՕՐ • ՀԱՐԱԹ, ՄԱՐՏ 18, 2000

---

**ՆՈՐ Հայաստան Օրաթերթ**

**ՄԱՐՏ 11, 2000**

---

ՆՈՐ ԿԵԱՆՔ, ՄԱՐՏ 9, 2000

# ԿԱՅ ՈՐԲԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ



ԳԻՐԻՔ ԵՐԿՐՈՐԴ

## ԼԻՊԱՐԻՏ ԱԶԱՏԵԱՆԻ «ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ» ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ԾՆՈՐՀԱՆԴԷՍԸ

Գրեց՝ ՓՐՈՖ. ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Մարտի 9-ին, Մաշտոց Գոլջէի տնօրէնութեան կազմակերպութեամբ, Գլենդէլի Church of the Brethren եկեղեցում տեղի ունեցաւ Լիպարիտ Ազատեանի «Հայ Որբերը մեծ եղեռնի» երկրորդ գրքի շնորհանդէսը:

Գիրքը ներկայացրեց ՀՀ Գիտութիւնների ազգային Ակադեմիայի արեւելագիտութեան ինստիտուտի աշխատակից՝ պատմաբան Աւետիս Փափազեանը:

Այնուհետեւ, սրտառուչ եւ դրուատանքի խօսքերով ելոյթ ունեցան Դոկտ. Փրոֆ. Գէորգ Խուրբեանը, Armenian Observer թերթի խմբագիր Օշին Քէշիշեանը:

Գեղարուեստական բաժնում ներկաները բուն ծափահարութիւններով բարձր գնահատեցին ամուսնոջ Նունէ Աւետիսեանի գրքից ընտրուած հատուածների ընթերցանութիւնը: Հանրածանօթ երգչուհի Սալբի Մայիլեանը իր հնայիչ ձայնով կրկին գերեց հանդիսականներին «Արաքս», «Ատանայի ողբը» եւ «Հայաստան» ժողովրդական երգերով: Գեղագիտական բարձր մակարդակով հնչեց նաեւ Հայաստանի ժողովրդական արտիստ՝ դուդուկահար Մկրտիչ Մալխասեանի կատարմամբ «Հովերն ընկան», «Ինձ մի խնդրիր» մեղեդիները, Ռուբէն Յովհաննիսեանի նուագակցութեամբ:

Ներկաները, մեծ հտաքրքրութեամբ եւ յուզմունքով դիտեցին 1999 թ. Սեպտեմբերի 15-ին Երեւանում կազմակերպուած ակադեմիական շնորհանդէսի տեսագրութիւնից հատուածները:

Այս խիստ շահեկան եւ յիշարժան միջոցառումը աւարտուեց Լիպարիտ Ազատեանի շնորհակալական եւ բարի մաղթանքների խօսքերով:

Շնորհանդէսի յայտագիրը մեծ հմտութեամբ վարեց Մաշտոց Գուէճի տնօրէն Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը:

Ստացուած են նաեւ երկու գնահատական նամակներ, մէկը՝ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայէն եւ երկրորդը պատմաբան Դոկտ. Անդրանիկ Զէյնպեանէն:

\*\*\*

1915 թ. Երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով Արեւմտահայութիւնը կանգնեց ի սպառ ոչնչացման վտանգի առջեւ: Նիւթական հսկայական կորուստի հետ մէկտեղ հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից, Արեւմտեան Հայաստանից տալով մէկուկէս միլիոնից աւելի անմեղ զոհեր:

Այսօր 2000 թուականն է եւ Ապրիլի 24-ին լրանում է հայ ժողովրդի նկատմամբ գործադրուած այդ ծանրագոյն ողբերգութեան 85-րդ տարեկիցը:

«Ամենուրեք սկսեցին հաւաքել հայերին, գրել է այդ դէպքերին ժամանակակից թուրք լրագրող եւ պատմաբան Մեվլան Ջադէ Ռիֆաթը, - նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին: Նրանց, ովքեր ընդունում էին մահմեդականութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւսներին խմբերով, ժանդարմների հսկողութեան ներքոյ ուղարկում էին նախատեսուած ճանապարհներով» (Türkiye inkilabının iç yüzü, Halep, 1929, s. 108):

Այնուհետեւ այդ անգէն ու անպաշտպան քարավանները, մարդկանց տեսողութիւնից հեռու, ամառի վայրերում ենթարկւում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծուած «թեքթիլաթ»-ը մահուսէ»-ի (յատուկ կազմակերպութեան) հրոսակախմբերի յարձակմանը: Իսկ հրաշքով ազատուածները, ծայրաստիճան հիւժուած եւ ոսկրացած ուրուականների նման յայտնւում էին Միջազգային եւ Միջազգային անպատենքում:

Եւ որբեր, որբեր, հայ որբեր ամէնուր, սոված, ծարաւի, մերկ ու կիսամեռ, մահուան դուռն հասած հայ խլեակներ:

Ահա, եղեռնի ընթացքում մահուան դուռն հասած, միւս կողմից էլ հրաշքով փրկուած ու վերապրած հազարաւոր հայ որբերի մասին է Լիպարիտ Ազատեանի 1999 թ. հրատարակուած «Հայ որբերը մեծ եղեռնի» աշխատասիրութեան երկրորդ գիրքը: Նշենք, որ այս շահեկան աշխատութեան առաջին գիրքը լոյս տեսաւ 1995 թ. մեծ եղեռնի 80-րդ տարեկիցի օրերին եւ ըստ արժանւոյն գնահատուեց թէ՛ հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում: Այս 2 հատորներն էլ Լիպարիտ Ազատեանի երկար տարիների տքնաջան եւ դժուարին աշխատանքի արդիւնքն են, որոնք կատարուած են հայրենասիրական մեծ նուիրումով եւ բծախնդրութեամբ, որովհետեւ ինքն էլ, իր ժամանակին մանուկ հասակից կորցնելով իր հօրը, ճաշակել է որբի դառը ճակատագիրն ու զրկանքները:

«Հայ որբերը մեծ եղեռնի» աշխատութեան առաջին գրքում տրուում է մեծ եղեռնից յետոյ սնկի նման աճած հայ որբանոցների համապարփակ պատմութիւնը: Յատկապէս Լ. Ազատեանը ըստ արժանւոյն գնահատել է հայրենի եւ օտար բարեգործական կազմակերպութիւններին, բարերարներին, որոնց ջանքերով վերապրեցին հազարաւոր հայ որբեր:

Այս երկրորդ գրքում հեղինակը շեշտը դրել է հայ որբերի վկայութիւնների եւ ականատեսի աչքով պատմած նրանց տառապանքների եւ դժուարին պայմանների մասին: Հակառակ ձեռք առնուած միջոցներին, նրանցից շատերը բռնի թրջացան, ջրտացան ու արաբացան: Ըստ հեղինակի բնութագրութեան այդ բոլորի հետեւանքը անմեղ, անգիտակից երեխաների ահաւոր ազգափոխութիւնն էր: Ահա այս առումով հեղինակը գրքի այս երկրորդ հատորը ձօնել է «մեծ եղեռնէն» վերապրող այն որբերուն, որ կրցան հայ մնալ, հայ ապրել եւ նոր ծիւեր արձակել»:

Գրքում յաջորդաբար խօսուում է հետեւեալ գլուխների մասին.

- 1) Հայ որբերու հաւատափոխութիւնը եւ թրքացումը
- 2) Քիւրտերը եւ հայ որբերը
- 3) Արաբներն ու հայ որբերը
- 4) Հայ որբերու վաճառք
- 5) Հայ որբերը գեղարուեստական գրականութեան մէջ:

Գիրքը ամբողջացած է առաջաբանով, վերջաբանով՝ եւ մատենագիտական ծանօթագրութիւններով:

Վերոյիշեալ գլուխներին զուգընթաց հեղինակը բերել է բազմաթիւ վկայութիւններ եւ եղելութիւններ մեծ եղեռնի հայ որբերի դաժան ճակատագրի վերաբերեալ:

Գրքի խմբագիրն է Ստեփան Ալաջաջեանը:

«Այս ազնիւ ձեռնարկի առթիւ» վերնագրի տակ գրուած իր ներածականում, ըստ արժանուոյն գնահատելով Լիպարիտ Ազատեանի այս երկրորդ գիրքը, նշում է հետեւեալը.

«Բարեխիղճ ու հետեւողական աշխատանքով գրուած այս գիրքը մէկ անգամ եւս պատմում է հարիւր հազարաւոր հայ մանուկների մասին, որոնք որբանոցներ ընկնելու բախտն անգամ չունեցան, այլ ընկան իրենց լեզուին ու իրենց ծնողական քնքշանքին անծանօթ, իրենց լսած օրօրոցային երգերին շատ անհարազատ, իրենց ընաշխարհին շատ օտար միջավայրի մէջ, այսինքն՝ օտարացան...»

«Այս գրքում հպարտութեամբ է արձանագրուած նաեւ այն, որ երէկուայ որբը իբրեւ մարդ եւ իբրեւ հայ, աշխարհի ո՞ր կողմում էլ ապրեց, կազմեց ընտանիք, դարձաւ այդ երկրի պարկեշտ քաղաքացին, ուր մեծացաւ, աշխատեց, ծառայեց, բայց չմոռացաւ իր ազգային աղէտի պատմութիւնը, որի ապրող վկաներից մէկն էլ ինքն է»:

«Հայ որբերու հաւատափոխութիւնը եւ թրքացումը» ընդհանուր խորագրի տակ Լիպարիտ Ազատեանը փաստացի տուեալներով ցոյց է տալիս, թէ ինչպիսի նենգ միջոցների են դիմել անչափաճաս հայ երեխաներին թուրքացնելու ծրագիրը իրականացնելու համար:

Նշենք, որ բռնի մահմեդականացման եւ թրքացման քաղաքականութիւնը նորութիւն չէր օսմանեան կայսրութիւնում: Այն գործադրում էր միջնադարից սկսած պատերազմների, գերեվարութեան, մանկահաւաքի, ծանր հարկապահանջութեան քողի տակ, եւ այդ քաղաքականութեան իրականացման համար գործադրում էր ամէն տեսակի բռնութիւն:

Հարկ է նշել, որ մեծ եղեռնի ընթացքում որբացած հայ երեխաներին հաւաքելու, մահմեդականացնելու եւ թրքացնելու գործում, մեծ դեր են խաղացել թուրքական 4-րդ բանակի հրամանատար շեմալ փաշան, երիտթուրքական հանրայայտ կին գործիչ Հալիդէ էդիպը եւ ուրիշներ Չնայած իրենց աշխատութիւններում-յուշագրութիւններում ձգտել են այն թիւր պատկերացումը ստեղծել, որ հայ եւ թուրք որբերի անխտիր հաւաքագրումը թուրքական որբանոցներում իբր մարդասիրական բնոյթ է ունեցել: Իրականում դրանք կեղծ են եւ մտացածին: Հայ որբ երեխաներին մահմեդականացնելը, նրանց անունները փոխելն ու թուրքացնելը իր հիմքում ունեցել է մէկ նպատակ. հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականութիւնը: Նոյնիսկ Սիրիայի տարածքում գտնուող որբանոցներում հայ երեխաների նկատմամբ կատարուող դաժանութիւններն ու բռնութիւնները, հաւատափոխութիւնն ու պարտադիր թուրքացումը նկատելով, Հալիդէ էդիպի նման մոլեռանդ թրքուհին անգամ չի թաքցրել իր նողկանքը այս ողբերգական երեւոյթի հանդէպ, ասելով, որ «ինքը երբեք չէր ցանկանայ նման որբանոցի հետ գործ ունենալ»: (Memoire of Halide Edib, New York, London, p. 428):

Մեծ եղեռնի յաջորդած տարիներին

հայ ժողովրդի յարատեւման համար խիստ կարեւոր եւ կենսական հարցերից մէկը որբահաւաքի խնդիրն էր: Այս խնդրում եւս եղել են թէ հայ եւ թէ օտար նուիրեալներ, բայց հայ գործիչները առաւել տենդագին, առաւել հետեւողական դեր են խաղացել: Աչքի առաջ ունենալով ամէն մի վտանգ փորձել են ազատել եւ կրկին իր ժողովրդի գիրկը վերադարձնել հայ որբ երեխաներին:

Լիպարիտ Ազատեանը մանրամասն անդրադառնալով այս հարցին գրում է. «Հայկական ազգային եւ այլ հաստատութիւններ իրենց կարողութեան համեմատ սատար հանդիսացած են որբահաւաքի աշխատանքներուն, յատկապէս անհատներ, որոնք իրենց կեանքի գնով, նետուած են այս սուրբ գործին եւ հայ մանկիկներ փրկած ու վերադարձուցած հայութեան»:

Յայտնի ֆիդայի, Սեբաստացի Մուրադը, 1916-ին Երզնկայի մէջ, կայծակ Առաքելի հետ՝ «որոնող խմբեր» է կազմում եւ բազմաթիւ երեխաներ ու այրիներ ազատում թուրքերի եւ քիւրտերի տներէ, «մէկ հայ՝ մէկ ոսկի» նշանաբանով:

Որբահաւաքի գործում խիզախ գործունէութիւն է ունեցել Ջէյթունցի գերդաստանի գաւակ Փառնակ Շիշիկեանը, նոյն ինքը է՛հմէդ էլ Ճեզզան, որը Սիրիայի անապատի մէջ ուղտերի հովիւ էր: Իր ձեռներէցութեամբ եւ անվեհեր արարքներով աստիճանաբար մեծ համբաւ ձեռք բերելով, անապատային արարների եւ պետական պաշտօնեաների մօտ ազատել եւ իր ժողովրդին էր վերադարձրել աւելի քան 600 որբեր:

Այդ օրերին հայ երեխաներին հաւաքելու եւ Հալէպ տեղափոխելու դժուարին գործին անձնուիրաբար լծուել են նաեւ Ջէյթունցի Եղիա Ալաջաջեանը (անուանի գրող Ստեփան Ալաջաջեանի հայրը), Աբրահամ Շիշմանեանը, Աբրահամ Ղուրտեանը, Սիմանեան եղբայրները, Հալէպցի՝ Միհրան Միհրանեանը, Մուսուլից՝

Սիւլինազ Դանիէլեանը, Ուրֆայից՝ Խաթուն, էմիրզէ եւ Լուսիա Բեթենճեանները ամբողջ գերդաստանով:

Լիպարիտ Ազատեանը նշում է, որ որբահաւաքի աշխոյժ գործիչներից մէկն էր նաեւ Ռուբէն Հերեանը: Նա «Միջագետքի հայ տարագրերի պաշտպան մարմնում» խիստ պատասխանատու եւ կարեւոր դեր էր կատարում, եւ արբը պետեւիի տարագի տակ անապատում հաւաքում էր հայ որբերին:

Հայ որբերին հաւաքելու, պատսպարելու եւ խնամելու խնդրում մեծ աշխատանքներ են կատարել զանազան կազմակերպութիւններ, միութիւններ, հիմնադրամներ, ընկերութիւններ: Գրքում բերուած փաստերը ցոյց են տալիս, որ մեծ թուով հայ կամ օտար անհատներ, մարդասիրական մղումով արդիւնաւէտ աշխատանքներ են տարել որբանոցներ հիմնելու եւ փրկելու հայ որբուկներին մահուան ճիրաններից:

Մենք այսօր խորը երախտագիտութեամբ պիտի յիշենք եւ մեր յարգանքի տուրքը մատուցենք հայ եւ հայասէր այն օտար գործիչների յիշատակին, որոնք անձնուիրաբար պայքարեցին, հաւաքեցին եւ խնամեցին մեծ եղեռնի հայ որբերին, որպէսզի նրանք ապրեն, հայեցի դաստիարակութիւն ստանան, արհեստներ սովորեն, մասնագէտներ դառնան եւ ծառայեն իրենց ժողովրդին:

Ստորեւ ես հպարտութեամբ պիտի յիշատակեմ նրանցից մի քանիսի անունները, որոնք սրտամօտ եւ սրբութիւն են իւրաքանչիւր հայի համար:

Նախ պիտի նշեմ մի շարք հայ անուանի բանաստեղծների, մտաւորականների քաղաքական եւ հասարակական գործիչների անունները, որոնք ամբողջովին նուիրուեցին հայ որբերի փրկութեան վեհ գործին: Ահա նրանք. Յովհաննէս Թումանեան, Վահան Թէքէեան, Ջապէլ Եսայեան, Արամ Մանուկեան եւ շատ ու շատ ուրիշներ: Ի

միջի ալլոց գրքի սկզբում բերուած Արամ Մանուկեանի 1918 թ. Հոկտեմբեր 7 թուազրուած թիւնը կրող կոչը հայ ժողովրդին, շատ խօսուն է եւ խիստ կարեւոր փաստաթուղթ հայ որբերի ծանր վիճակի մասին:

Շատ են ամերիկացի եւ եւրոպացի նուիրեալներ, միսիոնարներ, քոյրերի թիւը, որոնք հարկը հազարներով հայ որբեր փրկեցին: Նրանցից շատերը իրենց փրկարար աշխատանքի ընթացքում նոյնիսկ զոհ գնացին վարակիչ հիւանդութիւններից, համաճարակից եւ զանազան արկածներից:

Հայ որբերի պատմութեան մէջ իրենց իւրաւատուէկ պատուոյ տեղն ունեն Տանեմարքացի 3 խնկելի անուններ՝ Օր. Քարէն Եփփէն, որը ամբողջ իր կեանքը նուիրեց հայ որբերին եւ այսօր Հայկէսի հայկական վարժարանը կոչուում է «Քարէն Եփփէ» ճեմարան անունով: Տանիմարքուհի Օր. Մարիա Ճէյքըպսընը, Քարէն Փեթերսոնի հետ միատեղ լեռնային Լիբանանի Զուք գիւղում եւ այնուհետեւ Բէյրութի մօտակայքում գտնուող Ճիպէյլ գիւղում հիմնեցին «Թուչնոց Բոյն»ը:

Շուէտուհի - Ալմա Եոհանսոնը  
Էսթոնուհի - Հեղուիկ Պիւլը  
Սկովտիացի - Ակնէս Սալմընը  
Շուէյցարեացի - Յակոբ Քիւնձլերը,  
որը կոչուեցաւ «Հայ որբերու հայր»:

Եւ վերջապէս մեծ հայասէրներ եւ այնպիսի հեղինակաւոր անձինք, ինչպիսիք էին Դոկտ. Յովհաննէս Լեփսիուսը, Ճէյմս Բրայսը, Արնոլդ Թոյնըն, Ֆրիտհոֆ Նանսէնը եւ այլ շատ նուիրեալներ:

Ի միջի ալլոց, Ազգերի Լիգայի ներկայացուցիչ մեծ մարդասէր ու հայասէր Ֆրիտհոֆ Նանսէնը, 1925 թ. Յունիս 22-23-ին երբ մարդասիրական առաքելութեամբ այցելում է Գիւմրիի որբանոցները, հետազայում գրել է հետեւեալը.

«Հայաստանի մէջ տեսայ աշխարհի ամենամեծ որբ երեխաներու հաւաքը: Այցի երջանիկ

պահերէն մէկն էր, նստիլ փրկուած հայ երեխաներու հետ ու միասին ճաշակել որբի սնունդը ապուրն ու հացը»:

Ինչպէս նշուեց վերեւում, այս երկրորդ հատորում Լիպարիտ Ազատեանը հիմնականում բերել է չափահաս որբերի տառապանքներով լի պատմութիւնը, թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ մեծացան, որպէս թրջացած, քրտացած ու արտաքցած հայեր: Նրանցից շատերը պահպանեցին իրենց ժողովրդի ծոցը, դառնալով նշանաւոր դէմքեր, տաղանդաւոր գրողներ եւ բանաստեղծներ: Ահա նրանցից մի քանիսի անունները. Երջանկայիշատակ Կ. Պոլսոյ պատրիարք Շնորհք Գալուստեանը, մեծանուն գիտնական Էզրաս Հասրաթեանը, համաշխարհային ճանաչման արժանացած ոսկրային վիրարոյժ Համբարձում Քէքլիքեանը, Փրանսահայ բարերար Նափոլէոն Պիւլիքեանը, եւ վերջապէս Անդրանիկ Մառուկեանը, Վաղարշակ Նորենցը, Նայիրի Զարեանը, Արամ Հայկազը, Լեւոն Զաւէս Սիւրմէլեանը, Գուրգէն Մահարին եւ շատ ու շատ ուրիշներ:

Եզրակացնելով. նախ պիտի շնորհաւորեմ Լիպարիտ Ազատեանին այն բանի համար, որ այս երկրորդ գրքի առաջին շնորհանդէսը տեղի ունեցաւ Հայաստանում, գիտութիւնների ազգային Ակադեմիայում 1999 թ. Սեպտեմբերի 15-ին, ուր դրուատանքի ու գովասանքի խօսքեր ասեցին հեղինակի հասցէին իր ներկայութեամբ:

Հակառակ իր առաջացած տարիքին, Լիպարիտ Ազատեանը այսօր էլ անհատնում եռանդով ու խորը հաւատքով շարունակում է իր հետազօտութիւնները օտար եւ հայրենի արխիւների մէջ մեծ եղեռնի որբերի վերաբերեալ նոր նիւթեր եւ տեղեկութիւններ յայտնաբերելու եւ պատրաստելու երրորդ գրքի հրատարակութիւնը: Այնպէս որ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ ենք մաղթում եւ քաջաոգոջութիւն Լիպարիտ Ազատեանին, ինչպէս նաեւ իր տիկնոջը՝ Սեդա Ազատեանին, որը մշտապէս նեցուկ է կանգնում իր ամուսնուն:

Յանկանում ենք, որ մօտ ապագայում սեղանի վրայ տեսնենք նաեւ այս խիստ շահեկան մատենաշարի երրորդ հատորը:

# ՄԻ ՀՐԱՏԱՊ ԵՒ ՌԻՇԱԳՐԱՒ ԴԱՍԱՆՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յուճուարի 28-ին, երեկոյեան կրկին բազմամարդ էր Լոս Անճե-լըսի Իրանահայ Միութեան սրահը:

Հայաստանի Հանրապետութեան ներկայով եւ ապագայով հետաքրքրուողները խուճենքում եկել էին մասնակցելու զրականութեան եւ արուեստի բաժանմունքի կազմակերպած խիստ շահեկան մի դասախօսութեան:

Այո՛, ներկաները մեծ հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ ունկնդրեցին Դոկտ. Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանի «Հայաստանը միջազգային յարաբերութիւնների գործօն» խորագրով ելոյթը:

Հենց սկզբից նշեմք, որ այն գիտական եւ քաղաքական առումով անցաւ բարձր մակարդակով, քանի որ հեղինակը քաջատեղեակ էր նիւթին եւ բազմիցս արդէն ելոյթներ էր ունեցել այդ եւ այլ յարակից թեմաների շուրջ աշխարհի տարբեր երկրների համալսարաններում եւ պետական բարձր շրջանակներում:

Նշեմք, որ Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը ներկայումս տնօրէնն է Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի: Միեւնոյն ժամանակ նա կոնֆլիկտների լուծման Հայաստանի կեդրոնի հիմնադիր տնօրէնն է, ինչպէս նաեւ գիտութիւնների միջազգային մի շարք ակադեմիաների ակադեմիկոս անդամ:

Միջազգային լայն ճանաչման արժանացած արեւելագէտ-պատմաբան Նիկոլայ Յովհաննիսեանը ունի բազմաթիւ գիտական հետազոտութիւններ, հրատարակուած հիմնա-

կանում հայերէն, ռուսերէն, անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով, որոնք առնչուած են արեւելագիտական հարցերին, մասնաւորապէս արաբագիտութեան եւ յատկապէս միջազգային ու տարածաշրջանային յարաբերութիւններին: Վերջին տարիներին նա զգալի աշխատանքներ տարաւ դարաբաղեան հակամարտութեան լուծման խիստ կարեւոր խնդրում:

Հնագոյն ժամանակամիջոցում եւ թէ միջին դարերում Հայաստանը միշտ էլ քաղաքական, տնտեսական եւ մշակութային կարեւոր դեր է խաղացել, աշխարհաքաղաքական տուեալ տարածաշրջանում:

Հայաստանի համար բոլորովին նոր ժամանակաշրջան սկսուեց 1991 թ. Սեպտեմբերի 21-ի անկախ հանրապետութեան հռչակումից յետոյ: Յայտնի է, որ Նորհրդային Հայաստանը իր 70 տարուայ գոյութեան ընթացքում զրկուած էր իր ուրոյն արտաքին քաղաքականութիւնը վարելու իրաւունքից: Այնպէս որ անկախութիւնից յետոյ պէտք է սկսեր զրոյց, բարելաւել յարաբերութիւնները բոլոր հարեւանների հետ, յատկապէս տնտեսական ոլորտում, եւ գոյութիւն ունեցող հակամարտութիւնները լուծել խաղաղ բանակցութիւնների միջոցով:

Միւս կողմից՝ կարեւոր հարցերից էր նաեւ Հայաստանի անկախութեան ճանաչումը միջազգային չափանիշով: Այլ պետութիւնների հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումով, աստիճանաբար

ուժեղացաւ Հայաստանի միջազգային դիրքը, որը աստիճանաբար յանգեցրեց այն բանի, որ Մարտ 2, 1992 թ. Հայաստանը դարձաւ ՄԱԿ-ի անդամ:

Դասախօսութեան ընթացքում Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը մէկ առ մէկ կանգ առաւ հայ-ռուսական, հայ-իրանական, հայ-թուրքական եւ ատրպէյճանական, վրաստանի, Եւրոպայի եւ Մերձավոր-արեւելեան ստանձին երկրների եւ յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգների հետ առընչուող հարցերի շուրջ:

Նա խիստ կարեւորեց 1997 թ. Օգոստոսի 29-ի ռազմական ասպարէզում կնքուած ռուս-հայկական պայմանագիրը, նկատի ունենալով, որ այն ամենաբարձր մակարդակով երաշխարեց Հայաստանի ազգային ապահովութիւնը եւ ուժեղացրեց նրա դիրքը Անդրկովկասեան եւ Մերձավոր-արեւելեան աշխարհաքաղաքական յարաբերութիւններում: Բնականաբար նշեց, որ այն խիստ շահաւէտ էր նաեւ յոսանք-տանի համար, քանի որ Հայաստանը վստահելի յենակէտ էր դառնում տուեալ տարածքում նրա ռազմավարական ազդեցութեան ամրացման համար:

Դասախօսը բարձր գնահատական տուեց նաեւ հայկական բանակի մարտունակութեանն ու կարկաչակի հակա գործօնին: Այն որակաւորեց որպէս ուժեղագոյնը տուեալ տարածաշրջանում, քանի որ զգաստացրեց եւ կարեւոր դեր խաղաց

Ատրպէյճանի եւ Վրաստանի ուժի դիրքից՝ հարցերը լուծելու խնդրում:

Փակագծերում նշեմք, որ Ատրպէյճանը սահմանամերձ շրջաններում բազմիցս յարձակումներ նախաձեռնեց, ձգտելով թելադրել իր կամքը, բայց հայկական բանակը հակահարուած տալով ձախողեցրեց նրա ծրագրերը:

Հայ-թուրքական յարաբերութիւնների մասին խօսելիս, Նիկոլայ Յովհաննիսեանը նշեց, որ Հայաստանը ձգտում է բարի դրացիական կապեր հաստատել թուրքիայի հետ, այդ թւում բարելաւել տնտեսական եւ մշակութային գործօնները, բայց առանց անտեսելու Մեծ Եղեռնի ողբերգութիւնը եւ դարաբաղեան խնդրում Արցախի ժողովուրդի ինքնորոշման արդար իրաւունքը:

Նա խիստ կարեւորեց նաեւ, որպէս գերհզօր պետութիւն ԱՄՆ-ի դերը Հայաստանի բարգաւաճման համար, յատկապէս տնտեսական եւ այլ կենսական հարցերում համագործակցութիւնը զարգացնելու եւ խորացնելու միջոցով:

Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը մանրամասն անդրադարձաւ եւ բարձր գնահատեց նաեւ սփիւռքահայութեան խիստ կարեւոր գործօնը, յատկապէս շեշտեց ԱՄՆ-ի ստուար հայութեան կազմակերպուած եւ միասնական զօրակցութիւնը Հայաստանին:

Բնականաբար, վերջում եղան հարցեր, որոնց դասախօսը տուեց տրամաբանական եւ սպառիչ պատասխաններ:

# ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐԵՒԵԼԱԳԷՏԸ

Լրացաւ հայ անուանի պատմաբան-արեւելագէտ՝ Պատմական Գիտութիւնների Դոկտոր Փրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանի ծննդեան 70 ամեակը:

Շուրջ 42 տարի Նիկոլայ Յովհաննիսեանը աշխատել է Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտում, ղեկավարելով արաբագիտութեան բաժինը: Այնպէս որ նա իր ուրոյն ներդրումն ունի Հայաստանում արաբագիտութեան զարգացման բնագաւառում:

Ծնուել է 1930 թ. Յունիսի 10-ին Գիւմրիում: Սկզբնական կրթութիւնը ստացել է իր ծննդավայրում, այնուհետև ուսանել է 1953 թ. աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների բաժինը, իսկ 1956 թ. ասպիրանտուրան: Պատմական Գիտութիւնների Դոկտորական աւարտաճառը պաշտպանել է 1968 թ. Երեւանում: Այդ տարիներին գիտական աշխատանքին զուգընթաց դասախօսել է նաև Երեւանի Պետական Համալսարանում եւ այլ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում:

1995 թ. Նիկոլայ Յովհաննիսեանը ստանձնեց Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրէնի բարձր եւ պատասխանատու պաշտօնը: Միեւնոյն ժամանակ նա հիմնադիր տնօրէնն էր կոնֆլիկտների լուծման Հայաստանի կեդրոնի, ինչպէս նաև

ակադեմիկոս անդամ Գիտութիւնների Միջազգային մի շարք Ակադեմիաների, այդ թւում՝ Արարատ Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի (Փարիզ) եւ Սիրիայի Գիտութիւնների Ընկերութեան: 1999 թ. նա ընտրուեց Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրների Միջազգային Ակադեմիայի (Մոսկուա), ինչպէս նաև Նիւ Եորքի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ:

Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը 1985 թ. սկսած պարբերաբար դասախօսութիւններ է կարդացել ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Լիբանանի, Սիրիայի եւ Իրաքի Համալսարաններում: Որպէս Հայաստանի ներկայացուցիչ հանդիպումներ եւ ելույթներ է ունեցել տարբեր երկրների պետական բարձր շրջանակներում: Յատկապէս վերջին տարիներին նա զգալի աշխատանքներ տարաւ դարաբաղեան հակամարտութեան լուծման խիստ կարեւոր խնդրում:

Միջազգային լայն ճանաչման արժանացած արեւելագէտ-պատմաբան՝ Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը ունի բազմաթիւ գիտական հետազոտութիւններ, հրատարակուած հիմնական հայերէն, ռուսերէն, անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով, որոնք առնչւում են արեւելագիտական հարցերին, մասնաւորապէս արաբագիտութեան եւ յատկապէս միջազգային ու տարածաշրջանային յարաբերութիւններին: Նա հեղինակ է 270 գիտահետազոտական յօդուածների եւ մօտ 25 մենագրութիւնների:

Որոշակի պատկերացում կազմելու համար ստորեւ բերում ենք նրա հրատարակած գիտական ուսումնասիրութիւններից մի քանիսը.

1. Ազգային ազատագրական պայքարը Իրաքում, Երեւան, 1964, 1976:

2. Սիրիայի անկախ հանրապետութեան կազմաւորումը, Մոսկուա, 1968, ռուսերէն:

3. Ազգային ազատագրական պայքարը Լիբանանում, Պէյրութ, 1974, արաբերէն:

4. Պարսկական Ծոցի պատերազմը եւ քրտական հարցը, Լոնտոն, 1994, անգլերէն:

5. 1915 թ. Յեղասպանութեան հիմնահարցերի լուսաբանումն արաբական պատմագրութեան մէջ (Պայքար, 1995, թիւ 4):


1997 թ. Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը հրատարակեց «Դիւանագիտութիւն» գիրքը, որն իր ընդլայնված հայերէն լեզուով առաջին աշխատութիւնն է, ուր հեղինակը ընդհանուր պատկերացում է տալիս դիւանագիտութեան պատմութեան, նրա էութեան ու կառուցուածքի մասին:

Միեւնոյն ժամանակ մանրամասն ներառարձեղ է դիւանագիտութիւն իրականացնող մարմինների գործունէութիւնը եւ բացայայտել նրա դերը արտաքին յարաբերութիւններին համակարգում: Հասկանալի է, որ այս կարեւոր նշանակութիւն ունեցող աշխատութիւնը հրատարակուեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումից յետոյ, այն ժամանակ, երբ առաջին քայլերն էին կատարուած միջազգային յարաբերութիւնների դիւանագիտութեան ասպարէզում:

«Ղարաբաղեան կոնֆլիկտը» խորագրով աշխատութիւնը (Երեւան, 1997, ռուսերէն, 1999, անգլերէն) լրջ տեսաւ ճիշդ այն ժամանակ երբ Հայաստանի դիւանագիտութիւնը ուղիներ էր որոնում Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման խնդրում, նկատի ունենալով, որ միջազգային քաղաքական շրջանակներում ձգտում կար ամէն կերպ խափանելու արցախահայերի ինքնորոշման հաստատման արդար իրաւունքը: Ն. Յովհաննիսեանը իր այս շահեկան գրքում Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցը շօշափել է համընդհանուր եւ տրամաբանական հողի վրայ, իր բոլոր պատմական եւ քաղաքական մանրամասնութիւններով: Յատկապէս, օգտագործուած օտար աղբիւրների հիման վրայ, հակահարուած է սրուում ատրպէյճանական անհիմն ու կեղծ խեղաթելումներին:

Յիշատակութեան արժանի է նաև Ն. Յովհաննիսեանի «Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Քաղաքականութիւնը Անդրկովկասեան-Մերձաւորարեւելեան Աշխարհաքաղաքական տարածաշրջանում» խիստ շահեկան աշխատութիւնը (Երեւան, 1998, անգլերէն):

Յայտնի է, որ Հայաստանի անկախութիւնից յետոյ, դիւանագիտական նոր յարաբերութիւններ հաստատուեցին այլ պետութիւնների հետ: Այս գրքում հեղինակը մէկ առ մէկ կանգ է առել հայ-ռուսական, հայ-իրանական, հայ-թուրքական-ատրպէյճանական, վրաստանի, Եւրոպայի եւ Մերձաւորարեւելեան առանձին երկրների ու յատկապէս Ամերիկայի



Միացեալ Նահանգների հետ առնչուող հարցերի շուրջ: Յատկանշական է, որ հայ-թուրքական յարաբերութիւնների մասին խօսելիս Ն. Յովհաննիսեանը առաջ է քաշում թուրքիայի հետ բարի դրացիական կապեր հաստատելու անհրաժեշտութիւնը, բայց մատնանշում է նաեւ, որ չպէտք է անտեսուի Մեծ Եղեռնի ողբերգութիւնը եւ դարաբաղեան խնդրում Արցախի ժողովրդի ինքնորոշման արդար իրաւունքը:

Քրոմֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը բրիտանական Ակադեմիայի հրաւերով 1989 թ. Լոնտոնի եւ Օքսֆորտի Համալսարաններում, ինչպէս նաեւ միջազգային յարաբերութիւնների թաղաւորական հիմնարկում հետազօտել է Մեծ Բրիտանիայի Մերձաւոր-արեւելեան քաղաքականութիւնը 1960-1980-ական թթ.:

1993-1994 թթ. գիտական գործուղումով եղել է ԱՄՆ-ի «Ճորճ

Ուաշինգթոնի Համալսարանում», կատարելով «ԱՄՆ-ի քաղաքականութիւնը արարական Արեւելքում» թեման: Բացի այդ 1995 թ. ԱՄՆ-ի Մերիլենտի Համալսարանի հրաւերով եւ պատուէրով կատարել է «Պարտնյորներ կոնֆլիկտի գծով. խաղաղութեան կամուրջների կառուցումը Անդրկովկասում» գիտահետազօտական աշխատութիւնը, իսկ 1998 թ. կրկին յատուկ հրաւերով նոյն համալսարանում դասախօսութիւններ է կարդացել «Ղարաբաղի փրոպլեմի լուծման տարբերակների» թեմայի շուրջ, ծանօթացնելով իր տեսակէտները այդ խնդրի մասին:

Միջազգային յարաբերութիւնների քաղաքական մասնագէտը այսօր էլ բուռն եռանդով եւ խորը նուիրումով շարունակում է իր գիտական եւ քաղաքական յօժ կարեւոր գործունէութիւնը:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դժուարին պայմաններում նա չընկրկուեց, փնտռեց նոր ուղիներ որպէսզի ինստիտուտը շարունակի մնալ իր նախկին միջազգային չափանիշով բարձր մակարդակի վրայ: Եւ իրօք, որ իր ղեկավարած Արեւելագիտութեան հիմնարկը այսօր վերելք է ապրում: Այս վերջին տարիներին մեղուաջան աշխատանքով տարեկան լոյս է ընծայում 20-ից աւելի հրատապ աշխատութիւններ, որոնք մեծ գնահատանքի են արժանանում թէ Հայաստանում եւ թէ արտասահմանեան երկրներում:

Իսկ ո՞վ է նեցուկ կանգնում եւ հոգում ինստիտուտի նիւթական ծախսերը: Ժողովրդական առածը ասում է՝ «մէկ ձեռքը ծափ չի տայ»: Գոհունակութեամբ պիտի նշենք, որ «Արմէն եւ Բերսարէ ձէրէճեան» Հիմնադրամի (ԱՄՆ, Նիւ Ճըրքի) նախագահ՝ Արսէն ձէրէճեանը արդէն 3 տարի է ինչ նիւթական օգնութիւն է յատկացնում Արեւելագիտութեան ինստիտուտին: Այսօր էլ հայրենասիրական խորը նուիրումով նա շարունակում է իր անշահախնդիր դրամական օգնութիւնը: Այդ են վկայում Հիմնադրամի մեկենասութեամբ հրատարակուած բազմաթիւ գրքերը, ժողովածուները, մատենաշարները, գիտաժողովների կազմակերպումը, ինչպէս նաեւ երիտասարդ արեւելագէտների խորհուսումը:

Եզրակացնենք: Որպէս նախկին գործընկերոջ ի սրտէ ջերմօրէն շնորհաւորում ենք 70 տարին բոլորած յարգարժան յոբելեարին, բարեմաղթելով քաջառողջութիւն, ստեղծագործական նորանոր յաջողութիւններ եւ գիտական նուաճումներ ի փառս հայրենական արեւելագիտութեան զարգացմանը:

# Փրոֆ. Գեորգ Խրյուպեանի Գիտա-մանկավարժական

## Գործունէութեան 50-ամեակի Առթիւ

1999թ.

Մայիս 16-ին Կլենտօնի Church of Brethren եկեղեցւոյ դահլիճին մէջ, Մաշտոց Գոյէճի նախաձեռնութեամբ և յորեկենական համագաղութային յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ վաստակաշատ գիտնական Դոկ. Փրոֆ. Գեորգ Խրյուպեանի գիտամանկավարժական գործունէութեան յիսնամեայ յորեկենական հանդիսութիւնը, որուն նկարագրութիւնը կը տրուի 30-րդ էջով:

«Նոր Օր»-ի աշխատակից Դոկտ. Խրյուպեանի վաստակին արժեւորումը կատարող այս գրութիւնը «Նոր Օր»-ի մէկ այլ վաստակաշատ աշխատակիցի Փրոֆ. Փափազեանի ելոյթն է այդ առթիւ:

Ն.Օ.

Մեծարգոյ Դոկտ. Փրոֆ. Գեորգ Խրյուպեան, նախ ընդունիր իմ ամենաշերմ ողջոյնն ու ամենաբարի մաղթանքները այս յիշարժան օրուայ առթիւ: Պատուարժան յորեկեար, սիրելի գործընկեր, սրտանց շնորհաւորում եմ քո ծննդեան 72, ինչպէս նաեւ գիտամանկավարժական գործունէութեան 50 ամեակը:

Ցանկանում եմ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ, կատարեալ առողջութիւն և յաջողութիւններ, կատարեալ առողջութիւն և երկար կեանք Տիկ. Անահիտի, ձեր զաւակների և սիրասուն թոռների հետ:

Բարեմաղթում եմ իսկական ուժ ու եռանդ, բեղուն գրիչ, որպէսզի այդ նոյն երիտասարդական աւելնով շարունակես քո հայրենանուէր գործունէութիւնը, ի բարօրութիւն մեր ժողովրդի, մեր հայրենիքի բարգաւաճմանն ու հզօրացմանը:

Սիրելի հայրենակիցներ,

Այս տարուայ Մարտի վերջերին Փրոֆ. Գեորգ Խրյուպեանը յայտնեց ինձ, որ Մայիսի 16-ին Մաշտոց Գոյէճի նախաձեռնութեամբ և իր հարազատների ու մտերիմների կազմակերպութեամբ որոշել են նշել իր գիտա-մանկավարժական գործունէութեան 50-ամեակը, և ցանկութիւն յայտնեց, որ ես հանդէս գամ գեկուցումով: Սիրով համաձայնեցի և նոյն օրն էլ իմ թղթապանակներից սկսեցի հաւաքել Լոս Անջելեսի մամուլում և ընդհանրապէս նրա հրատարակած գիտական և հրապարակաբանային ուսումնասիրութիւններն ու յօդուածները: Ստացուեց մի մեծ կոյտ:

Մի պահ շուարեցի թէ ինչպէ՞ս, ի՞նչ հերթականութեամբ դասաւորեմ նիւթերը, յատկապէս ինչի՞ց և որտեղից սկսեմ:

Բաւական մտորելուց յետոյ, կարծէք թէ ճարը գտայ: Յիշեցի, որ վերջերս Գ. Խրյուպեանը բաւականին ուշագրաւ ականարկ էր հրատարակել իր ծնողի մասին «Հայր ներքո ինձ որ ուշացայ» տպաւորելի խորագրով: Այն նուիրուած էր արժանապատիւ հօր մահուան 30-րդ տարելիցին:

Որոշեցի սկսել հենց Խրյուպեանների գերդաստանի ակունքներից, թէ ովքեր են եղել ծնողները և ինչ ազդեցութիւն են ունեցել իրենց զաւակի վրայ:

Եւ այդպէս պարզուեց, որ Գեորգ Խրյուպեանը որդին է կրօնա-կրթական դէմք, Աստուծոյ ծառայ հայագէտ, ազգային-հասարակական գործիչ վերապատուելի Տիգրան Խրյուպեանի, որն իր կենդանութեան օրօք անխոնջ և անբասիր ծառայել է Աստուծուն, եկեղեցուն և իր բազմաշարժար ազգին:

Տեղին եմ համարում այստեղ բերելու հանգուցեալ Վազգէն Վեհափառի իր ժամանակին արտայայտած հետեւեալ կարծիքը. «Վեր. Տիգրան Խրյուպեանի կեանքը մի պատարագ է մատուցում Աստուծուն ու հայ ազգին»: Ահա և Փրոֆ. Գ. Խրյուպեանի խոստովանութիւնը. «Հայրս և Վեհափառ Հայրապետը՝ Վազգէն Ա.-ը վճռական դեր խաղացել են իմ հոգևոր զարգացման աճի մէջ»:

Մի խօսքով, Գ. Խրյուպեանը անձնուրաց հետեւել է իր հօր ճանապարհին, փառաբանել Տիրոջ և իր երկարամեայ բազմաբեղուն գրչով անդրադարձել է հայ ժողովրդին յուզող շատ հարցերին, այդ թւում՝ հայ փիլիսոփայութեան, ընկերաբանութեան, համաշխարհային և հայ մշակոյթի պատմութեան, հայ ժողովրդի ծագման պատմութեան, Արցախի ազատագրական շարժման, հայոց ցեղասպանութեան և վերջապէս աստուածաբանական և կրօնական հարցերին: Իր տքնաշան աշխատանքով ձգտել է գիտական զանազան միջոցներով ուղիներ որոնել, դրանց դրական լուծումի համար:

Հայագիտութեան բարգաւաճման ասպարէզում իր ուրույն ներդրումն ունեցաւ պարբերաբար լոյս տեսնող Վեր. Տիգրան Խրյուպեանի յիշատակին նուիրուած մատենաշարը:

Ես ուշադրութեամբ կարդացի այս մատենաշարի 6-րդ հատորի 64-րդ էջում գետեղուած հայ հոգևոր և գիտական մտքի հեղինակաւոր անձանց կարծիքները, ուր իրօք որ բարձր գնահատական էր տրուում այնտեղ ընդգրկուած նիւթերի մասին: Ահա, այս մատենաշարի 6-րդ հատորը նուիրուած է «Հայ ժողովրդի ծագման» հարցերին:

Ինչպէս գիտենք, արդի թուրք պատմաբանները, և նրանց ձայնակցող օտար գիտնականները, աղաւաղելով հայ ժողովրդի պատմութիւնը, ձգտում են ապացուցել, որ հայերը իբր եկուոր ցեղեր են այդ տարածքում, որ թուրքերն են Անատոլիայի հնագոյն բնիկ ժողովուրդը, և նրանք են ստեղծել համաշխարհային մշակոյթի արժէքները: Եւ վերջապէս աշխատում են ապացուցել, որ սելճուկ օսմանցի և թուրք անուններով հանդէս եկած մարդկանց նախնիները ինքեքն են, իսուռիները և Ուրարտացիները:

Այս առումով Փրոֆ. Գ. Խրյուպեանը մանրամասն կանգ է առնում Աստուածաշնչի ու գիտութեան տուեալների վրայ, համեմատութիւններ կատարում այս հարցի շուրջ հայրենի և օտար գիտնականների տուած մեկնութիւնները մասին: Այնուհետև շեշտը դնելով սուրբ գրային տեսակէտների վրայ, աստուածաբանական, պատմագիտական, ազգագրական, հոգեբանական և այլ հաւաստի փաստերով յօդս է ցնդեցնում թուրք և

ազերի գիտնականների աղաւորուած տեսակէտներն ու կեղծիքները: Եւ վերջապէս եզրակացնելով նշում է, որ «Հնդկերոպական լեզուներով խօսող ազգերի, այդ թւում նաև հայերի, նախահայրենիքը եղել է հայկական լեռնաշխարհը և Հիւսիսային Իրանը, և որ հայերը, որպէս ցեղային միաւոր, Բ.Ա. հինգերորդ հազարամեակում սկսել են ձևաւորուել այդ նախահայրենիքի կենտրոնական մասում և ապա, շուրջ հազար տարի անց, աստիճանաբար հաստատուել հիւսիս ընկած տարածքներում, որն այսօր անուանում ենք Պատմական Հայաստան»:

Մատենաշարի 5 և 7-րդ հատորները բովանդակում են «Հայոց Յեղասպանութեան» Աստուածաբանական և գիտական վերլուծութիւնները:

5-րդ հատորում Փրոֆ. Գ. Նըրուպեանը ընդհանուր գծերով հանրութեանը ծանօթացնում է ցեղասպանագիտութեան ասպարէզում արձանագրուած նուաճումները, որպէսզի իւրաքանչիւր անհատ կարողանայ նրա գործնական լուծմանը մօտենայ գիտակցօրէն:

Ուսումնասիրութեան մէջ հեղինակը բծախնդրութեամբ կանգ է առել մի շարք հանգուցային հարցերի վրայ, մատնանշելով դրանց կարևորութիւնը Հայոց ցեղասպանութեան ճանաչման և դատապարտման խնդրում:

Նա հաւաստում է, որ արևմտահայերի նկատմամբ երիտթուրքերի կատարած յանցագործութիւնը իրաւական տեսանկիւնից պատժելի էր հետևեալ կարևոր գործօնների հիման վրայ:

Այսպէս, թերևս 1907 թ. Հաակայում ընդունուած միջազգային 4-րդ պայմանագրի որոշումներով պահանջուած էր, որպէսզի որևէ երկրի բնակիչներն ու պատերազմողների պաշտպանութիւնն ու անվտանգութիւնը ապահովուի «մարդկայնութեան օրէնքների» խղճի թելադրանքով:

Ինչպէ՞ս յայտնի է, 1915 թ. Մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարութիւնները համատեղ նախազգուշացրին բարձրագոյն դրանը, յայտարարելով, որ հայերի բռնագաղթի ու կոտորածների համար պատասխանատուութիւն են կրելու թուրքական կառավարութեան բոլոր անդամները:

Մի այլ շատ կարևոր գործօն էր նաև այն, որ բռնագաղթով և զանգուածային ջարդերով թուրքական կառավարութիւնը կոպտօրէն խախտել էր քաղաքացիների հանդէպ ստանձնած պարտաւորութիւններն ու գոյքային յարաբերութիւնները մասին երկրում գործող սահմանադրական օրէնքները:

Եւ վերջապէս կարևոր փաստարկ են 1919-20 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած ռազմական արտակարգ ատենակի կողմից երիտթուրքերի դատաւարութեան արձանագրութիւններում Արևմտահայութեան կոտորածների վերաբերող մեղադրական ապացոյցներն ու դատավճիռները: Դժբախտաբար, ինչպէս նշած է հեղինակը, հետագայում

յանցագործներին պատժելու գործընթացը կասեցուեց, որովհետև թաշնակից պետութիւնների կողմից բացակայում էր արդարութիւնը բացայայտելու և մեղաւորներին պատժելու կամքն ու ցանկութիւնը:



Մատենաշարի թիւ 7 հատորում, որն ունի «Յեղասպանութեան աստուածաբանական հարցեր» խորագիրը, Փրոֆ. Գ. Նըրուպեանը նշում է, որ այսօր մարդկութեան կարևորագոյն խնդիրներից մէկն է լինելու ցեղասպանութեան դատապարտումն ու կանխումը, ինչպէս նաև անցեալ ու ներկայ ցեղասպանին պատասխանատուութեան ենթարկելն ու պատժելը: Այս իրագործելու համար նա անհրաժեշտ է համարում մարդկութեան դէմ կատարուած այդ ոճրագործութիւնը ենթարկել նաև աստուածաբանական հետազոտման:

Իրօք որ Օսմանեան կայսրութիւնում թուրքական իշխանութիւնները հայերի նկատմամբ գործադրուած ցեղասպանութեանը տուին կրօնական գունաւորում: Այդ բխում էր նրանց «միլլէթի» կարգավիճակից, ըստ որի Օսմանեան կայսրութեան հպատակները տարբերում էին կրօնական պատկանելութեան սկզբունքով: Մահմետականները համարում էին հաւատարիմ և առաջին կարգի քաղաքացի, իսկ ոչ-մահմետականները անհաւատներ և երկրորդ կարգի քաղաքացիներ: Նորակառուութեան այս քաղաքականութիւնն էր, որ որոշակի դեր խաղաց հայերի և այլ քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ յանցագործ ծրագրեր կատարելու խնդրում:

Այն ինչ որ թուրքերը կատարեցին հայերի հանդէպ, իրօք, որ մեծ չարք էր: Եւ նրանք կատարեցին իրենց անմարդկային արարքը, առանց հասկանալու դրա խորքն ու ահաւոր հետևանքները: Յեղասպան թուրքը չկարողացաւ գտնել իր առաջ ծառայած հարցերի ճիշդ լուծումները, և դիմեց հակամարդկային ծայրայեղ միջոցների:

Ինչպէս նշում է Փրոֆ. Գ. Նըրուպեանը, ցեղասպանութիւնը գործադրուեց հակառակ բարձրեան Աստծոյ կամքի, նրա կամքին որպէս հակադրութիւն: Այն հետևանք էր մարդու անձնիշխան ու ազատ կամքի սխալ գործադրման, սխալ ընտրութեան ու արդեւների, որտեղ անտեսուած էին աստուածային կամքն ու պատուիրանները, Աստծոյ պատգամած աստուածասիրութիւնն ու մարդասիրութիւնը իսկ մահմետականներից նրանք, որոնք խորը նուիրումով հաւատում էին Աստծոյ պատուիրաններին, դէմ էին հայերի նկատմամբ կատարուող կոտորածներին և հալածանքներին: Ահա մի հատուած 1919 թ. Երիտթուրքերի դատաւարութեան մեղադրական եզրակացութիւնից, ուր նշուած է, թէ ինչպէս կաստատուելի նահանգի մահմետականները շրջակայ վայրերում տեղի ունեցող արիւնայի դէպքերին վերաբերուել են խորը ատելութեամբ: Ես բերում եմ բառացի-հետ դիմել են քաղաքազուլու Ռեշիդ փաշային հետևեալ խօսքերով.— Երջակայ վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթուող անասունների նման քշում են դէպի լեռներ և այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում այդպիսի բան կատարուի: Մենք վախենում ենք Աստծոյ ցասումից: Պետութիւնը ոչ թէ դաժանութեամբ է

կառավարում, այլ բանականութեամբ: խնդրում ենք, որպէսզի մեր վիլայէթում այսպիսի կոտորած տեղի չունենայ»:

Նշենք նաև, որ թուրքական այդ ոճրագործութեան ընդդիմացան մահ-մետական կրօնին հետևող շատ ազգեր, այդ թվում և արաբները: Պատահական չէ, որ Մեքքէի կրօնապետը ևս խիստ քննադատեց թուրք ցեղասպաններին:

Այս օրերին «Փարոս» երկշաբաթերթում պարբերաբար հրատարակում է Փրոֆ. Գ. Նըրուպեանի «Ուրուգուռական մամուլը մերկացնում է թուրք ցեղասպաններին» խորագրով ուսումնասիրութիւնը: Պարզուամ է, որ Երիտթուրքերի կազմակերպած Արևմտահայերի բռնազաղթի և զանգուածային կոտորածների ընթացքում, Ուրուգուռայի մամուլը մանրամասն տեղեկութիւններ է հաղորդել և ամենայն խորութեամբ մեկնաբանել և լուսաբանել է թուրքիայի որդեգրած ազգային դաժան քաղաքականութիւնը քրիստոնէայ հպատակների, յատկապէս հայերի հանդէպ:

Ընթերցելով այս աշխատութիւնը, նկատում ենք, որ Ուրուգուռայի ժողովուրդը ևս տառապալի անցեալ է ունեցել: 19-րդ դարի սկզբում երկարատև ազգային ազատագրական պայքար է մղել զարդութատիրական ուժերի դէմ, որին և յաջորդել է քաղաքացիական պատերազմը:

Այնպէս որ Ուրուգուռացի ժողովուրդը իր անցեալի ծանր ճակատագրի բերումով, յատուկ սէր և հետաքրքրութիւն է տածել բռնազաղթի և կոտորածների ենթարկուած հայ ժողովրդի նկատմամբ: Եւ Առաջին Համաշխարհային պատերազմի հենց սկիզբից մանրամասն լուսաբանուել է այն Ուրուգուռայի մամուլում, ուր ընդգծուած է, որ հայերի նկատմամբ կատարուող Հայածանքները նախապէս ծրագրուած են եղել Երիտթուրքերի կուսակցութեան կողմից:

Եւ ի գուր չէ, որ հայերի ցեղասպանութեան 50-ամեակի տարելիցի օրերին Ուրուգուռայ հանդիսացաւ առաջին պետութիւններից մէկը, որը դատապարտեց հայերի ցեղասպանութիւնը: Այսպէս 1965 թ. Ապրիլի 20-ին Ուրուգուռայի Արևելեան Հանրապետութեան ծերակոյտի և ներկայացուցիչների պալատի միացեալ ժողովում ընդունուեց օրէնք հայ նահատակների յիշատակի օրուայ առթիւ: Անցած տարիների ընթացքում հայերի ցեղասպանութիւնը ճանաչուեց և դատապարտուեց մի շարք պետութիւնների կողմից: Դժբախտաբար աւարտուած է 20-րդ դարը, բայց այն թերևս չի ճանաչուել միջազգային չափանիշով: Այնպէս որ պայքարը շարունակուած է և իւրաքանչիւր հայի պարտքն է զօրավիգ կանգնել Հայաստանի և Ղարաբաղի հանրապետութիւնների հզօրացման, մարտունակ ու Հայ պահել Սփիւռքը, որպէսզի հնարաւոր դառնայ հայի արդար պահանջատիրութեան իրաւունքների բաւարարումը:

Ես իմ ելոյթի վերջում մի երկու խօսք պիտի ասեմ նաև Փրոֆ. Գ. Նըրուպեանի «Արցախեան Յուշերի» մասին:

1988 թ. Փետրուարին Արցախի ազատագրական պայքարի 10-ամեակի օրերին մամուլում պարբերաբար հրատարակուեց նրա «Արցախեան Յուշերի» երկարաշունչ հայրենասիրական պատումը: Ի միջի այլոց Գ. Նըրուպեանը երկար տարիների ընթացքում բուռն փափաք է ունեցել այցելելու հայոց Արցախ երկիրը, տեսնելու նրա հրաշագեղ բնութիւնը, ճարտարապետական յուշարձանները և վերջապէս մօտից շփուելու ազատատենչ արցախցու հետ և վայելելու նրանց անկեղծ ու ջերմ ընդունելութիւնը:

Տարիների այդ փափաքը իրականութիւն է դառնում 1997 թ. ամրանը, աւելի ճիշդ Օգոստոսի 7-ին, Գ. Նըրուպեանը իր հանդիպումներից և առանձին մարդկանց հետ ունեցած մտերմիկ շփումներից բացի մանրամասն պատմական տեղեկութիւններ է տալիս նաև իւրաքանչիւր վայրի մասին, խօսում է ազատագրական պայքարի շարժման, թէ՛ որտե՞ղ և երբ ինչպիսի մարտեր տեղի ունեցան, կամ այս կամ այն քաղաքն ու գիւղը ինչպէս ազատագրուեցին:

Ճանապարհորդութեան ընթացքում հարցազրոյցի է բռնուած շատ շատերի հետ: Ես ուզում եմ մի հետաքրքիր դրուագ բերել այդ հարցազրոյցներից: Այսպէս, ճանապարհորդութեան ընթացքում, երբ հարցազրոյցի է բռնուած Գորիս-Ստեփանակերտ մայրուղու շինարարութեան վրայ աշխատող մի հայ բանուորի հետ, Գ. Նըրուպեանը դիմացինի մտքերը շօշափելու համար, կէս կատակ հարց է տալիս ասելով.

«Այսքան հսկայական աշխատանք էք կատարում, չէ՞ք ափսոսում ձեր աշխատանքին: Ասում են Ղարաբաղը ազերիներին են վերադարձնելու»: Հայ բանուորը հետևեալ պատասխանն է տալիս.

«Ախպեր Զան, բերանդ խեր բաց: Լուրջ մարդ ես երևում, բայց անլուրջ բաներ ես ասում: Մենք բոլորս՝ տեղացի ու եկուոր բանուորներս, կը կուռնենք մինչև մահ: Աշխարհում ոչ մի պետութիւն, ազգ, ժողովուրդ, ցեղ ու անհատ մեզ չի յարգի ու լուրջի չի առնի, եթէ՛ այսքան արիւն թափելուց ու ծախս անելուց յետոյ, Արցախը նորից, մեր կամքով, ստրկութեան տանք»:

Բանուորը վերջում աւելացնում է. «Քանի Սփիւռքից ես եղէք միասնակամ, որպէսզի Հայաստանին և Արցախին կարողանաք թիկունք կանգնել»: Իսկապէս, որ լաւ է ասուած և ճիշդ է ասուած:

Իսկ Ստեփանակերտում կրկին մի հարցազրոյցի ժամանակ մի հերոսուհի տատիկից Գ. Նըրուպեանը ստանում է հետևեալ պատասխանը.

«Հողը կորցրել էինք մերը դարձաւ: Լեզունիս էլ կորցնելու վրայ էինք՝ հայախօս դարձանք: Հեռացել էինք հայ կրօնից ու եկեղեցուց՝ աստուածապաշտ դարձանք: Հայ սովորութիւններից օտարացել էինք՝ ես վերադարձանք: Հիմա դարաբաղցին նոր մարդ է»:

Ես հնարաւորութիւն չունեմ բոլոր հարցերի վրայ կանգ առնելու, բայց այստեղ պիտի բերեմ Արցախի մասին Գ. Նըրուպեանի ընդհանուր տպաւորութիւնից մի հատուած.

«Պարապ եկանք, լեցուն վերադառնում էինք: Մեզ հետ էինք տանում Արցախ աշխարհի պատմութիւնը, նրա բնակիչների արժէքները, նրանց սոսկունութիւնը, կամը, նրանց երազանքները ու դրանց իրականացման նկատմամբ հաւատաքը»:

Միւրելի հայրենակիցներ, բոլորդ գիտէք, որ մայրերի խօսքն ու խրատը սուրբ է և նուիրական: Այնպէս որ ելոյթս պիտի աւարտեմ Փրոֆ. Գ. Նըրուպեանի մօր կողմից ասուած հետևեալ մաղթանքներով.

«Հօրդ արժանի զաւակն ես, շատ հպարտ եմ քեզով: Օրհնեա՛լ լինես տղաս»:

ՆՈՐ ՕՐ. Հինգշաբթի. Մայիս 27, 1999

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՅՍՕՐ» ԽՈՐԱԳՐՈՎ

ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Հետևապես ստեղծվեցին երկու համալսարաններ՝ Երևանի և Գյումրիի համալսարանները, որոնք հիմնականում ներկայումս զբաղվում են միայն տեխնիկական ոլորտով: Երևանի համալսարանը հիմնականում ներկայումս զբաղվում է տեխնիկական ոլորտով, իսկ Գյումրիի համալսարանը՝ միայն տեխնիկական ոլորտով: Երևանի համալսարանը հիմնականում ներկայումս զբաղվում է տեխնիկական ոլորտով, իսկ Գյումրիի համալսարանը՝ միայն տեխնիկական ոլորտով:

Ահա այս միտումով էր, որ 1999 թ. Գեկտեմբերի 12-ին շտապեցինք ներկայ գտնուելու Փաստինայի Հայ Ազատարանական եղբայրներու եկեղեցիի ընկերային սրահում, ուր տեղի էր ունենալու հրատարակչական դասախոսություն «Հայաստանի Այսօր» թեմայով: Իսկ բանախօսն էր Հայաստանի Սփիւռք Համաժողովի պատուիրակի Գեորգի Գեորգի Գեորգի Գեորգի:

Մինչ դասախոսությունն սկսուելը, բանախօսի կողմիցը՝ Տիգրան Անահիտ Նրբաբեկյանը դաշնամուրի վրայ նուազեց մի քանի հայրենասիրական երգեր, որը մեզ համար անակնկալ լինելով՝ մեծ հաճույք պատճառեց:

Այնուհետև ամբողջովն էլ մատենում բանախօսը եւ իր դասախոսական հմտությունն ստիպում մեզ կլանուած ու մեծ հետաքրքրութեամբ ունենալով իրեն:

Գաղտնիք չէ, որ Փրոֆ. Գեորգի Նրբաբեկյանը իր հրատարակչական գործունեության ընթացքում հիմնականում ներկայումս զբաղվում է տեխնիկական ոլորտով: Երևանի համալսարանը հիմնականում ներկայումս զբաղվում է տեխնիկական ոլորտով, իսկ Գյումրիի համալսարանը՝ միայն տեխնիկական ոլորտով:

Փայտից, ընկերաբանութեան, համալսարանային եւ հայ մշակութի պատմութեան, Արցախի ազատագրական շարժման, հայոց ցեղասպանութեան եւ վերջապէս աստուածաբանական եւ կրօնական հարցերին:

Ահա այդ երեկոյ եւս նա կանգ առաւ մեզ հետաքրքրող եւ լուզող շատ հարցերին, թէ լաւ եւ թէ վատ երեւոյթները մասին, բոլոր դէպքերում շեշտը դնելով մեր ժողովրդի աւանդական եւ ստեղծաբորձական լաւ արարուածները վրայ:

Առաջին հերթին մեր տրամադրութիւնը որոշ առումով բարձրացաւ երբ լսեցինք նրա հետեւեալ խօսքերը:

«Երեւանում լոյս կար: Յատկապէս աչքի էր զարնում փողոցներում գեղազիտական բարձր մակարդակով կազմակերպուած ծաղկավաճառութիւնը: Նիւթական այդ մեծ դժուարութեան մէջ ժողովուրդը ձգտում է պահպանել ազգային իր լաւ աւանդութիւնները: Երիտասարդութիւնը հակում ունի ուսման: Առկա է ուսման վարձի դժուարութիւնը, բայց ամէն կերպ ձգտում կայ լաղթահարել նիւթականը եւ սովորել»:

Պարզուեց, որ 13 պետական համալսարաններ կողքին գործում է նաեւ 80 մասնաւոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ, մօտ 80 հազար ուսանողութեամբ:

«Աշխոյժ է նաեւ մշակութային կեանքը: Այսօր աւելի շատ թատրոններ, ժամանցի եւ զուարճանքի վայրեր կան: Ճիշդ է թատրոնը առաջուայ մակարդակը չունի, բայց արուեստագէտները որոնումները մէջ են»:

Նշուեց, որ երկու ծայրայեղ թեւեր են առաջացել: Մի մասը ձգտում է մշակութ ստեղծել ազգային աւանդութիւնների հիմա վրայ, իսկ միւսը՝ այն համոզմունքն ունի, որ մշակութը ազգային աւանդութիւնը չի ճանաչում եւ չի կարող սահմանափակուել դրա մէջ: Նկատուած է ամերիկեան եւ եւրոպական ազդեցութիւնը:

Անդրադառնալով Հայաստանի Սփիւռք համահայկական համագումարին, Փրոֆ. Գեորգի Նրբաբեկյանը մատնանշեց, որ մօտ 70 երկրներից ժամանած հիւրերի ընդունելութիւնը կազմակերպուած էր բաւականին լաւով:

«Իր բոլոր թերութիւններով հանդերձ, որպէս սկիզբ համագումարը շատ մեծ նորութիւն էր. ուղղակի հրաշք: Եղան բազմաթիւ առաջարկութիւններ, նախաձեռնութիւններ: Այդ բոլորը կենսաբան կողմէն ինչպէս խիստ անհրաժեշտ նկատուեց հանդէս բերելու նոր մօտեցում, նոր մտածողութիւն եւ վերջապէս ապահովել իրաւական դաշտի ստեղծումը բոլոր ոլորտներում»:

Այնուհետև Փրոֆ. Գեորգի Նրբաբեկյանը իւրովի վերլուծեց անկախութեան հետ առնչուող քաղաքական եւ տնտեսական դժուարութիւնները: Կանգ առաւ արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան քայքայման, գործազրկութեան ու աղքատացման գործօնների վրայ:

Վերլուծելով Խորհրդային ժամանակաշրջանի տնտեսական յարաբերութիւնները ներկայ իրավիճակի հետ, նշեց, որ Խորհրդային իրաւակարգում տնտեսութեան բոլոր ճիւղերը սերտորէն շաղկապուած էին իրար հետ: Որեւէ հանրապետութիւն

չէր կարող մեկուսանալ կամ անկախանալ: Դա արուած էր յատուկ նպատակով: Ամէն մի գործարան զանազան թելերով կախուած էր Միութեան այլ գործարանների կամ հանքերի հետ: Բացի այդ ամէն ինչ հողում էր պետութիւնը, անկախ նրանից տուեալ գործարանը արդարացնում էր իրեն թէ ոչ: Արդարեւները շարունակում էին արտադրանք տալ, նոյնիսկ 30-40-ական թուականների հասցած մեքենաներով: Յայտնի է, որ տուեալ ժամանակ անհատական նախաձեռնութիւն չկար: Իսկ նոր իրաւակարգում ամէն ինչ կախուած է տնտեսութեան ղեկավարման անհատական նախաձեռնութիւնից: Շատերը փորձ չունէին եւ մրցակցութեանը չգիտացան: Բացի այդ, հարկային նոր քաղաքականութիւնը նոյնպէս դժգոհութիւն առաջադրեց: Շատերը ձգտեցին խուսափել եւ չմուծել սահմանուած գումարը: Հարկային քաղաքականութիւնը սկսեցին օգտագործել անհատական նպատակների համար, դիմեցին շարաշահումների եւ իրենց անձնական գրպանի հարստացման: Այս բոլորը իրականում ազդեց տնտեսութեան համընդհանուր զարգացման վրայ:

Հնից եկած թերութիւններից մէկն էլ քաղաքական փորձառու ղեկավարների բացակայութիւնն էր: «Ճիշդ է ունէինք լաւ գիտնականներ, նոյնիսկ միջազգային շահանիշով, բայց քաղաքական ղեկավար պատրաստելու գործը անտեսուեց...»: «Բնականաբար ներկայ քաղաքական լարուածութիւնը մեծ դժգոհութիւն առաջադրեց ժողովրդի մօտ: Յայտնուեցինք արագ փոփոխութիւն պահանջող մի իրավիճակում: Նկատի ունենալով մեր ժողովրդի հոգեբա-

նութիւնը, կործ. ժամանակահատուածի համար մեզ անհրաժեշտ էր զօրաւոր մի անհատականութիւն, որը պէտք է գործեր շատ վճռական եւ հաշուենկատ»:

Փրոֆ. Խրլովեանը խօսեց նաեւ կրօնական դարթօնքի մասին: Յատուկ հրաւերով նա եղել էր էջմիածնի Գէորգեան ձեռնարանում, Համալսարանի Աստուածաբանական բաժնում, ինչպէս նաեւ առանձին շրջաններում գործող կրօնական հաստատութիւններում եւ եկեղեցիներում: Դասախօսութիւններ էր կարդացել կրօնական զանազան թեմաներով, այդ թւում՝ «Քրիստոսաբանութիւն», «Աստուածաբանութեան մտածողութեան՝ առանձնալատկութիւնները» խորագրով: Որպէս թերութիւն նկատեց, որ այդ կենտրոնների գրադարաններում բաւարար չափով Աստուածաբանական գրականութիւն գո-

լութիւն չունի: Չկան եւ համապատասխան մասնագէտներ:

Ընդհանուր առմամբ Փրոֆ. Գէորգ Խրլովեանը լաւատես է եւ ունի այն համոզմունքը, որ հայրենի առողջ ուժերով, Հայաստան-Սփիւռք համագործակցութեամբ յաղթահարուելու են բոլոր դժուարութիւնները եւ հայ ժողովուրդը մտնելու է երրորդ հազարամեակ իրեն արժանի նկարագրով:

Բանախօսութեան վերջում եղան բաւականաչափ հարցեր, որոնց տրուեցին տրամաբանական եւ համոզիչ պատասխաններ:

Նկատի ունենալով այն հանդամանքը, որ դասախօսութիւնը տեղի ունեցաւ եկեղեցու սրահում, վերապատուելի՝ Դոկտ. Յակոբ Գասարեանը երեկոյի բացումն ու աւարտը կատարեց տէրունական աղօթքով:

ՄԱՍԻՍ

Էջ 16 -ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՄ 8, 2000

# Գերմանուհի Մեծ Հայասերը՝ Իլգէ Ֆրայան

ծած հայ երաժիշտների մասին եւ պատրաստել մի աշխատութիւն «Հայ երաժիշտների Ստեղծագործութիւնները» խորագրով: Թուրքերէնից թարգմանել է նաեւ Կոմիտաս Զարբի «Հայեր Թուրք Պետութեան Մտառայութեան Մէջ 1453-1953» աշխատութիւնը:

Ես շատ եմ օգտուել Յակոբ Տէր Պօղոսեանի անձնական գրադարանից, քանի որ ինձ թոյլ է տրուել ցանկացած ժամանակ, ցանկացած գիրք վերցնելու եւ ընթերցելու: Մի խօսքով, օգտագործում եմ այն իմ անձնական գրադարանի պէս եւ դրա համար շնորհակալ եմ եւ երախտապարտ:

Դեռ աւելին. Յակոբ Տէր Պօղոսեանը երկու օրը մէկ կը հեռաձայնի՝ «Եկուր, քանի մը հատ մոր գրքեր եմ գտել քու մասնագիտութեան վերաբերող, եկուր տար»:

Ահա մի քանի օր առաջ կրկին հեռաձայնելով յայտնում է. «Հայ պարբերական մամուլը դաստորիւ ժամանակ գտայ Արշակ Զոպանեանի «Անահիտ» հանդէսի հաւաքածոն, այդ թիւին մէջ նաեւ Կ. Պոլիսի մէջ հրատարակուած «Ազգակ» շաբաթաթերթի առաջին թիւերը, եկուր տար, գուցէ քեզի հետաքրքրող որեւէ նիւթ կ'ըլլայ»:

Անմիջապէս գնացի: Նախ թերթում եմ 1908-1909 թուականների «Ազգակ» շաբաթաթերթի առաջին տարուայ հրատարակութեան հաւաքածուն եւ թիւ երկուսում ուշադրութիւնս է գրաւում Ապտուլ Համիտեան շրջանի արեւմտահայութեան հալածանքների հետ

Հարուստ գրադարան ունի բարեկամս Յակոբ (Ճէֆ) Տէր Պօղոսեանը: Այդ թում հայ ժողովրդի պատմութեան, արուեստի եւ գիտութեան բնագաւառներին վերաբերող արժէքաւոր գրքեր, ինչպէս նաեւ աշխարհի տարբեր երկրներում հրատարակուած հայ մամուլի հազուագիւտ հաւաքածուներ: Դեռեւս երիտասարդ տարիքից մեծ սէր է ունեցել գիր ու գրականութեան նկատմամբ եւ սկսել է հաւաքել... այն էլ ինչպիսի շերտնանդութեամբ:

Նա կատարել է մի այլ կարեւոր ու խիստ գնահատելի ազգօգուտ աշխատանք եւս: Տարիների ընթացքում տեսածապաւեմի վրայ ձայնագրել է հայ ժողովրդի տաղանդաւոր բանաստեղծների, արուեստագէտների, գիտնականների, պատմաբանների եւ այլ հաղահալան ու հասարակական գործիչների խօսքը, որոնցից շատերը այսօր մեզ հետ չեն: Այդ բոլորը նա պահում է մեծ խնամքով ու գուրգուրանքով եւ երբեմն հպարտութեամբ ակնարկում է. «Այս բոլորը կատարած եմ մեր ապագայ սերունդի համար, որպէսզի իմանան եւ անմիջական տեսնեն, թէ ինչպիսի հայրենասէր գործիչներ ենք ունեցել»:

Յակոբ Տէր Պօղոսեանը մասնագիտութեամբ եղել է լուսանկարիչ, բայց ազատ ժամերին գրադուել է նաեւ գրագիտութեամբ: Երկար տարիների ընթացքում հաւաքել է նիւթեր Թուրքիայում ստեղծագոր-

առնչուող մի յօդուած, որը պատկանում է դարասկզբի գերմանուհի գրող Ե. Կարլսի և հասարակական գործիչ՝ Իլզէ Ֆրայպանի գրչին: Նշեմ, որ այն առաջարկումով հրատարակել է Ռուրէն Զարդարեանը, որոշ տեղեկութիւններ տալով գերմանուհի այդ մեծ հայաստեղի մասին: Այնուհանդերձ ուզում եմ գիտել իմենքս անլի խորացնել և անլին իմանալ Իլզէ Ֆրայպանի կենսագրութեան և նրա գիտա-հասարակական գործունէութեան մասին: Մտապ բացում եմ հայերէն հանրագիտարանը, սակայն ոչ մի բան չեմ գտնում այնտեղ նրա մասին: Ուստի նպատակայարմար եմ գտնում որոշ կրճատումներով ընթերցողին ներկայացնել Ռուրէն Զարդարեանի գնահատանքի խօսքը Իլզէ Ֆրայպանի մասին և այնուհետև բերել յօդուածը նոյնութեամբ:

\*\*\*

... Ուրկէ՛ ուր մայրական գործվը դէպի մեզ այս կին գրողին որ արդէն գերման գրականութեան կրցած է տալ մօտաւորապէս երեսուն հատորի չափ արուեստի ու գեղեցկութեան գործեր, - նորավէպ, վէպ, թատրոններ:

Իլզէ Ֆրայպան չէր կարող չի սքանչանալ փոքրաթիւ ժողովուրդի մը անլի փոքրաթիւ այն անձնուէրներուն վրայ՝ որ կ'երթային հսկայական ուժի մը դէմ, համայնաջինջ ու սասանեցնող բռնակալութեան մը աչքերուն մէջ նայելով անվախօրէն, կ'երթային մահուան՝ գիտակից անձնուրացութեամբ, կեանքի ստոյիկեան արհամարհանքով, լիայոյս, լիահաւատ:

Ժողովուրդ մը՝ որ իր մէջ չտեմարանած ունէր գաղափարի ու մեծութեան այսքան բարոյական գորութիւն, ժողովուրդ մը՝ որ ընդունակ էր իր արիւնովը ողողելու ամբողջ պետութիւն մը՝ Ազրիանապոլիսէն մինչև Սասուն, վանէն մինչև Զմիւռնիա, պիտի ապրէր և պէ՛տք էր որ ապրէր:

Ահա «Հայոց Հարցը» գրքոյկը՝ գոր տիկին Իլզէ Ֆրայպան կը գրէ յուզումով, ցասումով և բողոքի շունչով և որ իր ատենին արձագանգ կը գտնէ ամբողջ եւրոպական մամուլին մէջ:

Ահա երկրորդը՝ «Հայոց Հարցը և Յարիզմը», երկու հակառակորդներ պատմական բեմին վրայ, մէկը գոհ, միւսը դահիճ, առաջինը դէպի լոյսը ձգտող, երկրորդը գոհ այն խաւարէն՝ որով կը խեղդէ այդ լոյսը ինչպէս իր երկրին անսահման տափաստաններուն վրայ, նոյնպէս սահմանէն ասդին՝ հայկական լեռնաշղթաներուն մէջ:

Իլզէ Ֆրայպան՝ չբաւականանալով Հայ կեանքէն հիւսած իր վէպիկներով ու բազմաթիւ յօդուածներովը, չբաւականանալով իր գրչին հմայիչ կարողութեամբը՝ որ իր ազդեցութեան տակ պահած է միշտ գերման ընթերցող հասարակութեան ամէնէն էլիք դասակարգը, ուզած է, անլի ընդարձակօրէն, անլի գործնական ու անմիջական եղանակով մը ծառայելու համար Հայոց այդ հարցին՝ վազել մէկ քաղաքէն միւսը՝ բանախօսելու, բացատրելու, լուսարանելու համար հեռուոր Հայաստանի մէջ թաւալող

մեծ ողբերգութեան դիցազնական շարժառիթներն ու նիւթը: Իբրև բանախօս՝ իր արի և ազնիւ ձայնը հնչած է ժընեւի, Պետնի, Յիւրիխի, Համպուրկի - իր ծննդավայրին -, Եէնայի և Լայպ-

ցիկի ամպիոններէն՝ ի նպաստ Հայ ժողովուրդին, ի նպաստ անոր ազատութեան և իրաւունքներուն:

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

### ԻԼԶԷ ՖՐԱՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

(ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ)

Երբ որ նշուածն այս տեղ՝ աշխարհում Դատ ու իրաւունք բնաւ չի գտնում, երբոր բոնութեան լուծը գարշիլի Դատում ստրկին անհանդուրժելի, նա իր ձեռքերը երկիմ է մեկնում, և վստահօրէն այնտեղից խլում իր իրաւունքներն յաւիտեանական, Որոնք երկմի աստղերի նման Անշարժ, անվախճան անհունին փարած՝ Մնում են այնտեղ յաւիտեան կախում: Բնութեան նախնի վիճակն է հասնում, երբ մարդը մարդին ռախ է դառնում: Երբ էլ ճար չունենք, սրին ենք դիմում, Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում Ընդդէմ մեզ նշող անարգ բոնութեան, Պաշտպանում ենք մեր կին ու երեխան:

(ՇԻԼԼԷՐ, «ՏԷԼ»)

Մեծարգոյ Պարոններ,  
Քնած թէ արթուն ժամանակ հալածում է ինձ դժբախտ, բռնաբարուած, եւրոպական քրիստոնեայ ազգերից անարգօրէն ու դաւաճանօրէն լքուած Հայաստանի արիւնոտ ուրուականը: Հայերի կրած տառապանքները արտայայտում են ընդվզումի մի աղաղակով, օգնութեան ու վրէժխնդրութեան մի միայնակ կոչումով

և իմ բանականութիւնը չի ուզում հասկանալ, իմ սիրտը չի ուզում հաւատալ, որ այդ զարհուրելի աղաղակը ոչ մի արձագանգ չի գտնում իմ Հայրենիքում, որ Գերմանիան այսօր հանդիսանում է պաղ, անկենդան մի ապառաժ, որից չի կարելի ակնկալել ոչ մի կարեկցութիւն դէպի տանջուողները, ոչ մի հասկացողութիւն յուսահատ մաքառողների համար,

ոչ մի ոգեւորութիւն դիցազնա-  
րար նահատակողների դիմաց:  
Օգնութեան մասին խօսք անգամ  
չի կարող լինել:

Այո՛, այսօրուան Գերմանիան  
տխուր մի աշխարհ է: Վիլհելմ  
Բ.ի բարեկամութիւնը թիւրք  
բռնապետութեան Հետ դառն  
պտուղներ է բերում մեզ: Մի ոճ-  
րագործ անտարբերութիւն, մի  
թուլասիրտ անզաղափարակա-  
նութիւն է մտել մեր մէջ: Եւ սա-  
կայն երբեմն մեր ժողովուրդը  
տողորուած էր մարդկային ազա-  
տագրութեան մեծ գաղափարնե-  
րով եւ գերմանացի մի բանաս-  
տեղծ էր այն, որ ազատութեան  
վսեմ երգը Հնչեցրեց, եւ որ բո-  
ցաչունչ խօսքերով երգեց «Վիլ-  
հելմ Տէլ»ը՝ վաւերական բոլոր  
ազգերի եւ բոլոր ժամանակների  
համար:

Հարկ կայ՝ մտաբերելու այսօր,  
որ մեր ազնուագոյն բանաստեղ-  
ծի, Շիլլէրի ազատական դրաման,  
«Տէլ»ը, մի ժամանակ բուռն ոգե-  
ւորութիւն ու մրցակցութիւն է  
յարուցել Գերմանիայում:

Հարկ կայ՝ անդրադառնալու այդ  
հանգամանքի վրայ, որպէսզի այս  
գձուձ ու ողորմելի ժամանակնե-  
րում չխեղդուենք այն դառնու-  
թիւնից, որ զգում ենք Հարազատ  
ազգակիցների դիմաց:

Մեծարգոյ պարոններ, թոյլ  
տուէք ինձ Շիլլէրի ոգին դուրս  
կանչել, որպէսզի նա - հակառակ  
այժմեան գերմանացիներին,  
որոնք ամենապարզ մարդկայնու-  
թեան խնդիրներում անզամ չեն  
համարձակուում իրենց ձայնը  
բարձրացնել, եթէ կառավարու-

թիւնը արգելում է այդ - ասէ ձեզ,  
թէ ինչպէս մենք գերմանացի-  
ներս՝ Շիլլէրի մէջ մարմնացած  
մեր ազգային անհատականու-  
թեան շնորհիւ խորապէս կը կա-  
րեկցէինք ձեր տարաբախտ ժո-  
ղովրդին, թէ ո՛րքան խանդազին  
մենք կը բաղձայինք Հայաստանի  
ապստամբութիւնն ու ազատագ-  
րութիւնը, եթէ այսքան մանրա-  
ցած չլինէինք այսօր մեր պարապ-  
մունքների շնորհիւ, չափաւանց  
գձուձ, աւա՛ղ, մի ուրիշ ժողովրդի  
հերոսական շրջանը բժրոնելու  
համար:

Այսօր իշխում է առեւտրակա-  
նը, եւ մեր աշխարհը, որ ինքն  
իրեն քաղաքակիրթ է անուա-  
նում, ոչ այլ ինչ է եթէ ոչ մի  
հսկայական հնավաճառանոց:  
Մախել ու շահել - այս է նրա  
համար միակ կարեւորագոյն  
բանը: Եւ անթիւ մնալուն զօր-  
քերը կանգնած են միայն նրա  
համար, որ Հովանաւորեն հա-  
րուստ վաճառականին, հայթայ-  
թեն նրան արտահանութեան  
համար նորանոր վայրեր:

Եւ անզօր Հնչում է շուկայի այդ  
ժխորի մէջ միշտ փառաբանուած  
եւ երբեք չլսուած ձայնը մարդ-  
կայնութեան, արդարութեան եւ  
ըմբոստացման:

Այդպէս է իրերի վիճակը պառաւ  
Եւրոպայում: Իսկ դուք, մինչև  
նախնական առասպելական ժա-  
մանակները հասնող ձեր ժողո-  
վուրդը, մեզ Հետ համեմատած՝  
արիւնով թարմ է, երիտասարդ:  
Դուք դեռ ունիք հերոսներ, դուք  
ունիք նահատակներ, որոնք շող-  
չողում են աստղերի պէս մեծ ու  
պայծառ, ամենաարիւնոտ երկնա-

կամարի տակ: Ամենահազուրկ  
խօղովութիւնների ներքոյ, աշխար-  
հիս ամենատմարդի ճնշումների  
տակ՝ Հայաստանի մէջ ծնունդ են  
տանլ գործեր բիրլիական կշռի եւ  
մեծութեան: Ես ուսումնասիրել  
եմ Հայոց տառապանքների ու  
նահատակութեան սոսկալի տե-  
ղեկագիրները եւ մինչդեռ իմ սիր-  
տը արիւնոտում էր հանդէպ Հա-  
լածուածների ու մորթուածների  
ճակատագրին՝ ես միաժամանակ  
ցնցում էի հիացմունքից ու  
րեկրանքից: Մի Հոյակապ դրա-  
մա էր ներկայանում իմ առջև:  
Մի կողմից՝ արիւնոտւոյ, անաս-  
նական ամբարտաւանութիւն ու  
մոլեռանդ բարբարոսութիւն, միւս  
կողմից անձուրաց զոհողութիւն,  
երկաթէ դիմացկունութիւն մի յա-  
ռաջիմական, բարձր քաղա-  
քակրթութեան ձգտող մեծապէս  
օտուած ազգութեան:

Ես տեսել եմ Հայ Հերոսների ու  
նահատակների պատկերները -  
հերոսներ որոնք չէին խոնարհը-  
ւում, չէին անձնատուր լինում,  
որոնք չէր սարսափեցնում ոչ մո-  
լեռանդութիւնը եւ ոչ ալ վայրա-  
գութիւնը, եւ որոնք փառահեղ  
կեանքն ու պանծալի նահատա-  
կումը վկայ են մի անընկճելի,  
ինքնակայ ժողովրդային ուժի,  
վկայ են հայկական ցեղի անջըն-  
ջկիութեան: Պատկերներ Փիղի-  
րական ուժի ու արիւթեան, եւ  
պատկերներ՝ ընտիր գեղեցկու-  
թեան՝ - այդ երիտասարդները  
իրենց գանգալուր մօրունքներով,  
սուր եւ ցայտուն դիմագծերով, լի  
վճռականութեամբ եւ խտացած  
կամեցողութեամբ, - այդ պատա-

նինները, գրեթէ տակաւին մա-  
նուկներ՝ խոշոր, նրբագեղ,  
կեանք ու ոգի կայծակող աչքե-  
րով... մի ճշմարիտ հերոսացանք...

Հապա Հայ կիները, այդ քաջա-  
րի, մեր եւրոպուհիներից միան-  
գամայն տարբեր՝ շնորհալի սե-  
րունդը: Նրանք չեն, որ կատա-  
րել են գործեր, որոնց պատմելու  
միջոցին սրտեր են բարախում: Ոչ  
մի բանաստեղծ չէր կարող յղա-  
նալ աւելի զօրեղ մի բան, քան  
վրէժխնդրութեան այն գործը որ  
կատարեց մանկահասակ, աներ-  
կիւղ Եսթերը, սեփական ձեռքով  
դաշունազարկ անելով իր  
պատիւը բռնաբարող քրդական  
պետ՝ Շէրիֆ աղային: Յաւերժա-  
կան փառք նրա անուան ու յի-  
շատակին: Յաւերժական փառք,  
նաեւ այն Հայ կիներուն, որոնք  
խիզախեցին քանդել Սասունի  
լեռնավայրում կառուցուած զօ-  
րանոցները, ճիշդ այնպէս, ինչպէս  
մի ժամանակ: շուէյցարական գիւ-  
ղացիները փլատակեցին Յուիւզ-  
Ուրի ամուր՝ դղեակը, որ թշնա-  
մին կանգնեցրել էր Ուրի կանտո-  
նում՝ երկիրն անպատիժ կերպով  
ստրկացնելու եւ թալանելու համար:

Որ այստեղ կանացի ձեռքեր են  
կատարել աւերումի այդ գործը -  
դա աւելի եւս բարձրացնում է  
նրա արժէքն ու նշանակութիւնը:

Բայց փառքի փայլը ճառագայ-  
թում է նաեւ այն Հայ կանանց  
վրայ, որոնք յուսահատութիւնից  
մահ էին փնտռում, որոնք ձեռք՝  
ձեռքի տուած, շարան՝ շարան  
նետում էին Եփրատի ալիքները՝  
իրենց սեփական մահով մեռնե-  
լու համար եւ ոչ այն մահով, որ  
պատրաստում էր անողորմ,



րած ոճրագործութիւնը արեւմը-տաՀայերի կոտորածների մասին: Այնպէս որ, արար ականատեսների պատմածներն ու վկայութիւնները ունեցան փաստագրական խիստ կարեւոր նշանակութիւն:

Հետագայում, արար պատմաբանները, Հրապարակախօսները, պետական-քաղաքական գործիչները մանրամասն անդրադարձան 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան պատճառների, ընդ-թի ու էություն բացայայտման խնդրին, տալով իրենց անաչառ, ճշմարտացի եզրակացութիւնը:

ԱՀա նրանցից մի քանիսի անունները. Մուսա Փրէնա, Իլիաս Ջանանիրի, Ֆուսու Հասան Հաֆիզ, Նայիմ ալ Եաֆի, Մուսան ալ Մուրավարի, ՍալէՏ Ֆարէս Ջահր աղ-Դին եւ այլն: Այստեղ ըստ արժանւոյն պէտք է յիշատակել նաեւ օրերս Փարիզում իր մահկանացուն կնքած Լիբանանի խորհրդարանի երկար տարիների անդամ, մեծ հայասէր Ռէյմոն էտտէի եւ նրա հօր էմիլ էտտէի անունները:

Անցած 85 տարիների ընթացքում արար պատմաբանները քաղաքական եւ հասարակական գործիչները խստագոյն դատապարտել են՝ մարդկութեան դէմ գործադրուած այդ ահաւոր ոճիրը: Վերջապէս Մայիսի 11ին իրականացաւ արար գործիչների արդարացի պահանջը:

Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում նրանցից մի քանիսի աշխատութիւններից բերուած

առանձին հատուածներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս եւ լիովին հաստատում են Հայերի Յեղասպանութիւնը: Այս եւ այլ արար գործիչների ներդրած ջանքերի շնորհիւ էր, որ ճշմարտութիւնը լիովին բացայայտուեց եւ Լիբանանի խորհրդարանը ճանաչեց Հայերի Յեղասպանութիւնը:

**ՇՈՒՔՐԻ ՔՆԷՅԴԷՐ** - Հալէպում հրատարակուող «Ալ Թազաղղոմ» օրաթերթի խմբագիր,- Ատանայի թուրքերուն մօտ գոյութիւն ունէր արինահեղութիւն պատճառելու նախատրամադրուածութիւն եւ, ուրեմն, բաւական էր փոքր կայծ մը տալ, որպէսզի տեղի ունենան համընդհանուր ջարդեր, իսկ կառավարութիւնը ո՛չ միայն չճշչեց ու չկասեցրեց այդ ըմբոստութիւնն ու ջարդերը, այլեւ աւելի թորթոքեց անասնական այդ կիրքերը եւ արդիւնքը եղաւ այն, որ կոտորածները ստացան աւելի համատարած ընդթ (դուկտ. Ալեքսան Բէշիշեան. վաւերագրական էջեր «Ալ Թազաղղոմ» օրաթերթէն, 1909 թ., թիւ 26: Տե՛ս «Բագին» ամսագիր, 10-11-12, 1995 թ., Պէյրուս, էջ 75):

**ՖԱՅԷԶ ԱԼ ՂՈՍԷՅՆ** - Իրաւաբան,- Հայերի դէմ գործադրուած բռնութեան համար պատասխանատուութիւնն ընկնում է «Միութիւն եւ Առաջադիմութիւն (Իթ-թիհատ վէ Թերաքքի)» կուսակցութեան կենտկոմի անդամների

վրայ, որոնք իրենց ձեռքում պահելով՝ երկրի՝ կառավարումը, առաջնորդում էին ոչ այլ ինչով, քան Հայերի նկատմամբ ունեցած ցեղապաշտական մոլեռանդութեամբ (Fayez al Ghosein, «Temoignage d'un Arab Musulman sur L'innocence et le Massacre des Armeniens», արաբերէնէ թարգմանուած A.el G.-ի կողմէ, Պոմպէյ, 1917, էջ 44):

**ԱՄԻՆ ՍԱՅԻՏ** - Պատմաբան,- Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալէաթ պէյը ղեկավարեց Հայերին ոչնչացնելու արշաւը: Այդ արշաւի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում, որ արտաքսի Հայերին արեւելեան Անատոլիայի տարածքէն եւ զինուորների հսկողութեամբ նրանց հետիոտն քշի արաբական անապատ, որտեղ նրանց անխուսափելի մահ էր սպասում (Ամին Սայիտ, «Արաբների Ապստամբութիւնը 20րդ Դարում», Մոսկուա, 1964, էջ 79, ռուսերէն):

**ՖՈՒԱՏ ՀԱՖԷԶ** - Պատմաբան - Հայերի 1915 թ. ցեղասպանութեան պատասխանատուութիւնը ընկնում է նախ եւ առջ օսմանեան պետութեան կառավարութեան վրայ եւ առաջին հերթին Թալէաթ փաշայի ներքին գործերի նախարարին, հետագայում՝ վարչապետ եւ նրա գործընկերների՝ էնվէր փաշայի եւ ձէմալ փաշայի վրայ (Ֆուադ Հաֆէզ, «Հայ Ժողովրդի Պատմութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը», Գահիրէ, 1986, էջ 315, արաբերէն):

**ՍԱՄԻՐ ՌԻՖԱՏ** - Մտաւորական եւ քաղաքական գործիչ,- Հայերի Յեղասպանութիւնը նաեւ միջազգային ոճիր մըն է. թուրք պետութիւնը, փոխանակ ինքզինք արդարացնել փորձելու, պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը եւ հրաժարուի պատրուակներու խաղէն, թէ թուրք պետութիւնը շարունակական չէ...: Այս պատասխանատուութիւնը զլխաւոր կերպով իրեն կը պարտադրէ պաշտօնական ճանաչումը այս ոճիրին եւ անկէ բխած յանձնառութիւններուն, այսինքն՝ հատուցումը ցեղասպանութեան հետեւանքով Հայերուն կրած վնասներուն (Ս. Ռիֆատ, «Մենք եւ Դուք Ժառանգորդներն ենք Մէ՛կ եւ Նոյն Դատին», տե՛ս «Բագին» ամսագիր, Հոկտ., Դեկտ., 1995, Պէյրուս, էջ 142):

**ԽԷՅՐԻ ՀԱՄԱ** - Պատմաբան,- 1915-1916 թթ. ընթացքում թուրքերն իրագործեցին մօտ մէկ միլիոն Հայերի կոտորածը եւ արտաքսեցին հարիւր հազարաւորների (Սէյրի Համա, «Հայկական Հարցի Լուսաբանումը», «Ալ Մունաղէլ», Դամասկոս, 1983, էջ 22, արաբերէն):

**ՀԱՍԱՆ Մ. ԵՈՒՍԷՖ** - Սուրիական «Հողի Եղբայրներ» ֆիլմաշարի հեղինակ,- Ես անձնապէս «Հողի Եղբայրներ»ուն մէջ քննութեան հարց դարձուցի թուրքերուն ի գործ դրած 1915ի

հայկական ջարդը, որովհետև խորապէս զգացած եմ, որ սուրիական անապատի տարածքին թափուած հայու անմեղ արիւնը խառնուելով հայրենիքիս հողին, խառնուելով հարազատ երկրիս

ընդերքին մէջ կուտակուած՝ նոյն դահիճին թափած արաբ ժողովրդի արիւնին հետ, առուել եւս կը հաստատէ այս հողի արիւնավառ պատմութիւնը («Նոր Օր», Ապրիլ 24, 1996):

«ԱՍՊԱՐԷՋ», ՌԻԲԱԹ, 26 ՄԱՅԻՍ 2000

### «ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆԻՅ ՈՒԺ Է ԾՆՈՒՄ» ԵԹԷ ԱՅՆ ՀԻՄՆՈՒԱԾ Է ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ

«New York Times» թերթի Ստամպուլի թղթակից Ստեֆըն Քինգերը, Մայիսի 10-ին «Թուրքական շրջանը վերստին է հայերի կոտորածները» խորագրով հրատարակած յօդուածում, վերահաստատում է 1915 թ. Հայերի Յեղասպանութեան փաստը:

Այս յօդուածի կապակցութեամբ ինթերնէթում յայտնուել է «Թուրք-Ամերիկեան Կազմակերպութիւնների Միութեան» նախագահ Էլեմեն Պաղընի, իր թուրք հայրենակիցներին ուղղուած հետեւեալ կոչը, որը թուրքերէնից թարգմանաբար ներկայացնում ենք ընթերցողի ուշադրութեան:

Միդելի հայրենակիցներ  
Ստորեւ բերուած յօդուածը, որը ցաւով սրտի ձեզ դուր չի գալու, գրի է առել «New York Times» թերթի Ստամպուլի թղթակից՝ Ստեֆըն Քինգերը: Անհրաժեշտ է մեր ձայնը քարտեղացնենք՝ եւ մեր ընթերցողներին կողմից այս թերթին ուղարկենք հմարաւորին չափ շատ նա-

մակներ: Քանի մենք լուռ ու կրաւորակամ ենք մնում, դիմացինը անկացնում է իր գրպարտամբի չափը աւելի վստահութիւն է ձեռք բերում:

Միասնութիւնից ուժ է ծնւում:  
Էլեմեն Պաղըն  
Թուրք-Ամերիկեան  
Կազմակերպութիւնների  
Միութեան նախագահ

\*\*\*

Իսկ ով ասաց, որ լուռ ու կրաւորական է մնում:

Ամբողջ աշխարհին յայտնի է թէ թուրքական պատմագրութիւնը, պետական եւ քաղաքական գործիչները ինչպիսի հակահայկական քաղաքականութիւն են վարել եւ վարում են, հերքելով Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հայածանքներն ու կոտորածները Օսմանեան կայսրութիւնում:

Հայերի Յեղասպանութիւնը ուրանալու եւ ժխտելու համար միլիոններ են ծախսուել եւ ծախսուում են, կազմակերպուում են յաճախակի գիտա-ժողովներ, նկարահանուում են քաղմասերիանոց ժապաւեններ (թէկուզ յիշենք «Արիւն Պատին վրայ», «Վարագոյրի ետեւը» հեռուստատեսային ֆիլմերը): Կառուցուում են յուշարձաններ այսպէս ասած թուրք գոհերի յիշատակին (դեռ վերջերս բացումը կատարուեց Իգտիբի յուշարձանի):

Միթէ՞ դուք լուռ էք մնում, երբ այս կամ այն պետութիւնը, խորհրդարանը, նահանգը կամ քաղաքապետութիւնը բանաձեւ է ընդունում Հայերի Յեղասպանութեան ճանաչման մասին:

Միթէ՞ քիչ աղմուկ բարձրացաւ Մայիս 29, 1998 թ. Յրանսիայի Ազգային Ժողովի ընդունած «Յրանսիան հրատարակայնորէն ճանաչում է 1915 թ. Հայերի Յեղասպանութիւնը» բանաձեւի շուրջ, որպէսզի այն ծերակոյտի օրակարգի հարց չդառնայ:

Միեւնոյն ժամանակ հրատարակուում են կեղծիքներով լի բազմաթիւ գրքեր: Ահա այդ գրքերից մի քանի նմուշներ.

ՆՈՐ ՕՐ • ԸՄԲԱԹ, ՄԱՅԻՍ 27, 2000

1. Ինայեթուլա Ճեմալ Օզքայա, «Հայ ժողովուրդը եւ բուրբերիմ ստրկացնելու փորձերը», Ստամպուլ, 1971:

2. Վեյսել Էրօղլու, «Հայկական դաժանութիւնը», Ստամպուլ, 1973:

3. Էմիրճան Ապտուլ Ալի, Մեհմետ Էմին Կերկեր, «Մեծ Հայաստանի երազը եւ կարսից միջուկը Ղարաբաղ հայերի կատարած գաղանձութիւնները», Ստամպուլ, 1992:

4. Էրտալ Իլթեր, «Հայ եկեղեցիւմ եւ ահաբեկչութիւնը», Անգարա, 1996, եւ այլն:

Նշենք, որ այսպիսի ստապատիբ գրքերը յաճախ թարգմանուում են այլ լեզուներով, որպէսզի ապակողմնորոշուի նաեւ միջազգային հասարակական կարծիքը:

Եզրակացութիւն  
Իրօք որ «Միասնութիւնից ուժ է ծնւում», եթէ այն հիմնուած է արդարութեան եւ ճշմարտութեան հողի վրայ: Իսկ մեր պահանջատիրութիւնը արդար է եւ ճշմարիտ:

ՄԱՍԻՍ • ՄԱՅԻՍ 27, 2000

Նոր Հայաստան Օրաթերթ

ՄԱՅԻՍ 27, 2000

# Պարզաբանում

«ԱՍՊԱՐԷՋ», ՌԻՐԱԹ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1999

Մամուլից տեղեկացանք, որ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը 1915 թ. Հայերի Ցեղասպանությունը դատապարտելու կապակցությամբ նախագահութեան թեկնածուներին առաքելու է մէկ միլիոն բացիկներ:

«Թըրքիչ Ֆորում» թուրքական կազմակերպությունը որոշել է հակազդել այս միջոցառմանը եւ Ամերիկայում բնակուող թուրքերին յորդորել է իրենց նամակներում Հայերի Ցեղասպանությունը ժխտելու համար բերել հետեւեալ տեղեկություններ:-

«1919-1920 թթ. անգլիական բանակը գրաւելով Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք՝ Ստամբուլը, ձերբակալեց եւ Մալթա կղզի աքսորեց 140 թուրք գործիչներ: Այս 140 գործիչները մեղադրուած էին որպէս Հայերի Ցեղասպանութեան կազմակերպիչներ: Այնուհանդերձ անգլիական հետախուզական սպասարկությունները եւ ամերիկեան հիմնարկները երկարատեւ պրպտումներից յետոյ, Ցեղասպանութեան վերաբերող ոչ մի փաստ չգտան եւ Մալթայի հարցը աւարտուեց առանց ամբաստանությունների» («Ասպարէզ», Դեկտեմբերի 11, 1999, էջ 1):

Հենց սկզբից նշենք, որ թուրքերի կողմից բերուած այս հատուածում իրականությունը լրիւ

աղաւաղուած է եւ խեղաթիւրուած: Ուստի այն կարօտ է հետեւեալ պարզաբանումին:

1918 թ. Մուղղոսի գինազադարից անմիջապէս յետոյ, Ահմէտ Իզզէթ փաշայի գլխաւորութեամբ կազմուած նոր կառավարությունը որոշում կայացրեց՝ Օսմանեան կայսրութիւնը Առաջին Համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու եւ Հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին, ինչպէս նաեւ՝ «իթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներին:

Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների դատավարությունը սկսուած է 1919 թ. Ապրիլ 28ին Կ. Պոլսում եւ ընդհատումներով տեւում մինչեւ Յունիսի 26ը: Մայիս ամսին տեղի ունեցած 6 նիստերի ընթացքում հիմնականում հարցաքննութեան են ենթարկուած կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամները, մեծ վեղիր Սայիտ Հալիմ փաշան եւ մի քանի նախարարներ: Սակայն անբացատրելի պարագաներով, Մայիսի 28ին անգլիական հրամանատարութեան կողմից 77 հոգի բանտից աքսոր-

ուած են Մալթա կղզի եւ ընհատուած է դատաքննութիւնը: Այնուհանդերձ, Յունիս ամսին մեղադրական նոր ապացոյցների հիման վրայ շարունակուած է դատաքննությունը: Յունիսեան դատաքննությունն 7 նիստերում լւում են պետական պաշտօնատար անձանց՝ փոստի եւ հեռագրական նախարար՝ Հիւսէյն Հալիմ պէյի, սենատի նախագահ՝ Ռիֆաթ պէյի, նաեւ երկրի հոգեւոր առաջնորդներ՝ էսատ, Հայրի եւ Մուսա Քեազիմ էֆէնտիների դատաքննությունը:

Այս դատավարությունների մեղադրական եզրակացություններում բերուած փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայուած են, որ արեւմտահայութեան տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական ընդթ չեն կրել, այլ եղել են կանխամտածուած եւ իրականացուել են բացարձակապէս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յատուկ կենտրոնի հրահանգներով ու զաղտնի հրամաններով:

Եւ այդպէս, 1919 թ. Յունիսի 5ին, արձակուած դատավճռով, դատարանը մահուան վճիռ է կայացրել թալէաթի, էնվէրի, ձէմալի եւ Նազրմի նկատմամբ: Ծաւիտ պէյը, Մուստաֆա Շերեֆը եւ Մուսա Քեազիմը դատապարտուած են 15ակա տարի ժամկէտով աքսորի: Այլ դատավճիռներով մահուան դատապարտուեցին նաեւ Պէհաէտի Շաքիրը, ձէմալ Ազմին, Նայիլ պէյը, Քեմալ պէյը: Տարօրինակ է, որ վերոյիշեալ

դատավճռում մոռացութեան մատուցեցին դաշնակիցների հովանաւորութեամբ կախնատնից Մալթա կղզի աքսորուած յանցագործները: Այս փաստը ցոյց է տալիս, որ դաշնակիցները տատանողական դիրքորոշում են ունեցել Մալթայի թուրք յանցագործներին դատարանով պատժելու հարցում: Այս կապակցութեամբ Ֆրեզնոյում հրատարակուող «Մշակ» թերթը շատ տեղին գնահատական է տուել անգլիացիների այդ երկերեսանի արարքին. «Մալթայի մէջ այդ աքսորականները կերան, խմեցին, յղփացան եւ մէկ-մէկ գործիքներ դարձան Անգլիայի ձեռքին՝ անոր քաղաքական ու տնտեսական շահերը ապահովելու համար թուրքիոյ մէջ: Մալթան արդարութեան օճախը չհանդիսացաւ: Մալթան ամօթի եւ նախատինքի համագործակցութեամբ եղաւ միայն»: (Մէջբերումն արուած է Ճ. Կիրակոսեանի գրքից, տե՛ս «Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ» հ. 2, էջ 253):

Վերջացնելով կ'ուզէիք նշել նաեւ, որ վերոյիշեալ դատավարութեան արձանագրություններն ու որոշումները 1919-20 թուականներին շատ քիչ տպաքանակով հրատարակուեցին թուրքական պաշտօնական «Թաքվիմ-ի Վեքայի» (Իրադարձութիւնների Օրացոյց) պաշտօնաթերթի յաւելուածներում, որոնք առ այսօր զաղտնի են պահուած թուրք հասարակութիւնից:

Այնպէս որ, վերոյիշեալ «Թըրքիչ Ֆորում»ի կողմից բերուած հատուածը շինծու է եւ անիրաւացի:

# Գրատախտակ Դարձած Աղբիւր Յուշարձանը

(ՊՈՅԱՃԸ ՔԷՕՅԻ (1) ԵԿԵՂԵՑՈՒ ՄՕՏ

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Այսօր Թուրքիայի տարածքում գտնուող պատմական Հայաստանում օր-օրի վրայ փանդում եւ երկրի երեսից անհետանում են հայկական հնագոյն կրօնական կառոյցները, այդ թուրքական վանքերը, եկեղեցիները, մատուռներն ու սրբավայրերը:

Այս մասին Պաթման ֆաղափի բնակիչ Սալիհ Էրալը մի արտցաւ յօդուած էր գրել «Անտէր եկեղեցիները աւերուած են» խորագրով, որը լոյս էր տեսել Պոլսում հրատարակուող «Ակօս» շաբաթաթերթի թուրքերէն միջուկում (Օգոստոսի 10, 1998): Մեր կողմից կատարուած այդ յօդուածի թարգմանութիւնը լոյս տեսաւ Մայիս 12, 1999 թ. «Ասպարէզ» օրաթերթում:

Վերջերս «Ակօս» թերթի հաւաքածուն կրկին ուսումնասիրելիս, նկատեցիմք նոյն թէմային վերաբերող մի այլ տխուր պատմութիւն, որի թարգմանութիւնը նոյնպէս ներկայացնում ենք ընթերցողի ուշադրութեան (Տե՛ս «Ակօս» շաբաթաթերթ, Սեպտեմբերի 24, 1999, էջ 3, թուրքերէն միջուկը): Հեղինակն է՝ Արիս Նալը:

ՓՐՈՅ. Ա.Ի.ԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ

\* \* \*

Մեր պատմութեան էջերում ճեղքուածներ են առաջ գալիս: Պոյաճը Քէօյից անցնելիս, Ա. Երից Մանկանց եկեղեցուն կից ուշադրութիւնս գրաւեց մի աղբիւր-յուշարձան: Եկեղեցի այցելողներից ծարաւողները գալիս էին այս աղբիւրից ջուր խմելու. սակայն ի զուր... Տեղեկացանք, որ տարիներէ ի վեր այս եկեղեցու վրայ փողոցից քար չպրտողների պատճառով, ջարդուել է նաեւ աղբիւրի ծորակը:

Այս բոլորից յետոյ եկեղեցու ետեւի դրան վրայ զետեղուած մի ցուցատախտակի վրայ գրուած է.

«Երկրում խաղաղութիւն, աշխարհում խաղաղութիւն» (2):

Առաջին հայեացքից մոլախոտով պարուրուած աղբիւր-յուշարձանի վրայ նկատուում է կոտորուած եւ ցամաքած ծորակը: Վայրի մոլախոտերը մաքրելուց յետոյ, մի անգամ եւս մատնուում ենք չփոթութեան:

Աղբիւր-յուշարձանի ճակատում կայ հայերէն մի գրութիւն: Ներքեւում՝ փշովի ներկով գրուած են սպորտային լօզունգներ, սիրեցեալին նուիրուած տողեր, ընտրութեան ցուցանակներ...

Պարզուում է, որ այս աղբիւր-յուշարձանը սովորաբար օգտագործուում է որպէս գրատախ-


տակ: Մինչդեռ, եկեղեցին կառուցող Միսաք Ամիրան (3) մարմարեայ այս աղբիւր-յուշարձանը նուիրել է Հօր յիշատակին: Այնինչ, այսօր նրա ոսկորները մղկատանքի մէջ են:

Նկատի ունենալով, որ յաջորդ մեր այցելութեան ընթացքում այս աղբիւր-յուշարձանն էլ կարող է այլեւ իր տեղում չլինել... սեղմում են դրան զանգը եւ եկեղեցու ծառայողների ուշադրութիւնը հրաւիրում աղբիւր-յուշարձանի այդ վիճակի վրայ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- Գտնուում է Կ. Պոլսում: Ներկայումս Վասփորի թաղամասերից մէկն է:
- 2.- Մուստաֆա Քեմալ Աթաթիւրքի խօսքերն են:
- 3.- Արաբերէն ամիր - իշխան քառից: Պատուանուն, որը տրուում էր Օսմանեան կայսրութեան մէջ հայազգի մեծահարուստ, ազդեցիկ եւ պաշտօնատար անձնաւորութիւններին:

«ԱՍՊԱՐԷՋ», ՀԻՆԳՇԱՐԹԻ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1999



Çeşme olmuş kara tahta

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԱՊՐԻԼ 1999 Թ. - ԱՊՐԻԼ 2000 Թ.

Լրացաւ Հայոց Մեծ Եղեռնի 85-րդ տարելիցը: 85 տարի առաջ տեղի ունեցաւ 20-րդ դարի առաջին ահաւոր Յեղասպանութիւնը: Հետեւանք եղաւ այն, որ հայ ժողովուրդը գրկուեց իր բնօրրանից Արեւմտեան Հայաստանից եւ նիւթական հսկայական կորստի հետ ունեցաւ մէկուկէս միլիոնից աւելի անմեղ զոհեր:

Անցած տարիները ընթացքում աշխարհի մի շարք երկրների կառավարութիւններ ու խորհրդարաններ ճանաչել եւ դատապարտել են հայերի Յեղասպանութիւնը, սակայն ցաւով պիտի նշենք, որ այն դեռեւս չի դատապարտուել միջազգային չափանիշով: Իսկ Թուրքիան առ այսօր ոչ միայն չի ճանաչել հայերի նկատմամբ կատարուած Յեղասպանութիւնը, այլ աշխատում է պաշտօնապէս հերքել եւ ուրանալ Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները:

Բոլոր դէպքերում, պայքարը շարունակուում է եւ պիտի շարունակուի մինչեւ հայ ժողովրդի նկատմամբ կիրառուած բարբարոսային Յեղասպանութիւնը դատապարտուի միջազգային չափանիշով եւ արդար հատուցում ստանայ նրա հողային պահանջատիրութիւնը:

Վերջերս շատ իփսուեց եւ քննարկման նիւթ դարձաւ 1998 թ. Մայիսի 29-ի Ֆրանսայի խորհրդարանում ընդունուած «Ֆրանսիան հրապարակախօրէն ճանաչում է 1915 թ. հայերի Յեղասպանութիւնը» բանաձեւի վաւերացման հարցը: Բնա-

կանաբար Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած որոշումը պատմական իրողութեան ու արդարութեան վրայ հիմնուած վճիռ էր, սակայն Թուրքիայի կառավարութեան ճնշումների ազդեցութեան տակ Ֆրանսիայի կառավարութիւնը խուսափեց Մերակոյտի օրակարգի քննարկման դնել Ազգային ժողովի ընդունած վերոյիշեալ բանաձեւը: Այս բոլորով հանդերձ մենք լիայոյս ենք, որ ապագային այն անպայման օրակարգի հարց կը դառնայ եւ Ֆրանսիայի կառավարութիւնը կը դատապարտի մարդկութեան դէմ գործադրուած այդ ահաւոր ոճիրը:

Անցած մէկ տարուայ ընթացքում նոր յաջողութիւններ արձանագրուեցին հայերի Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման խնդրում:

Մարտի 6-ին Հռոմի քաղաքային խորհուրդը միաձայն որոշում ընդունեց 1915 թ. հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին, իր համերաշխութիւնը յարմարելով հայ ժողովրդին:

ԱՄՆ-ի Վիրճինիայի, Գալիֆորնիայի նահանգային խորհուրդները եւս վաւերացրին 1915-1923 թթ. հայերի Յեղասպանութեան յիշատակութեան վերաբերող բանաձեւը: Մարտի 29-ին Շուէտիայի քաղաքական ղեկավարութիւնը տնտեսական շահերից առ աւելի մեծ դասելով մարդկային իրաւունքները, վաւերացրեց հայերի Յեղասպանութեան ճանաչման վերաբերող բանաձեւը: Անկասկած Շուէտիայի այս արդարացի քայլը պէտք է, որ վարակի Սկանտինաւեան միւս երկրներին

եւս: Աւստրիայի խորհրդարանը եւս գործնական քայլերի է դիմել ճանաչելու հայերի Յեղասպանութիւնը:

Գոհունակութեամբ պիտի նշենք, որ իրաւաբան վարդգէս Եղիայեան նախաձեռնութեամբ ստեղծուած յանձնախումբը գործնական քայլեր է կատարում New York Life ապահովագրական ընկերութեան դէմ դատական հայց ներկայացնելու ուղղութեամբ, որպէսզի հատուցում ստանան ապահովագրական հաշիւ ունեցող վերապրող հայերը:

Ստորեւ բերուած ժամանակագրութիւնը որոշակի գաղափար եւ պատկերացում է տալիս մէկ տարուայ ընթացքում, Ապրիլ 1999 թ. - Ապրիլ 2000 թ. ամբողջ աշխարհում հայերի Յեղասպանութեան շուրջ ծաւալուած աշխատանքների, իրադարձութիւնների եւ ձեռնարկների մասին:

\*\*\*

1999 Թ. ԱՊՐԻԼ 24 - Ֆրանսիայի Լիոն քաղաքից սկսուեց Հայոց Մեծ Եղեռնին նուիրուած ահագանգի մեծ քայլարշաւը, որն աւարտուեց Մայիսի 11-ին Փարիզի Ալֆորվիլի շրջանում: Ժանապարհին քայլարշաւին միացան հարիւրաւոր հայեր եւ ֆրանսացիներ:

Մասնակիցներին դիմաորեցին քաղաքապետ Ռընէ Ռուքէն եւ այլ բարձրաստիճան պաշտօնատար անձիք: Այնուհետեւ քայլարշաւի մասնակիցները հոծ բազմութեամբ ծաղկեպսակ զետեղեցին «Աշտարակ» հրապարակում գտնուող խաչքարին:

ՄԱՅԻՍ 12 - Հայաստանում գտնուող Յունաստանի նախագահ՝ Կոստանտինոս Ստեֆանոպոլոսը ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի զոհերի յուշակոթոյին:

ՄԱՅԻՍ 19 - Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի յուշամատուցի մօտ առաջին անգամ պաշտօնապէս նշուեց Պոնտոսի (Սեւ ծովի հարաւային ծովեզրեայ մասը) կէս միլիոն Յոյների Յեղասպանութեան օրը, մասնակցութեամբ Հայաստանի յոյն համայնքի հայու թեան եւ Հայաստան-Յունաստան Ընկերութեան ներկայացուցչի (յոյների կոտորածը սկսուել էր 1916 թ. Մայիսի 19-ին):

ՅՈՒՆԻՍ 5 - Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի քաղաքապետարանի առջեւ բացուեց հայերի Յեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած խաչքար-յուշարձան:

ՅՈՒՆԻՍ 29 - Գալիֆորնիայի նահանգապետ Կրէյ Տէյվիսը հաստատեց 1999-2000 տարեշրջանի ամալարկը, ուր ընդգրկուած է նաեւ հայերի Յեղասպանութեան նուիրուած վաւերագրական շարժապատկերի պատրաստութեան (463,785 տոլար) եւ Յեղասպանութեան դատաւանդման ծրագիրը արդիականացնելու (99,000 տոլար) առաջարկները:

ՅՈՒՆԻՍ 16 - ԱՄՆ-ի նախագահութեան հանրապետական թեկնածու էլիզաբէթ Տոլ լայտարարեց, որ «Հայերը այս դարասկզբի Յեղասպանութեան զոհերն են»:

ՅՈՒՆԻՍ 20 - Պաշտօնական այցով Երեւանում գտնուող Ֆրանսիայի Մերակոյտի նախագահ՝ Քրիսթիան Փոնսըլէնը, իր պատուիրակութեամբ այցելեց եւ ծաղկեպ-

սակ դրեց Միծեռնակաբերդի Մեծ եղեռնի յուշահամալիրին:

**ՕԳՈՍՏՈՍ 20 - Գալիֆորնիայի նահանգային Մերակուտական՝ Ատամ Շիֆը,** յատուկ նամակով իր գորակցութիւնը յայտնեց «Հայկական Ֆիլմ Հաստատութեան», որպէսզի պատրաստուի հայերի Յեղասպանութեան վերաբերող վաւերագրական շարժանկար:

**Սեղծարարներ** - Գերմանիայում բնակուող 11.247 թուրքերի ստորագրութեամբ խնդրագիր ներկայացուեց թուրքիայի Ազգային Մեծ ժողովին, որպէսզի ճանաչուի հայերի Յեղասպանութիւնը: Խնդրագրի պատճենները առաքուեցին նաև աշխարհի աւելի քան 20 երկրների կառավարութիւններին և այլ միջազգային կազմակերպութիւններին:

**Սեղծարարներ 14 - Երեւանի ժուռնալիստի Տանը տեղի ունեցաւ հանդիպում թուրք հասարակական գործիչ-լրագրողներ Ռազուլ Զաւրաբուլուի և նրա տիկնոջ Ալշէ Նուրիի հետ,** Ֆրանց վերֆէլի «Մուսա Լեռան 40 օրերը» վէպի թուրքերէն թարգմանելու և հրատարակելու առթիւ:

**ՆՈՅՆՄԱՐԵՆ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գտնուող «Շարժում ընդդէմ Յեղասպանութեան» կազմակերպութեան նախագահ՝ Ալի էրթեմը 1915 թ. հայերի կրած վնասի համար 300 տոլար նուիրեց Միծեռնակաբերդի Յեղասպանութեան թանգարանին:** Նա պարտաւորուեց մինչև իր կեանքի վերջ ամսական 25 տոլար յատկացնել թանգարանին, կոչ անելով նաև, որ իր հայրենակիցները հետեւեն իր օրինակին:

**ՆՈՅՆՄԱՐԵՆ 13-14 - Լոս Անճելըսի համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ տեղի ունեցաւ միջազգային 6-րդ դիտաժողովը:** Զեկուցումները նուիրուած էին Պատմական Հայաստանի Տիգրանակերտ-Տիարպէջի և Եթեախա (Ուրֆա) շրջաններին: Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի հայ ժողովրդի պատմութեան ամբիոնի վարիչ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանը:

**ՆՈՅՆՄԱՐԵՆ 19 - Ստամպուլում տեղի ունեցած ԵԱՀԿ-ի գերատիճանին Հայաստանի նախագահ Ռոբերդ Քոչարեանը,** իր ելույթի ընթացքում մատնանշեց. «Մենք չենք կարող մոռանալ մեր ժողովրդի պատմութեան ողբերգական էջերը և Յեղասպանութեան նրա կրած ցաւը»:

**ՆՈՅՆՄԱՐԵՆ 22 - Հայերի Յեղասպանութիւնից վերապրող 84 ամեայ Մարթին Մարութեանը դատական հայց ներկայացրեց New York Life անվահովադրական ընկերութեան դէմ:** պահանջելով 3 միլիառ տոլարի վնասի հատուցում տալ այն հայերին, որոնք որպէս Օսմանեան կայսրութեան հպատակ, ապահովագրական հաշիւ ունենալով այդ ընկերութեան մէջ զոհ էին գնացել Երիտ թուրքերի կազմակերպած Յեղասպանութեան: Մարթին Մարութեանի իրաւաբանն է վարդգէս Եղիայեանը: Հետագայում հայերի Յեղասպանութեան այս դատին եղեռնից վերապրող հայտնորների թիւը աստիճանաբար չստացաւ:

**ՆՈՅՆՄԱՐԵՆ 24 - Ալեքսանտրեթ քաղաքի մօտակայքում գտնուող**

**Քրըքիլանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին բռնազրաւուեց տեղի թրքական իշխանութիւնների կողմից:**

**ՆՈՅՆՄԱՐԵՆ 29 - ԱՄՆ-ի Նախագահական Դեմոկրատ թեկնածու Պիլ Պրէտլի,** Նիւ Հեմփշըրի Տերի քաղաքում մի յատարարութեամբ կոչ ուղղեց Թուրքիային, որ այն դադարի ուրանալ Հայերի Յեղասպանութիւնը: Նա պնդեց, որ Թուրքիայի ներկայ կառավարութիւնը պէտք է ընդունի 1915-23 թթ. հայերի նկատմամբ գործադրուած տեղահանութիւններն ու ջարդերը:

**Դեկտեմբեր 1 - «Հայոց Յեղասպանութեան այժմէականութիւնը»** խորագրով լրյա տեսաւ 1998 թ. Ապրիլին Հայ Դատի պաշտպանութեան յանձնարարի կողմից Ֆրանսիայի Սորպոնի համալսարանում կազմակերպուած հայերի Յեղասպանութեան նուիրուած միջազգային գիտաժողովի նիւթերը:

**Դեկտեմբեր 1 - Պուլկարիայի հանրապետութեան նախագահ՝ Փեթր Սթոյանովը** Երեւան կատարած իր պաշտօնական այցելութեան ընթացքում, ծաղկեպսակ դրեց Միծեռնակաբերդի Մեծ եղեռնի յուշարձանին: Իսկ Յեղասպանութեան թանգարանի մատենանում արձանագրեց. «Խնարհում եմ հայ ժողովրդի տառապանքի և հերոսութեան առջև, որ հայ ազգի պատմութեան հիմքն են կազմել: Հպարտ եմ, որ իմ ժողովուրդը ապաստան տուեց և նեցուկ կանգնեց հայրենիքից վտարուած հայերին, և որ մեծագոյն պուլկար բանաստեղծը հայ ժողովրդի մասին գրեց՝ «Ընդմիշտ հերոս տանջահար ժողովուրդ»:

**Դեկտեմբեր 9 - Հայկական հարցերի հաստատութեան նախագահութիւնը նախաձեռնեց կազմել Մեծ եղեռնի զոհերի ԱՆՈՒԱՆԱ-ՅԱՆԿԸ, ինչպէս նաև հայութեան կրած վնասների ցուցակը:** Հաստատութիւնը դիմեց Հայաստանի և Սփիւռքի համայն հայութեան, որպէսզի զոհերի անունները և նրանց լքեալ գոյքերի ստացականների պատճենները ուղարկուեն հետեւեալ հասցէներով.

Հայաստանից և Աղջի երկրներից ուղարկել՝

Հայկական Հարցերի Հաստատութիւն

Հանրապետութեան փողոց թիւ 30

Երեւան 375019

Սփիւռքից ուղարկել՝  
Institut fur Armenische Fragen  
c.v.

Steinsdorf Str. No. 20  
80538 Munchen- Germany

**2000 թ. ՅՈՒՆՈՒԱՐ 28 - Սթոքհոլմում տեղի ունեցաւ Յեղասպանութեան վերաբերող միջազգային համաժողով 48 երկրների մասնակցութեամբ:** Համաժողովում չքննարկուեց 1915 թ. հայերի Յեղասպանութիւնը: Հայաստանի պատուիրակութեան հրաւեր չուղարկելու պատճառով եղան բազմաթիւ բողոքներ: Յատկանշական էր, որ մի շարք օտարազգի ակնաուզ գործիչներ, իրենց ելույթներում կանգ առան և լիչեցրին հայերի Յեղասպանութեան մասին:

**ՓեՏՐՈՒԱՐ 9 - Վիրճինիայի նահանգի (ԱՄՆ) խորհրդարանը**

միաձայն որդեկրեց մի բանաձև, 2000 թ. Ապրիլ 24-ը լայտարարելով « 1915-1923 թթ. հայերի Յեղասպանութեան յիշատակութեան օր »:

ՓԵՏՐՈՒՄ 16 - ԱՄՆ-ի Գոնկ-րէսականներ ձորճ Ռադանովիչը, Պրէթ Շըրմընը եւ Սամուէլ Կէլզենսընը, Գոնկրէսում գումարուած նիստի ընթացքում պետական քարտուղար Մէտլին Օլպրայթին հարց լարուցեցին, որպէսզի ԱՄՆ-ը ճանաչի հայերի Յեղասպանութիւնը:

ՓԵՏՐՈՒՄ 20 - Ազգային հերոս Զորավար Անդրանիկի աճիւնը Փարիզի Փեր-լաշէզ գերեզմանից տեղափոխուեց Հայաստան եւ հողին յանձնուեց Երեւանի Եռաբլուրի բարձունքում:

ՓԵՏՐՈՒՄ 22 - Ֆրանսիայի Ծերակոյտը որոշում կայացրեց հայերի Յեղասպանութեան վերաբերող 1998 թ. Մալխ 29-ի բանաձևը օրակարգի հարց դրարձնել:

ՄԱՐՏ 2 - Ֆրանսիական մարդկային իրաւունքների լիկան դատաւարտեց Ֆրանսիայի Ծերակոյտի որոշումը, նկատի ունենալով, որ թուրքական սպառնալիքի ազդեցութեան տակ հայերի Յեղասպանութեան վերաբերող բանաձևը դուրս մնաց օրակարգից:

ՄԱՐՏ 6 - Հոռոմի քաղաքային խորհուրդը միաձայն որոշում ընդունեց 1915 թ. հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատաւարտման մասին, իր համերաշխութիւնն յայտնելով հայ ժողովրդին պատմական ճշմարտութիւն ընդունելու եւ իր անձեռնմխելի իրաւունքների պաշտպանութեան համար մղած պայքարում:

ՄԱՐՏ 9 - Հոռոմի քաղաքային խորհուրդը Իտալիայի կառավարութիւնից պահանջեց դէմ քուէար-

կել Թուրքիայի Եւրոպական Միութեան անդամացութեան, մինչեւ որ վերջինը ճանաչի եւ ընդունի Հայոց Յեղասպանութիւնը:

ՄԱՐՏ 9 - Վերճիւրիայի նահանգի խորհրդարանը վաւերացրեց 1915-1923 թթ. հայերի Յեղասպանութեան յիշատակութեան վերաբերող բանաձևը:

ՄԱՐՏ 11 - Փարիզում մտաւորապէս 10,000 հայեր (այդ թւում՝ լոյներ, քիւրտեր, կիւրառոյններ) բողոքի ցոյց կատարեցին Ֆրանսիայի Ծերակոյտի շէնքի առջեւ, պահանջելով օրակարգի մէջ մտցնել Հայոց Յեղասպանութեան բանաձևը:

ՄԱՐՏ 13 - Սաքրամենթոյի Ծերակոյտի անդամ, Ֆրեզնոյի հանրապետական Չարլզ Փուչիկեանը մի բանաձև առաջարկեց, որպէսզի 2000 թ. Ապրիլ 24-ը Գալիֆորնիայում լայտարարուի « 1915-1923-ի Հայկական Յեղասպանութեան ճանաչման օր »:

ՄԱՐՏ 16 - Աւստրիայի խորհրդարանի «Մարդկային Իրաւունքների Յանձնաժողովը», քննարկելով հայերի Յեղասպանութեան ճանաչման վերաբերող հարցը, որոշեց դիմել խորհրդարանին, որպէսզի 85-րդ տարեկիցի առթիւ պաշտօնապէս ճանաչուի հայերի Յեղասպանութիւնը:

ՄԱՐՏ 23 - Լրացաւ Շուշիի հայութեան Չարդերի 80 ամեակը: 1920 թ. թուրք-ազերի ուժերի լարձակման հետեւանքով աւերուեցին եւ հրկիզուեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերը: 20 հազարից աւելի անմեղ հայեր ենթարկուեցին կոտորածի:

ՄԱՐՏ 29 - Շուշիտիայի խորհրդարանը ճանաչեց եւ վաւերացրեց հայերի Յեղասպանութեան բանաձևը:

ՄԱՐՏ 29 - Հայաստանի հրէական համայնքը Հայոց Յեղասպանութեան 85-ամեակի առթիւ կոչուողէջ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի Ծերակոյտներին, իսրայէլի խորհրդարանին եւ հրէական բոլոր կազմակերպութիւններին, որպէսզի պաշտպանեն հայ ժողովրդի շահերը եւ ճանաչեն Հայոց Յեղասպանութիւնը:

ՄԱՐՏ 31 - Հայկական համագումարը լայտարարեց, որ Ուաշինկթոնի կենտրոնական մասում գնուած է պատմական նշանակութիւն ունեցող մի շէնք 7.25 միլիոն արժողութեամբ, որը վերածուելու է հայերի Յեղասպանութեան թանգարանի: Բարեբարներն են Հայկական Ազգային Հիմնարկի անդամ Անուշ Մաթէոսեանը եւ Համագումարի ցկեանա խնամակալներից՝ Կէրի Գաֆէսճեանը: Թանգարանի բացումը ծրագրուած է կատարել 2002 . Ապրիլ 24-ին:

ԱՊՐԻԼ - Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի Ս. Կատարին եկեղեցում, «Շարժում Ընդդէմ Յեղասպանութեան» կազմակերպութեան նախաձեռնութեամբ բացուեց 1915 թ. Հայոց Յեղասպանութեան վերաբերող լուսանկարների եւ փաստաթղթերի ցուցահանդէսը:

ԱՊՐԻԼ 3 - Իտալիայի խորհրդարանը օրակարգի հարց դարձրեց հայերի Յեղասպանութեան ճանաչման հարցը, որպէսզի հետագայ նիստերից մէկում այն դրուի քուէարկութեան:

ԱՊՐԻԼ 4 - Ախալքալաք այցելեց Վրաստանի նախագահ՝ Էդուարդ Շեվերճեանին: Զաւախքահայերի կազմակերպած ցոյցի ըն-

թացքում պահանջուեց, որպէսզի Վրաստանի խորհրդարանը ճանաչի հայերի Յեղասպանութիւնը եւ Զաւախքն էլ դառնայ ինքնուրոյն մարդ Վրաստանի մէջ:


ԱՊՐԻԼ 6 - Գալիֆորնիայի նահանգային Ծերակոյտը (33 թեր եւ ոչ մէկ դէմ քուէներով) վաւերացուց 1915-1923 թ. հայերի Յեղասպանութեան վերաբերող բանաձևը, Ապրիլ 24-ը հռչակելով հայերի ոգեկոչման օր Գալիֆորնիայում:

ԱՊՐԻԼ 8 - Տեղի ունեցաւ միջազգային գիտաժողովը Ս.Շ.Լ.Ա. ի համալսարանի Տիքսոն սրահի մէջ, կազմակերպութեամբ հայ ժողովրդի պատմութեան ամբիոնի վարիչ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի, « Հայկական Յեղասպանութիւնը եւ պատմական յիշողութիւնը՝ 21-րդ դարի մարտահրաշխիքը » թեմայով: Ելոյթ ունեցող 14 մասնակիցները անդրադարձան Յեղասպանութեան պատմական, քաղաքական, իրաւական, դատական, կրթական, գրական եւ հոգեբանական հարցերին:

ԱՊՐԻԼ 12- ԱՄՆ Ներկայացուցիչները Տան լատուկ նիստի ընթացքում, 43 Գոնկրէսականներ դատաւարտելով Թուրքիայի ուրացման քաղաքականութիւնը, պահանջեցին ճանաչել հայերի Յեղասպանութեան (H.Res. 398) բանաձևը:

ԱՊՐԻԼ 18 - ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի մեծ հոսանքի տեղի ունեցաւ եռօրեայ գիտաժողով նուիրուած Մեծ Եղեռնի 85-րդ տարեկիցին:

ՍԱՍԻՍ



Հայոց ցեղասպանության թանգարանը վաշինգտոնում

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Աշխարհում թյունը հայերի ցեղասպանության մասին... էջ 1
2. Հայերի ցեղասպանությունը վավերագրական փաստաթղթերում... 6
3. Հայերի ցեղասպանությունը և երիտթուրքերի դատավարությունը (80 ամյակի առթիվ) : ..... 27
4. Հայ որբերը Մեծ եղեռնի, Հեղինակ Լիպարիտ Ազատյան, գրախոսեց՝ Ավետիս Փափազյան..... 31
5. Լիպարիտ Ազատյանի՝ Հայ որբերը Մեծ եղեռնի Բ., գրքի շնորհանդեսը..... 35
6. Մի հրատապ և ուշագրավ դասախոսության մասին..... 44
7. Վաստակաշատ արևելագետը (Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 70 ամյակի առթիվ) ..... 46
8. Փրոֆ. Գեվորգ Խրլոպյանի զիտա-մանկավարժական գործունեության 50 ամյակի առթիվ ..... 50
9. Փրոֆ. Գեվորգ Խրլոպյանի Հայաստանն այսօր խորագրով դասախոսությունը ..... 56
10. Գերմանոհի մեծ հայասերը՝ ԻԼԶԵ ՖԻՄԱՆ ..... 59
11. «Մենք արդարություն չենք մոռար. Արդարության համար կը պայքարինք» ..... 65
12. «Միասնությունից ուժ է ծնվում» եթե այն հիմնված է արդարության հողի վրա ..... 68
13. Պարզաբանում ..... 70
14. Գրատախտակ դարձած աղբյուրը հուշարձանը ..... 72
15. Ժամանակագրություն, Ապրիլ 1999թ. - Ապրիլ 2000թ.,... 74